

16741

910.4(47.925)

2-42

I 3.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՂԱԿԱՆ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆՈՒԲԱՆ-ԴՐԱՊԱՐԱՆԻՆ

ԱՂԷՔԱՆՈՐ ՄԵԼԻՔ ԱԶԱՐԵԱՆԻՑ

Իր. Գրքեր և ձեռք-հղթողներ

ԻՍՏԻՆԻ ՅԵՐԱՌԹԻՒՆԵՆՆԵՐ

1894 թ. յուլիսի 20
ստորագր.

910.4(47.925)

Հ-42

սե

ՆԵՐՍԻՍԵԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԻ

ԱՌԱՋԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ

ՃԱՆԱԳԱՐ ՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

ՅԱԻԵԼՈՒԱԾՈՎ

(
1004
18406
)



Տպ. Մ. Շարաձէ. || Կիւ. Մ. Շարաձէ.
1894

38683uk.

ՅԱՌԱԶԱԲԱՆ



Дозволено цензур. Тифлисъ, 7-го Мая 1894 г.

Եւանդական միջոցին,
Եւրոպայում, մասնակցե-
լով պրօֆ. Շտոյի եւ ա-
պա պրօֆ. Ռայնի կազ-
մակերպած դպրոցական
ճանապարհորդութիւննե-
րին եւ անձամբ տեսնե-
լով ու զգալով այդ ճա-
նապարհորդութիւնների տուած օգուտներն
ու պատանեկական սրտերի վրայ ունեցած
խորին տպաւորութիւնը, յաճախ առանձնա-
նում էի ծառախիտ անտառների թաւուտնե-
րում, կապտագոյն ու վճիտ լճակի վրայ լո-
ղացող մակոյկի մէջ, կամ կանաչազարդ
բլուրի զազաթի վրայ կանգնած հայեացքս

2004

7 21941-60

ծագում էի գեղանկար հովիտների ու ծաղկազարդ դաշտերի վրայ եւ մտաբերելով հայրենեացս հողն ու ջուրը, սարն եւ դաշտը, անտառն ու այգին, շենն եւ ւաւերակը, անցեալն ու ներկան եւ հառաչելով քացազանչում: արդեօք կլինի՞ մի օր, որ ես էլ հայ պատանիներով շրջապատուած համբուրեմ՝ այդ սրբազան վայրերի հողը, տեսնեմ՝ հայ սաներիս զգացմունքով լի արտայայտութիւն ունեցող եւ գոհունակ դէմքերը...

Այս ցանկութիւնն այնչափ տպաւորութիւն էր արել մտքիս վրայ, որ ցերեկը ճանապարհորդելով գերմանական հողի վրայ, գիշերներն յաճախ ես ճանապարհորդում էի մեր երկրում: Մերթ Անույ ւաւերակներն էին ինձ թախիժ պատճառում, մերթ սուրբ Էջմիածինը ոգեւորուս, մերթ անցեալի փառքից զրկուած, անշուքացած ու ւաւերակ վանքերն էին ներկայանում, մերթ ծաղկաւէտ, անուշաքոյր ու երփներանգ հովիտների միջով կարկաշահոս սլացող գետերի ու վտակների խոխոջիւնն էր արթնացնում ինձ...

Անցան տարիներ. վերադարձայ հայրենիք եւ ստանձնեցի սիրածս պաշտօնը—ուսուցչութիւն—կրկին նորոգուեցան իմ մէջ դպրոցական ճանապարհորդութեան տպաւոր-

րութիւնները. մեր երկրի համար նոր էր այդ գաղափարը. պէտք էր խնդիրն արծարծել մամուլի միջոցով եւ ես օգտուելով «Արծազանք» շաբաթաթերթի սիրալիք պատրաստակամութիւնից, մի շարք յօդուածներ նուիրեցի դպրոց. ճանապարհորդութեան տեսութեանը՝ «Դաստիարակութեան միջոցներից մէկը» ընդհանուր վերնագրով: Ապա նոյն թերթի էջերում նկարագրեցի մանրամասնաբար Գերմանիայում կատարած մեր մի դպրոց. ճանապ. ամբողջ ընթացքը՝ «Իմ յիշատակարանից» վերտառութեամբ:

Եւ որքան ինձ յայտնի է, ահա՛ այդ յօդուածներն առիթ եղան, որ յաջորդ տարին Ներսիսեան դպրանոցի Մեծ. հոգաբարձութիւնից առաջարկութիւն ստացայ ստանձնել դպրանոցի սաների դպրոց. ճանապարհորդութեան առաջնորդի պաշտօնը եւ ծրագիր ներկայացնել:

Տարիներով փայփայած իղծս կատարուեցաւ:

Այնուհետեւ երկու տարի միմեանց յետեւից տեղի ունեցան Ներսիսեան դպրանոցի սաների դպրոց. ճանապ. եւ հետեւանքները գերազանցեցին մեր սպասելիքին. սաները վերադարձան առատ պաշարով հո-

գաքարձուծիւնը զոհ մնաց. գաւառական հասարակութեան մէջ հետաքրքրութիւն շարժուեց. մամուլը հետեւում էր ճանապարհորդութեան, տեղեկութիւններ հաղորդում եւ առաջնորդող յօդուածներով խրախուսում գործը *):

*) Աւելորդ չե՛ք համարում յառաջ բերել այստեղ նաեւ հայ մամուլի՝ այդ խնդրին նուիրած յօդուածներից մի երկուսը:

Կ Ի Թ Ա Կ Ա Ն Մ Ի Զ Ո Յ

«Մի վերին աստիճանի համակրելի և նպատակայարմար կրթական միջոց պէտք է համարել անշուշտ դպրոցական ճանապարհորդութիւնների գործը, որի նախաձեռնութիւնը Կովկասում պատկանում է Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեան: Ամառնային արձակուրդներին աշակերտները մի յատուկ ուսուցչի առաջնորդութեամբ, որ ղեկավարում է նոցա բոլոր պարապմունքները, ճանապարհորդում են մեր երկրի զանազան մասերում, ուսումնասիրելով իրենց յաճախած վայրերի պատմութիւնը, հաւաքելով ժողովրդագրական նիւթեր՝ հէքեթներ, առածներ, աւանդութիւններ, ծանօթանալով երկրի բուսաբանութեան հետ և այլն: Այս ուղևորութիւնների միջոցին, որ Ներսիսեան դպրանոցի սաները կատարել են ահա երկրորդ անգամ ամենամեծ յաջողութեամբ, գլխաւոր ուշադրութիւնը դարձրած

Վերջապէս, եւ որ գլխաւորն է, ունեցանք հետեւողներ. անցեալ տարի Գան-

է ի հարկէ հայոց ազգի կրօնական յիշատակարանների, քրիստոնէական տաճարների վրայ: Բացի այս, ճանապարհորդող աշակերտները մասնակցում են այն գիւղերի եկեղեցիների ժամասացութեան, ուր նոցա եղած ժամանակը պաշտօն է կատարվում: Ինքն ըստ ինքեան հասկանալի է որ աշակերտների այսպիսի համակեցութիւնը ժողովրդի հետ կրօնական հոգի վրայ, այսպիսի տիրացում իւրն անհաճելի պէտք է լինի այն մտաւոր ծառայորիայի (valetaille) համար, որոնք հայոց մէջ միմիայն գոյութիւն ունեցող «երիտասարդներ» դասակարգին են պատկանում և որ մեծաւ մասամբ այնպիսի անձնաւորութիւններից են բաղկացած, որոնք վաղուց ներկում են մազերը և մինչև իսկ զանազան յօբելեաններ են տօնել:

Այս դպրոցական ճանապարհորդութիւնների յաջողութիւնը շատ մեծ է եղել: Աշակերտները Ռուսական Հայաստանի տաճարների, եկեղեցիների և զանազան աւերակաց նկարների մի այնպիսի գեղեցիկ ժողովածու են կազմել, որ կարող է զարգարել ամէն մի գիտնական հրատարակութիւն, իսկ ինչ կը վերաբերի նոցա կազմած նկարազարդութիւններին, արձանագրութեանց ընթօրինակութիւններին, հաւաքած ժողովրդագրական նիւթերին, այս բոլորը իւր ճոխութեան և գիտնական

ծակի ծխական ղալոցներից մէկի ընթացաւարտ աշակերտները՝ ուսուցիչ պ. Ն. Դերզիբաշեանի առաջնուղովթեամբ երկու շա-

նշանակութեան շնորհիւ անկասկած արժանի կը դատուի տպագրութեան:

Բայց 'ի հարկէ ամենակարեւոր արդիւնքը — այն բարի ազդեցութիւնն է, որ այսպիսի ճանապարհորդութիւններն ունեցել են աշակերտների բարոյական աշխարհայեցողութեան կազմելու վրայ, որոնք այդ միջոցին ամբողջ կեանքի համար ահագին նշանակութիւն ունեցող տպաւորութիւնների պաշար են ստացել: Բնութեան հրաշալի վայրերում նուիրական կերտուածների հովանիի տակ, որոնք իրենց լուսութեամբ խորին հրնութեան պերճախօս վկաներ են, ամենապարզ խելքն իսկ անձնատուր է լինում անհունութեան գաղափարի մեծութեան, ամենաթախծալի սիրտն անգամ ազնուանում է այնպիսի յուզմունքներով, որ առաջ են գալիս ակամայ այսպիսի դրութեան մէջ:

Կարելի է իրաւամբ յուսալ, որ աշակերտներն այսպիսի մի դպրոցի բովից անցնելով, իրենց խելքի առողջութեամբ մեծապէս կ'տարբերուին այն թուրքականներից, որոնցով այնպէս եռում է մեր հայկական աշխարհը:...

(Իշխ. Կ. Բէհթուրեան)

Առաջնորդող „Արձագանքի“ 1892 թ. № 133.

բաթ ճանապարհորդեցին մեր ծրագրած սիստեմով:

ԱՄԱՌՆԱՅԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔՆԵՐ:

Ա.

«Ներսիսեան Հոգեւոր Դպրանոցի որդեգիրներէից մեծերին այս ամառ Դպրանոցի վարչութիւնն ամառանոց է ուղարկել Սանահին վանքը, որ ամառն այնտեղ ֆեսն է այնտեղից շրջագայեն Լոռու գաւառը: Դպրանոցի հոգաբարձութիւնն այդ կարգադրութիւնն անելու ժամանակ ունեցել է այն նպատակը, որ միջոց տայ սանիկներին ծանօթանալու հայրենի երկրի բնութեանը և պատմական յիշատակարաններին: Դրա համար հոգաբարձութիւնը աշակերտների հետ, բացի մի վերակացուից, ուղարկել է և մի ուսուցիչ, որի պարտականութիւնը պիտի լինի աշակերտներին իւր տեղում բացատրել հին աւերակների յիշատակները, պատմական հնութիւնները. մի խօսքով, առաջնորդ լինել աշակերտներին, որ կարողանան նրանք այդ դպրոցական զբօսանքից օգտուել, ինչպէս հարկն է:

Բ.

Կարելի է ուրախութեամբ չընդունել Ներսիսեան Դպրանոցի վարչութեան այդ որոշումը, որ նորութիւն է մեր դպրոցական կեանքի մէջ: Դպրոցական զբօսանքների մանկավարժական և բարոյական կրթիչ նշանակութիւնն արդէն յայտնի է մանկավարժական գիտութեան մէջ, և եւ-

Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնը ցանկանալով մեր երկու դպրոցական մա-

րոպայում ամենայն մի դպրոց իւր միջոցների չափով, ամառնային կամ աշնանային արձակուրդների ժամանակ, աշխատում է օգտուել ժամանակից և դպրոցական զբօսանքներ կատարել:

Եւրոպայում այդպիսի մի զբօսանքի համար ամենայն մի դիւրութիւն կայ թէ ճանապարհներին, թէ իջևանների նկատմամբ և թէ այն գրաւոր ուղեցոյցների նկատմամբ, որ պատրաստ ունին նրանք իրենց երկրի ամեն մի մասի համար: Իսկ մեր երկրում այդպիսի յարմարութիւններից և ոչ մէկը չունինք. եթէ ճանապարհների հաղորդակցութեան դժուարութիւնն էլ մի կողմը թողնենք, նոյն իսկ առաջնորդող ուսուցիչը, ինչպէս Ներսիսեան Դպրանոցի վարչութիւնն ուղարկել է որդեգիրների հետ, — նա մեծ դժուարութիւններ պէտք է կրէ, որպէս զի կարողանայ, ինչպէս հարկն է, առաջնորդել աշակերտներին և բացատրել պատմական հնութիւնները. ուսուցիչը պէտք է ամենայն ինչ նոր սկսի գրքերի մէջ բըրբըրել, կարդալ, ամփոփել, ուսումնասիրել և ապա բացատրել աշակերտներին, որովհետեւ մենք մեր երկրի ուսումնասիրութեան համար առաջուց պատրաստած ոչինչ չունինք:

Գ.

Պատրաստած ոչինչ չունինք, որովհետեւ մինչև այժմ չենք հետաքրքրուել մեր երկրով, մեր

նապարհորդութիւնների մանրամասն նկարագիրը հրատարակել պատկերազարդ, առ այժմ

պատմական յիշատակարաններով ու հնութիւններով. ուրիշ խօսքով մենք չենք հետաքրքրուել մեր անցեալով: Եթէ մեր դպրանոցներում էլ մեր պատմութիւնը, մեր երկրի աշխարհագրութիւնը սովորում են, — այդ էլ միայն մնում է իբրեւ մեռած տարր, որ աշակերտը դպրոցից դուրս գալուց յետոյ կամ բոլորովին մոռանում է, կամ եթէ չի մոռանում, նրա գլխի մէջ մնում են միայն կցկտուր և անկապ և շատ անգամ անիմաստ իրողութիւնների մի կուտակութիւն, որ աշակերտը չի իմանում թէ ինչի՝ պէտք պիտի գան իրեն. և այդ պատմական իրողութիւնների խառն ու խռն կուտակութիւնը նոյն իսկ զգացմունքներ ևս չեն զարթեցնում աշակերտի սրտի մէջ: Ել չենք խօսում այն մեծ սխալների մասին, որ մեր երկրի ուսումնասիրութեան ժամանակ տրւում է աշակերտներին. մինչև այժմ մեր երկրի աշխարհագրութեան համար իբրեւ քարտէզ գործադրւում է Վենետիկի քարտէզը, որի աննպատակ լինելը ցոյց աւելու համար բաւականանանք միայն ասելով որ այդ քարտէզի մէջ Արցախ գաւառը (այժմեան Շուշու գաւառը) բերած դրած է Սեւանայ լճի հիւսիսային արեւմտեան կողմում, հին Գուգարաց գաւառի տեղում, ուր ուղարկել են ներսիսեան Դպրանոցի որդեգիրներին: Այդ միւսնոյն որդեգիրները, անշուշտ, դասարանում շատ անգամ Արցախ կարգացած կըլինին գրուած այն

մենք հասարակութեանը տալիս ենք վերոյի-

տեղի համար, ուր այժմ իրենք գնացել են...:

Երկրի ուսումնասիրութիւնը, ճանապարհորդելով և պատմական յիշատակները տեղն ու տեղը տեսնելով, կ'ազատէ աշակերտին այդպիսի սըխալներից. և իւր տեղում արած որ և է պատմական յիշատակութիւն այնպէս խորը կտպաւորուի աշակերտի մտքի մէջ, որ երբէք չի մոռացուիլ: Պատմական յիշատակարանների մօտ կարգացած կամ լրած պատմութիւնը մեծ աղբեցութիւն կարող է ունենալ և աշակերտի սրտի, զգացմունքների վրայ. և այդ աղբեցութիւնն ապագայում, անշուշտ, առաջնորդող կը հանդիսանայ աշակերտի գործունէութեան, իւր երկրի և պատմութեան ուսումնասիրութեան նկատմամբ:

ՊԵ.

Թերեւս այդ դպրոցական զբօսանքների փորձերը հետզհետէ կարողանան ազդել և մեր այն ընդհանուր թմրած գրութեան դանդաղութեան վրայ, որ ունինք, և չենք ուզում ամառը տեղից շարժուել և փոքրիկ ճանապարհորդութիւններ անել, մոռանալով միանգամայն, որ այդ ճանապարհորդութիւնները ոչ միայն հոգու և սրտի վրայ են ազդում, միտքը կրթում և սիրտն աշխուճացնում, այլ և մարմնական, առողջական մեծ փոփոխութիւն են մտցնում մեր մէջ: Մեր երիտասարդները, մեր վարժապետները, ուսանողները չգիտեն օգտուել այդպիսի ճանապարհորդու-

չեալ ճանապարհորդութիւններից առաջինի համաձայն տեղեկագիրը:

Իս. Յ.

Տփլիս, 1894 թ. մայիս

Թիւնից. նրանք բնածին թմրութեամբ և դանդաղութեամբ աւելի լաւ են համարում ամառուայ ամիսները կամ քաղաքի տապի մէջ ապրել, կամ գնալ մի ամառանոց և այնտեղ ընկած մնալ մինչև սեպտեմբերը...:

Պէտք է ամառնային արձակուրդներից, ամառուայ հանգստութեան ժամանակից օգտուել, և ման գալ, դրանով կ'օգտուի թէ մեր գրականութիւնը և թէ նոյն իսկ ամբողջ հասարակական կեանքը և գործունէութիւնը, որովհետև այդպիսի զբօսանքներով միայն կարող ենք ճանաչել մեր ժողովուրդը, մեր երկիրը և կը վերանայ մեր այն սխալ յատկութիւնը, որ նոյն իսկ հասարակական գործիչներ լինելու համար, հասարակութեան, ժողովուրդի մէջ գործելու համար հարկաւոր չէ համարուում ծանօթ լինել մեր ժողովուրդին, մեր երկրին, և մեր պատմական յիշատակարաններին... Իսկ թէ այդ անծանօթութիւնից ինչքան խոշոր սխալներ են լինում, ինչքան տուժում է մեր հասարակութիւնը, մեր մամուլն ու գրականութիւնը, — այդ արդէն յայտնի է:...

Առաջնորդող, Նոր-Դարի

№ 110 91 թ.

Ա.

ՀԱՄԱԹՈՑ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԻ

ԱՌԱՋԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ



պրոցական տարուայ վերջը,
1891 թ. մայիս ամսին,
երբ Ներսիսեան դպրա-
նոցի Մեծ. հոգաբարձու-
թիւնը յանձնարարեց ինձ
ծրագիր ներկայացնել դըպ-
րանոցի որդեգիր սաների
ամառնային ճանապարհոր-
դութեան համար, ես

ներկայացրի հետեւեալը.

ՀԱՄԱԹՈՑ ԹՐԵԳԻՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ

I. Ն Պ Ա Տ Ա Կ

1) Դպրոցական ուղևորութիւնը պէտք է
օգնէ սանին առաւել շատ բան տեսնելու, դիտե-

լու, զննելու և այլոց հետ ունեցած հաղորդակ-
ցութեամբ աւելի փորձուելու, որպէս զի նա ու-
սուցման ժամանակ առաւել շատ բան սովորէ և
իւր ուսածը մշակէ ու կապակցէ տեսածի, փոր-
ձածի հետ:

2) Դիտողութիւններից առաջ եկած գաղա-
փարները հարուստ նիւթեր են պարունակում
ուսուցման համար:

3) Սաները կարգում են ամենայն օր իւ-
րեանց դասագրքերում կամ լսում ուսուցչի ա-
սածները բաղմամբիւ գաղափարների և երևոյթ-
ների մասին, առանց ըմբռնել կարողանալու դո-
ցա էութիւնը, որովհետեւ պակասում է կարեւոր
դիտողութիւնը:

4) Ահա՛ այդ դիտողութեանց ձեռք բերե-
լուն մեծապէս նպաստում է դպրոցական ճանա-
պարհորդութիւնը:

5) Ուղևորութեան ժամանակ 'ի նկատի են
առնւում կրօնական-եկեղեցական, պատմական յի-
շատակարանները, երկրի աշխարհագրական դիր-
քը և բնապատմական երևոյթները:

6) Պատահած ոչ մի պատմական յիշատա-
կարան՝ լինի այդ եկեղեցի, աւերակ, արձան,
քար և այլն չպէտք է անուշադիր թողնուի, այլ
դիտուի, համառօտ խօսակցուի և ապագայում
ուսուցման հետ կապակցուի. նոյնպէս և զանա-

զան աւանդութիւնները և զրոյցները պէտք է ՚ի նկատի առնուին, որոնք կապ ունին վերոյիշեալ յիշատակարանների հետ:

7) Իսկ թէ աշխարհագրութեան ուսուցման համար ինչ նշանակութիւն ունի, երբ աշակերտն իւր աչքերով տեսնում է իւր՝ միայն անունով սովորած գետը, քաղաքը, դաշտը, լեռը և այլն, որոնցից իւրաքանչիւրը կապակցուած է պատմութեան այս կամ այն հատուածի, իրողութեան, ժամանակի հետ՝ իւրաքանչիւրիս սեպհական փորձերից յայտնի է:

8) Իւրաքանչիւրիս փորձից յայտնի է նոյնպէս, որ այն գետի, վանքի, սարի, ու տեղի անունը, որ չենք տեսել, տասն անգամ բերան առնելով՝ հազիւ կարողանում ենք մեր յիշողութեան մէջ պահել, այն ինչ մի անգամ միայն մեր աչքով տեսածը հազիւ թէ մոռանանք:

9) Ուղեորութեան ժամանակ սաները սովորում են մօտիկից ճանաչել իւրեանց հայրենիքը և սիրել, միևնոյն ժամանակ սրտանց շնորհակալ լինելով այն հիմնարկութիւնից, որ նոցա միջոց է տալիս իւրեանց սրտի ցանկութիւնը կատարելու, բարոյապէս աւելի մեծ յարգանք և սէր կը զգան դէպի ուսումնարանը. վերջին կէտն ևս կարեւոր է դաստիարակութեան յաջողութեան համար: Աշակերտների դէպի ուսումնարանը տա-

ծած սառնութիւնը չարիքներ կարող է ծնել:

10) Ուղեորութեան ժամանակ սաները սովորում են նոյնպէս ըմբռնել բնութեան գեղեցկութիւնը և դիտել բառի բուն նշանակութեամբ և ոչ թէ մի հարեանցի՝ ակնարկ ձգելով՝ անցնել. այս սովորութիւնը նոքա ուսումնարանից կը փոխադրեն, իւրեանց այրական հասակում, դէպի իսկական կեանքի հոսանքները:

II. ՈՒՂԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԸ

Մեր հայրենիքը լի է պատմական յիշատակարանների և քայքայեալ մնացորդների բանակութեամբ. բնութեան գեղեցկութեան կողմից նոյնպէս յետ չէ մնում այլ երկրներից. պակասում են միայն գործարանական արդիւնաբերութեանց կենդրոններ, սակայն այնու ամենայնիւ տեղ-տեղ դոքա ևս գտնուում են Որ երկաթուղիներ չունինք ամենայն տեղ, այդ ևս մեծ կորուստ չէ, բանի որ մեր նպատակն առաւել ոտքով ճանապարհորդելն է, իսկ հարկ եղած ժամանակը սայլեր և ձիեր հօ ունինք:

Պատմական և հայրենագիտական յիշատակարանների վերաբերութեամբ և նոյնպէս բնութեան գեղեցկութեան կողմից մեր սաների դպրոցական ուղեորութեան յարմար վայրեր կարող



են լինել՝ Սիւնեաց երկիրը իւր բազմաթիւ նը-
շանաւոր վանքերով, Հաղպատ և Սանահին վան-
քերն իւրեանց շրջակայ խիտ անտառներով, Էջ-
միածին Սրբավայրը, Օշականը ս. Մեսրոպի դամ-
բարանով, Մողինն, Սաղմոսավանքը և Յովհաննա
վանքը իւրեանց հիասքանչ քանդակագործ ճար-
տարապետութիւնով, Փարպին—Ղազար Փարպե-
ցու հայրենիքը—Ղազընվանքով—Վողբի նշանաւոր
աղահանքը, ձիւնագագաթ Մասիսներն ու Արա-
գածը, վերջին ուս-թրքական պատերազմի դաշ-
տավայրը, Անին իւր ողբացող՝ սակայն անցեալ
փառքն յիշեցնող աւերակներով, և այլն և այլն
բազմաթիւ սրբավայրերը, որոնց անունները լը-
սում են ամենայն օր մեր սաները՝ առանց օրի-
նաւոր գաղափար կազմելու նոցա մասին:

Թէև կարելի էր մէկ դպրոցական ուղևո-
րութեան միջոցում միացնել Լօռու և Շիրակի
յիշատակարանների դիտողութիւնը, սակայն իբրև
փորձ առաջին անգամ կարելի է բաւականանալ
Լօռիով: Պէտք է ընտրել մի կենդրոն, այնտեղ
հաստատուն բնակարան ունենալ և ապա թէ
այդ տեղից կատարել ուղևորութիւնները, ո-
րոնք կարող են տեւել մեկ օրից մինչև մեկ շա-
բաթ՝ նայելով տեղի կարևորութեան և հեռա-
ւորութեան:

III. ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՒՈՐ ՄԻ- ՋՈՑՆԵՐԸ

Որպէս զի դպրոցական ճանապարհորդութիւ-
նը ցանկալի հետեանք և յաջող ելք ունենայ,
կարևոր են հետեւեալ միջոցները.

1) Սանիկներին պէտք է առաջնորդէ մի ու-
ղեցոյց մանկավարժ, որ ուսումնասիրած լինի դըպ-
րոցական ճանապարհորդութեան տեսութիւնը
(Թէօրիան) և անձամբ ևս փորձած:

2) Ուղեցոյց առաջնորդի պարտաւորութիւ-
նը պէտք է լինի բացատրել և ուսուցանել—ո՛չ
թէ դասի ձեռով, այլ զըուցատրական, վերլուծա-
կան (անալիտիքական) եղանակով, բոլոր պատահած
եկեղեցական պատմական յիշատակարանների անց-
եալը և ծագումը—հարկաւ որչափ որ ճիշտ պատ-
մական տեսակէտից հնարաւոր է, մնացածը պէտք
է հաղորդել իբրև աւանդութիւն—և երկրի աշ-
խարհագրական դիրքը որոշել և ըմբռնելի դարձ-
նել սաներին:

3) Ուղևորութեան և ապրուստի եղանակի
մասին—որ պէտք է լինի պարզ, հասարակ, սա-
կայն առողջարար—կարգադրողը պէտք է լինի
ուղեցոյցը:

4) Ուղեցոյց առաջնորդը պէտք է ունենայ
երկու օգնականներ, որոնցից մէկին կը յանձնուի

Ճանապարհորդութեան և ապրուստի տնտեսական և ծախսարարական գործերը, իսկ երկրորդին սաների անմիջական հսկողութիւնը:

5) Օգնականները գործում են նախապէս խորհրդակցելով ուղեցոյց առաջնորդի հետ:

6) Կարևոր են նմանապէս մէկ խոհարար և երկու ծառայ:

7) Մի հաստատուն բնակարան, մահճակալներով, կենդրոնում:

8) Երկու ընդարձակ, բայց հասարակ վրան:

9) Փոքրիկ գրադարան՝ կարևորագոյն գրքերի—մեծ մասամբ դասական (կլասիքական), պատմական գրուածքներ:

10) Փոքրիկ գեղատուն՝ կարևոր դէպքերի համար:

11 Աշխարհագրական քարտէզ:

12) Բարձրագոյն—ճանապարհորդական:

13) Մի քանի ջերմաչափներ և արշիններ:

14) Կողմնացոյց (կոմպաս):

15) Իւրաքանչիւր սան պէտք է ունենայ մի գրպանի յիշատակարան և մատիտ և ուղևորութեան ժամանակ, հանգստանալու միջոցին, գրէ դէպքերը և նկարագրութիւնները, համառօտ, որպէս զի յետոյ կենդրոն հասած ժամանակը շարադրութիւն գրէ:

16) Ուղևորութեան յարմար զգեստներ՝ թէ ամառնային և թէ տաք, սպիտակեղէն, կօշիկ, տաք գուլպայ և այլն բոլորը պէտք է լինին հասարակ, բայց յարմար:

17) Իւրաքանչիւր սան պէտք է ունենայ մէջքի վրայ կրելու պայուսակ՝ կաշուից կամ աւելի յարմարը—տիւյից և մէկ երկաթածայր ցուպ:

18) Եթէ սաների մէջ կան երաժշտական գործիքներով ածողներ, պէտք է տալ նոցա ամենահասարակ թիթեղեայ կամ փայտեայ գործիքներ. լաւ է ունենալ գոնէ մի փող՝ արթնանալու, նշան տալու և այլ դէպքերի համար:

19) Սակաւ, բայց անհրաժեշտ կարասիք—գրասեղան, մի քանի աթոռներ, լապտերներ և գրելու պիտոյք:

20) Կարևոր է նոյնպէս Սրբազան Առաջնորդի կողմից Լօռու գործակալ քահանաներին ուղղուած մի գրութիւն, որպէս զի վերջիններս ուղևորութեան միջոցին ամենայն կերպ աջակցեն ուղեցոյց առաջնորդին:

21) Նոյնպէս մի վկայական Մեծ. Հոգաբարձութեան կողմից՝ հարկ եղած դէպքում գաւառական ոստիկանութեանը ներկայացնելու համար:

22) Ուղեցոյցը պէտք է ուղևորութեան նախընթաց երեկոյեան բոլոր ուղեկիցների առաջ

մի բանախօսութիւն անէ և բացատրէ ուղեորութեան նպատակը և տեղեկութիւններ տալ նոցաբռնելիք գիրքի մասին»:

Հոգաբարձութիւնն ընդունելով և հաստատելով առաջարկուած ծրագիրը, որոշում է ճանապարհորդութեան կենդրոնավայր ընտրել Հաղբատ կամ Սանահին վանքերը և դպրոցի տնտեսական կառավարչին ուղարկում է ընտրելու այդ երկուսից մէկը՝ նայելով յարմարութեանը. պ. կառավարչի ղեկուցման համաձայն որոշում է Սանահինն իբրև կենդրոնատեղի: Այնուհետև հոգաբարձութիւնը ճանապարհորդութեան ղեկավար է նշանակում ինձ՝ «իբրև դաստիարակ և առաջնորդ» (№ 492):

Ծրագրի III մասի — ուղեորութեան համար կարևոր միջոցները — բոլոր կետերն իրագործւում են (բացի 8-ից). ինձ օգնականներ են նշանակւում՝ դպրոցի երկու վերակացունները՝ պ.պ. Սպարապետեան և Աբուլեան — վերջինս միայն մի երկու շաբաթով եկաւ Սանահին և կրկին վերադարձաւ. — վիճակային կոնսիստորիայից հրամաններ են գրւում Սանահին և Հաղբատ վանքերի վանահայրերին՝ «տալ աշակերտացն զսենեակս ի բնակութիւն և յամենայն դէպս ցուցանել նոցա զկարելին օժանդակութիւն» — №№ 2142 և 2143 —

Հոգաբարձութիւնը նոյնպէս խնդրամատոյց է լինում Թիֆլիզի պ. նահանգապետին, որ սորակարգադրութեամբ ճանապարհորդութեան միջոցին՝ հարկ եղած ժամանակը, տեղական իշխանութիւնները կարևոր օժանդակութիւնը և օրինական գործակցութիւնը չ'խնայեն: Պ. նահանգապետը, իշխան Շերվաշիձէն, հրամանագրում է Լօռու պրիստաւին և վերջինս էլ գիւղական տանուտէրերին՝ կարևոր օժանդակութիւնը ցոյց տալ մեզ: Կազմւում է բժշկի ցուցմամբ մի փոքրիկ ճանապարհորդական դեղատուն՝ կարևոր դեղերով. գնւում են բոլոր իրեղէնները, կարգի է բերւում մի փոքրիկ մատենադարան՝ բաղկացած գլխաւորապէս նախնի մատենագիրներից և հայերէն ու ռուսերէն ընթերցանութեան գրքերից:

Այսպէս մի քանի օրուայ ընթացքում ամէն բան պատրաստելով՝ կազմուեց մեր ճանապարհորդական փոքրիկ արշաւախումբը՝ բաղկացած հետեւեալ 21 անձնաւորութիւնից.

- 1) Առաջնորդ խմբի՝ Իս. Յարութիւնեան.
- 2) Վերակացու պ. Ար. Սպարապետեան

աշակերտներ

- 1) Դէմուրեան Ստեփ. Զ. դաս. աշակ. Թիֆլիզեցի
- 2) Դէրզիբաշեան Ն. Զ. » » Թիֆլիզեցի
- 3) Շուբաշեան Սեդ. Զ. » » Թիֆլիզեցի

- 4) Տէր-Նիկողոսեան Յ. Զ. » » Սղնակեցի
- 5) Ապրեսեան Աւետիս Ե. » » Թաւրիզեցի
- 6) Ազատեան Աւետիս Ե. » » Մեղրեցի
- 7) Բուհիաթեան Լևոն Ե. » » Ախալքալաք
- 8) Պապաջանեան Ա. Գ. » » Մաղարթեցի
- 9) Տ.-Յարութիւնեան Պ. Ե. » » Օբրոպակերտ
- 10) Անդրէասեան Ս. Գ. » » Մշեցի
- 11) Եակշիբեգեան Ս. Գ. » » Թիֆլիզեցի
- 12) Բէրուչեան Աբգար Գ. » » Օնեցի
- 13) Գեօժեան Վ. Բ. » » Կարնեցի
- 14) Գուլուբեան Յովհ. Ա. » » Թիֆլիզեցի
- 15) Աբովեան Կոնս. Ա. » » Երևանցի
- 16) Նազարբեգեան Արսէն պատրաստականից. Թաւ-
րիզեցի. 1 խոհարար և 2 ծառայ:

Աշակերտները վերակացու պ. Սպարապե-
տեանի հսկողութեամբ ճանապարհ ընկան յու-
նիսի 20-ին, ճաշից յետոյ ժամի երկուսին, դէպի
Սանահին, երկու ֆուրգոնով:

Նրանք գիշերուայ ժամի 12-ին հասնում
են Սարվան, ուր ընթրում են և առաւօտեան
վաղ ճանապարհ ընկնում դէպի Ռաստեւան գեր-
մանական գաղթականների գիւղը. այդտեղից ու-
ղևորւում են Կուչենբախի ապակու գործարանը
դիտելու. իջևանելով այնտեղ աշակերտներն ա-
ռիթ են ունենում տեսնել ապակեայ զանազան
իրեղէններ շինելու գործողութիւնները: Հետեւեալ

օրը ճանապ. են ընկնում դէպի «Վարանցովկայ»
գիւղն և այնտեղից դէպի Ալեքսանդրովկայ. հե-
տեւեալ օրը կիւրացէ լինելով՝ կառապանները
չեն շարունակում ճանապարհը և սաները ստի-
պուած են լինում մնալ այդտեղ: Խումբն օգուտ
բաղելով այդ հանգամանքից՝ ոտքով գնում է
Ջալալ-օղլի, որ Ալեքսանդրովկայից 4—5 վերստ
հեռաւորութիւն ունի, մասնակցում է պատարա-
գի արարողութեանը և դպրոցիս նախկին սանե-
րից մէկից ճաշի հրաւիրւում. երեկոյեան խում-
բը կրկին վերադառնում է գիւղը:

Երկուշաբթի օրը խումբն ուղևորւում է
դէպի Ուզումլար. այդտեղից Սանահին անկարե-
ւի լինելով ֆուրգոնով գնալ, վարձւում են
ձիեր և բռնները բարձելով նրանց վրայ՝ խումբը
հետեւեալ օրը գնում է ոտքով Սանահին և տե-
ղաւորւում վանքի սենեակներում:

Այդտեղ սաները մինչև իմ գնալը զբաղւում
են ընթերցանութեամբ և գրաւոր աշխատու-
թիւններով՝ վերակացու պ. Սպարապետեանի հըս-
կողութեամբ. և յուլիսի 16-ին խումբը ոտքով
գնում է մօտակայ պղնձէհանքը—մնաղան—տես-
նելու:

Ես էլ Սանահին հասնելով՝ սկսեցինք մեր
պարապմունքը համեմատ առաջարկուած ծրագրի.
նախ ի մի տեղ ժողովելով բոլոր սաներին՝ բա-

ցատրեցի նրանց դպրոց. Ճանապ. գաղափարը, տուած օգուտները և մտքի ու սրտի վրայ ունեցած ազդեցութիւնը: Նոյնպէս հրահանգներ տուի ընդհանուր կարգապահութեան մասին, ընտրել տուի իրանց միջեց զանազան պաշտօնների համար յարմար անձինք, որպէս զի նրանցից ամէն մէկը մի պարտաւորեալ աշխատութեան ընտելանայ, այսպէս օրինակի համար մէկը պէտք է օրն երեք անգամ, որոշեալ ժամերին — առաւօտեան 9-ին, ճաշից յետոյ 2-ին և երեկոյեան 7-ին — դիտէր և տետրի մէջ նշանակէր ջերմաչափի աստիճանները, երկրորդը պէտք է չափէր մեր դիտած հնութիւնները, երրորդը պէտք է հսկէր սննդի պաշարի վրայ և իւրաքանչիւր օր խոհարարին տար կարեւոր պիտոյքը, չորրորդը պիտք է պահէր սպիրտի մէջ ժողոված փոքրիկ կենդանիները, հինգերորդը պէտք է բոյսերի ժողովածուի մասին հոգար և այլն և այլն: Այսպիսով իւրաքանչիւր սան բացի ընդհանուր պարտաւորութիւններից ունէր և մի առանձին պաշտօն: Օրապահութիւնը հերթով էր և իւրաքանչիւր օր երկուսն էին լինում:

Այս կարգադրութիւններն անելուց յետոյ, յաջորդ օրուանից սկսած մի ամբողջ շաբաթ զբաղուեցանք Սանահնի հնութիւնները դիտելով, որոշեցինք Սանահնի աշխարհագրական դիրքը,

հորիզոնը, անցեալն ու ներկան և ապա կարգով մանրամասն դիտեցինք ու նկարագրեցինք վանքի մասերը, որոնք են՝ 1) Սբ. Աստուածածնայ եկեղեցին. 2) Գաւիթը. 3) Ամենափրկիչ եկեղեցին. 4) Գաւիթը. 5) Սբ. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին. 6) գրատուն կամ նշխարասրահը. 7) Ջանգապատուն. 8) Գուրգէն և Գաւիթ Անհողին արքաների դամբարանները. 9) Սպասարանների դամբարանը. 10) սբ. Յարութեան եկեղեցին և Տուտեորդու դամբարանը:

Գիտողութիւնը տեղի էր ունենում հետեւեալ կերպով. որոշեալ ժամին փողը հնչում էր և սանիկները թողնելով իւրեանց մասնաւոր պարպմունքը, ժողովում էին մեր բնակարանի առջ և կարգով գնում էինք դիտելու վայրը, պտտում շուրջը, արտաքինը նկատում և ապա ներս գնալով՝ սաներից ոմանք նկարագրում էին շէնքի կազմութիւնը, ձևը. ոմանք չափում էին մեծութիւնը. ոմանք կարդում էին որմերի վրայ եղած արձանագրութիւնները, ոմանք լուսամուտների էին համարում և այլն. ապա այս բոլորը ամփոփ կերպով տեղի ու տեղը թելադրում էինք, աւելացնելով նաև պատմական տեղեկութիւններ շէնքի ժամանակի և կառուցանողների մասին. իսկ աշակերտները գրի էին անցնում իւրեանց յիշատակարաններում: Յետոյ կրկին կարգով վերա-

դառնում էինք մեր բնակարանը: Այդպիսի դիտողութիւններ անելուց յետոյ մէկ օր միջոց էինք տալիս սաներին, որպէս զի իւրեանց յիշատակարաններում նշանակուած համառօտ նկատողութիւններից շարագրութիւններ գրեն:

Սանահնի վանքի դիտողութիւնը վերջացնելուց յետոյ պատրաստուեցանք մի ութօրեայ ճանապարհորդութիւն անելու պատմական Գուգարաց աշխարհում: Մեր խնդրով Սանահնի վանահայր և Լօռու գործակալ արժ. Գեղամ վարդ. Պապաջանեանն առաջուց նամակներ գրեց այն գիւղերի քահանաներին, որ պէտք է այցելէինք և տեղեկութիւն տուեց մեր գալստեան մասին, որպէս զի նրանք գիշերելու օթեան պատրաստէին մեզ Համար: Ճանապարհորդելու նախընթաց երեկոյեան՝ իբրև նախապատրաստութիւն և փորձ յաջորդ օրուան ուղևորութեան՝ պատուիրեցի սաներին պատրաստուել այնպէս, ինչպէս որ պէտք է լինին ուղևորութեան րօպէին: Նրանք հագան իրենց ճանապարհորդական տրեխները, տիւթի գուլպաները, սպիտակ պարուսինի բլուզն ու վարտիկը, մոխրագոյն պարուսինի գլխարկները՝ վզակաշնեով, մէջքին կապեցին տիւթից կարած մաղախը—պարկը—և ծալած վերարկուները, ձեռներին բռնեցին մի մի ձեռնափայտ և զինուորական բայլով՝ մերթ երաժշտութեամբ, մերթ եր-

գելով անցնելով գիւղի միջից, դիմեցինք դէպի սը. Կարապետի մատուռը, որ Սանահնից երկու ժամուայ չափ հեռու է: Դիտեցինք, որոշեցինք զիրքը, բարձրութիւնը և ապա նոյն կարգով վերադարձանք մեր բնակարանը:

Միւս առաւօտը ժամի 4-ին արթնանալով՝ թէյ խմելուց և պատրաստուելուց յետոյ՝ Նորին սըրբազնութիւն Վարդան Արքեպիսկոպոսի և տեղական ծերունաղարդ քահանայի օրհնութիւնը ստանալով՝ ժամի 6-ին կարգով իջանք գիւղից, անցանք պատմական Սևորդեաց ձորով, նախաճաշեցինք Օձոնի գիւղում և ապա դիմեցինք դէպի Վարդաբլուր: Ճաշին հանգստանալով մի վճիտ աղբիւրի մօտ, անտառի մէջ, երեկոյեան ժամի 7-ին հասանք Վարդաբլուր գիւղը, ուր մի գիւղացու տանը պատրաստած էր մեր օթեանը: Միւս օրը վարդավառի տօնն էր և միւսնոյն ժամանակ տեղական սուրբ Սարգիս եկեղեցու ուխտագնացութեան օրը. բարձրացանք գիւղից մի ժամուայ չափ հեռու գտնուող բլուրը, որի գագաթին շինուած է ուխտատեղին, և որի արդիւնքը յատկացրած է մեր դպրանոցին: Այստեղ մեր սովորական դիտողութիւններն անելուց յետոյ իջանք մօտակայ անտառը, ուր հաւաքուած էր Լօռու ամբողջ գաւառից մեծ բաղմութիւն, մեր սաներն առիթ ունեցան դիտելու Լօռու հայ գիւղական

ժողովրդի բազմատարազ հագուստներն ու նոցա հիւրասիրութիւնը վայելելու: Երեկոյեան բարձրացանք մօտակայ «Եպլաղ»-ն, այսինքն գիւղական մի բանի ընտանիքների ամարանոցը, ուր գիտեցինք շարժական և ժամանակաւոր բնակարանը, որ կոչուում է «ալաչուխ» կամ «գաբեայ»: Այդտեղ բնակուող գիւղական քահանայի ընտանիքը մեր խնդրով ցոյց տուեց սաներին կաթնաշին տնտեսութեան բոլոր պարագաները. նոյնպէս փորձեր արին՝ արածան, սեր, «ջիւ» և «թեւ» պանիր պատրաստելու: Նահապետական փայտեայ «խնոցին» ևս կախեցին ծառի ճիւղերից: Մեր սաներն էլ վայելելով իւրեանց աչքի առաջ պատրաստուած Աստուածային տուրքը, ուրախ ցած իջանք բլուրից և այդ գիշերն էլ անցրինք Վարդաբլուրի նոյն օթեանում:

Յաջորդ օրը վաղ առաւօտեան ճանապարհ ընկանք դէպի Լօռու մայրաքաղաքն ու ընդունաւ, որ շինել է Գաւիթ Անհողին Աղուանից թագաւորը և նրա որդի Նիւրիկէ թագաւորը դարձրել է մայրաքաղաք իւր փոքրիկ թագաւորութեան. մի քանի ժամ շարունակ գիտելով ունկարագրելով բերդի պարիսպը, աւերակ եկեղեցիները, պալատն ու բաղանիքները՝ մեր սաներն ախորժանօք վայելեցին մի գիւղական ընտանիքի պատրաստած ճաշն և երեկոյեան դէմ ուղևորուե-

ցանք դէպի Ջալալ-օղլի: Այստեղ տանուտերի առաջարկութեամբ իջեանելով մի հայ ընտանիքի յարկի տակ՝ հիւրասիրուեցանք և մեր դիտողութիւններն անելով՝ յաջորդ օրն ուղևորուեցանք դէպի Կուրթան. այդտեղ գիշերեցինք տեղական քահանայի տանը և գիւղի գերեզմանատանն եղած հնագրեան դամբարաններն— խաչքարերը— գիտելուց յետոյ՝ շարունակեցինք մեր ճանապարհը դէպի Դսնդ գիւղը. դեռ գիւղը չ'մտած մեզ գիմաւորեցին գիւղի երկու քահանաները, տանուտէրը, նախկին տանուտէրը և տեղական իշխաններից մէկը. վերջինիս և քահանաներից մէկի մօտ պատրաստուած էր մեզ համար օթեան, ուստի և մեր խումբն երկու մասի բաժանեցինք: Այդ գիշերը գիւղի համայնքը մեզ պատուելու համար ուղափոխել էր երկու ոչխար:

Այդ գիշերը հանգստանալուց յետոյ միւս առաւօտեան սկսեցինք մեր դիտողութիւնները. թէ գերեզմանատանը և թէ գիւղի շուրջը կային բազմաթիւ յիշատակարաններ 12—13 դարերից: «Տղրուկայ զօլ» կոչուած փոքրիկ լճակն ևս տեսնելուց յետոյ իջանք ձորը, ուր շինուած է հնագրեան սուրբ Գրիգոր «ըսրծըսըսը» կոչուած վանքը. վանքի հրաշակերտ եկեղեցիների շէնքը նկարագրելուց ու նկարելուց յետոյ՝ մեր սաները վայելեցին մեզ հիւրասիրողների նոյն իսկ այդ

վանքի պարսպի տակ պատրաստուած ճաշը և երեկոյեան դէմ կրկին բարձրացանք գիւղը. ներկայ գտնուեցանք ու մասնակցեցինք ժամերգութեանը, դիտեցինք եկեղեցին ու հնուց մնացած մի տան յատակը և նոյն օթեաններում գիշերելով՝ միւս օրն առաւօտեան կանուխ երկու խմբերն էլ միանալով՝ շնորհակալութիւն յայտնեցինք մեզ հիւրասիրողներին և իջանք դէպի ձորը. դիտեցինք «Քառասուն մանկանց»՝ կոչուած վանքը և ապա սուրբ Գրիգորի ձորով անցնելով դժուարամուտ անտառների միջով՝ հասանք Քոլըսայր կոչուած նշանաւոր պատմական վանքը: Մեզ ուղեկցում էին երկու ուսուցիչներ, որոնք դպրանոցիս նախկին սաներն էին:

Քոբայրները դիտելուց և նրա վսեմ ճարտարապետական կերտուածով հիանալուց յետոյ՝ ծառախիտ անտառների միջով դիմեցինք դէպի Այգեհայր և Արդուին, ուր գիշերեցինք մեզ ուղեկցող ուսուցիչների հօր, տեղական քահանայի տանը: Միւս օրը դիտեցինք Յովհան Օձնեցի իմաստասէր կաթողիկոսի դամբարանը, եկեղեցին, գերեզմանատունը, սուանդական բարացած վիշապներն և ուղեորուեցանք դէպի Օձուն՝ ճանապարհին իջնելով անդնդախոր ձորը, որպէս զի դիտենք Հոռոմայր կոչուած նշանաւոր վանքը: Այդ ևս վերջացնելուց յետոյ, երեկոյեան դէմ

իջանք Սեւորդեաց ձորը և նորից բարձրացանք ապառաժոտ ճանապարհով դէպի Սանահին.

Այսպիսով յաջողութեամբ վերջացրինք մեր ութօրեայ ճանապարհորդութիւնը և մեր բնակարանը հասնելով՝ առողջ գտանք նաև մեր երեք փոքրիկ սաներին, որոնց պ. վերակացուի հրահրութեան տակ թողել էինք Սանահին:

Ութ օր շարունակ հանգստանալուց և յիշատակարանների մէջ գրի անցրած նկատողութիւններից շարադրութիւններ գրելուց յետոյ՝ դիտեցինք Սանահինի շրջակայքում դեռ ևս չ'դիտած յիշատակարաններն և օգոստոսի 13-ին ուղեորուեցանք դէպի Հաղբալտ: Երեք օր հիւրասիրուեցանք վանքում և մանրամասն դիտեցինք Հաղբատայ հետեւեալ հրաշագեղ շէնքերը. 1) Սուրբ Նշան աւագ եկեղեցին, 2) Գաւիթը. 3) Սուրբ Գրիգոր. 4) Սուրբ Աստուածածին. 5) Ամենափրկիչ Խաչքարը. 6) Գրատունը. 7) Համազասպը. 8) Գաւիթը. 9) Զիթահանքը. 10) Զանգատունը. 11) Կուսանաց անապատը. 12) Զրգարաշէն եկեղեցին. 13) Բաղմաթիւ պատմական անձանց դամբարաններն ու խորանները. 14) Աղբիւրն ու աւազանը և այլն:

Օգոստոսի 16-ին. առաւօտեան ժամերգութեանը մասնակցելուց յետոյ մեր խնդրով տեղական քահանաները սուրբ Նշան հռչակաւոր խա-

չափայտի մասունքը շարականներով և թափորով ցած բերելուց յետոյ՝ պահպանիչ ասացին բոլորիս գլխին և մենք կազմ և պատրաստ՝ զօրացած սուրբ խաչափայտի կենսատու ուժով՝ շնորհակալութիւն յայտնեցինք արժ. վանահօրն և ճանապարհ ընկանք դէպի պատմական Կայան բերդը և այն օրը հասանք կրկին Սանահին:

Այդ շաբաթ սուրբ Աստուածածնայ պասը և նաւակատիւ լինելով՝ պատրաստուեցանք բոլորս, խոստովանեցինք, արժանացանք սուրբ հաղորդութեանը և ապա թէ երկիւղածութեամբ մօտեցանք Սանահնայ վանքում պահուած սրբազան մասունքներին:

Այդպիսով մօտեցաւ Օգոստոսի 20-ը և մեր հրաժեշտի օրը: Նորին սրբազնութեան օրհնութիւնը ստանալուց յետոյ իջանք ձորը, ուր վանահայր արժ. Գեղամ վարդ. հրաժեշտի հացկերոյթ էր պատրաստել մեր սաների համար. այստեղից բարձրացանք Օձուն, դիտեցինք Յովհան Օձնեցի իմաստասէր կաթուղիկոսի կառուցած եկեղեցին, եռաժանի արձանը և գիշերեցինք տեղական քահանաներից մէկի տանը:

Միւս առաւօտը մեր իրեղէնները բարձելով Փուրգոնների վրայ՝ ուղևորուեցանք դէպի Տըփախ. այդ գիշերը հասանք Ուռուլթ գիւղը, որտեղ մեր ծանօթ երիտասարդ պ. Արշակ Պապեանն

անկեղծ սիրով և զգացմունքով ոգևորուելով մեր դպրոցական ճանապարհորդութեան գաղափարով՝ մի փառաւոր տօնախմբութիւն էր կազմել ի պատիւ մեր սաների: Յաջորդ օրը շնորհակալութիւն յայտնելով մեզ հիւրասիրողին, շարունակեցինք մեր ճանապարհը և գիշերեցինք Աղ. Բեօրփի հայաբնակ գիւղում՝ մեր դպրանոցի նախկին սաներից մէկի տանը: Երրորդ օրը հասանք Շուլաւէր, մի քանի ժամ հանգստացանք և կրկին շարունակելով մեր ուղին՝ գիշերեցինք Մառնեուլ գիւղում. իսկ շաբաթ օրը, Օգոստոսի 24-ին, ողջ և առողջ Փուրգոններից ցած իջանք մեր դպրանոցի բակում:

Թէև՝ թէ ըստ դպրոցական ճանապարհորդութեան ընդհանուր օրէնքների և թէ մեր առաջարկած ծրագրի, դաստիարակի պարտաւորութիւնը պէտք է լինէր միայն ամէն տեսածը նրկարագրել, բացատրել սաներին ու համառօտ նրկատողութիւններ գրել տալ յիշատակարանների մէջ, որպէս զի դպրոցական ուսման ընթացքում այդ նկատողութիւններից շարադրութիւններ գրեն, սակայն ի նկատի ունենալով մեր դպրանոցի հանգամանքները, ես անձամբ շարադրութիւններ գրել տուի այդ նկատողութիւններից և սրբագրեցի՝ չխնայելով նոյն իսկ հանգստութեանս ժամերը: Բացի շարադրութիւններից սաներից ոմանք

ևս նկարում էին մեր տեսած հնադարեան յիշատակարաններն ու վանքերը և այդպիսով կազմուեց մեր հնութեան ալբոմը-մատիտով նկարած. մեզ յաջողուեցաւ նոյնպէս ունենալ մի փոքրիկ ժողովածու հանքային քարերի և սպիրտի մէջ պահած միջատների ու սողունների. բոյսերի հաւաքածուն չկարողացանք պահպանել, որովհետեւ ճնշիչ մեքենայ (պրէս) չունէինք *):

Մի քանի խօսք ևս մեր ընդհանուր կարգապահութեան մասին:

Առաւօտեան ժամի 6-ին արթնանալով՝ 7-ին թէյ էինք խմում, 12-ին ճաշում, երեկոյեան 6-ին թէյ խմում կրկին և 8-ին ընթրում ու 10-ին քնում. ճաշին տրւում էր երկու տեսակ կերակուր, իսկ ընթրիքին մի տեսակ. կերակուրներն օրապահ աշակերտներն էին որոշում:

Առաւօտեան թէյից մինչև ճաշը պարապում էինք, ճաշից յետոյ մի փոքր հանգստանալով՝ երեկոյեան կրկին պարապում. իսկ ընթրիքից յետոյ սովորաբար ընդհանուր զրուցատրութիւն և խմբական երգեցողութիւն էր լինում: Թէ ճաշին և թէ ընթրիքին աղօթում էինք «հայր մերը», իսկ ընթրիքի վերջը «Փառք քեզ Տէր Աս-

*) Երկրորդ ճանապարհորդութեան միջոցին մեզ յաջողուեց բոյսերի հարուստ ժողովածու ունենալ:

տուած» և հայր մերը խմբով երգում:

Յաճախ գնում էինք սուրբ Աստուածածնայ, ձորը լողանալու և երբեմն էլ որսի. որսում էին աղաւնի և նապաստակ. սաներից ոմանք բաւականին հմուտ էին հրացանաձգութեան արուեստի մէջ: Մասնաւոր զբօսանքն արգելւած էր, միշտ միատեղ էինք գնում կամ խումբ-խումբ: Երբեմն էլ զինուորական վարժութիւններ էին լինում, որպէս զի սաները խմբովին մանգալու ժամանակ կարգ պահանքն և համաչափ քայլերով առաջ գնան: Ճանապարհորդութեան ժամանակ գիւղերի ու շէնքերի միջով անցնելիս խիստ զինուորական կարգապահութեան էինք հետևում և երգելով ու երաժշտութեամբ անցնում, իսկ գիւղերից դուրս գալիս սաներն ազատ էին իւրեանց ցանկացած խմբերը կազմելու և զրուցատրելով գնալու. պէտք է ասած, որ այս կարգ ու կանոնը մեծ ազդեցութիւն էր ունենում գիւղական ժողովուրդի վրայ, իսկ մեր խմբական երգեցողութիւնը բոլորովին գրաւում էր նրանց:

Չնայելով Լօռու գեղեցիկ, բանաստեղծական, բայց վայրենի բնութեան, ուր օրինաւոր ճանապարհներ չաւ հազուագիւտ են և բոլորը սար ու ձոր և մի քանի տեղ մինչև անգամ վճռանգաւոր անցքեր, սակայն բարեբաղդաբար մեր

Ճանապարհորդութեան ժամանակ ոչ մի ձախորդութիւն չ'պատահեց:

Սաներից ոմանք Թիֆլիզից ոտք դուրս դրած չ'լինելով՝ սկզբում դժուարանում էին մինչև անգամ տրեխներ հագնել՝ ասելով թէ ոտքերը ջարդում է, սակայն հետզհետէ այնպէս սովորեցին, որ օրերով ճանապարհորդում էին առանց տըրտունջի: Առհասարակ ոտքով ճանապարհորդելն ոմանց համար շատ անսովոր բան էր, բայց դժբա ևս այնպէս ընտելացան, որ ոչ թէ միայն գնում էին ոտքով, այլև շալակած ունէին իւրեանց ձմեռուայ վերարկուներն ու լցրած մաշախները:

Ճանապարհորդութեան միջոցին մաղախների մէջ սանիկները դարսում էին մի ձեռք ձմեռուայ զգեստ, մի զոյգ փոխնորդ, երկու զոյգ գուլպայ, թաշկինակներ, մանր-մունր պէտքական իրեղէններ և երկու հաց ու մի կտոր պանիր: Հաց ու պանիրը սառն ականակիտ աղբւրի վրայ մեր մըշտական ճաշն ու նախաճաշն էր ճանապարհին, մինչև որ նշանակեալ տեղը հասնէին:

Թէ ճանապարհին և թէ Սանահնում սաների կողմից նկատելու արժանի անկարգութիւն տեղի չ'ունեցաւ, բացի հետևեալ դէպքից. չորրորդ դասարանի աշակերտներից մէկը վանահայր վարդապետին մի անպատշաճ խօսք էր ասել, սա-

կայն զղջալով՝ իւր բոլոր ընկերների ներկայութեամբ ներողութիւն խնդրեց հայր սուրբից և գործը խաղաղութեամբ վերջացաւ: Անահայր և գործակալ արժ. Գեղամ վարդապետը մեր գործին բաւականին նպաստեց՝ նախապէս պատրաստել տալով մեզ համար գիշերելու օթեաններ և հրամանագրելով քահանաներին՝ ըստ կարելոյն օթանդակել մեզ: Թէև մենք Թիֆլիզի նահանգապետի հրամանով Լոռու ոստիկանական պրիստաւից նոյնպէս հրաման ունէինք բոլոր գիւղերի տանուտէրների վրայ՝ օրինական օթանդակութիւն ցոյց տալու մեզ, սակայն հազիւ թէ պէտք եղաւ գործադրել այդ հրամանը, որովհետև առանց դրան էլ տանուտէրները կամ նրանց օգնականները սիրով էին կատարում պէտք եղածը: Եւ ո՛չ միայն տանուտէրներն ու քահանաներն, այլ և Լոռու գիւղական ժողովուրդը մեծ համակրութիւն էր ցոյց տալիս մեզ. ամբողջ Լոռին խօսում էր «Թիֆլիզի մեծ ըշօլի մօնթերի» մասին. շատերի բերանից լսեցինք. «ա՛խ, ի՞նչ կըլի, որ մեր ըրելանցն էլ ըլծենոց սըվորեցնէք»: Համակրութիւնն երկու կողմից էր, իսկ դրա օգուտը բազմակողմանի. մեր սաներն ամէն տեղ պատիւ և համակրութիւն գտնելով գիւղական դասակարգից, իրանք էլ սկսեցին այդ տպաւորութեան տակ ուրիշ տեսակ վերաբերուել դէպի այդ պարզա-

սիրտ և անպաճոյճ խօսքի տէր մարդիկը և մասնակից լինել նրանց զգացմանց:

Մանկական ու պատանեկական սրտի վրայ եղած այդ քաղցր տպաւորութիւնն ապագայում կարող է երիտասարդի գործունէութիւնը կենդանացնել գիւղում. անցեալի այդ տպաւորութեան տակ նա չի խորշի գիւղից և գիւղացիներից: 25^օ որ գիւղական կեանքից խորշելուցն է մեր երիտասարդութիւնը դէպի քաղաք ձգտում: Մի՞թէ մեր սաները կարող են մոռանալ այն բուսականներն, երբ գիւղը մտնելիս մեզ դիմաւորում էին և ողջունում գիւղի քահանան, ուսուցիչը կամ տանուտէրն և իւր օգնականը. մէկ տեղ մինչև անգամ մեզ դիմաւորեցին «աղ ու հաց»ով. այո՛, այդպիսի բուսականները մեծ տպաւորութիւն են թողնում պատանեկական սրտի ու զգացմանց վրայ:

Մեր սաները գիւղացիների ընտանիքներում հիւրասիրութեամբ առիթ ունեցան մօտիկից ծանօթանալու նրանց նիստ ու կացի, տան կահաւորութեան, աւանդական սովորութեանց հետ և իրանց ականջով լսեցին գիւղացու պարզ ու անկեղծ սրտի խոստովանութիւնն՝ իւր տնտեսական դրութեան մասին: Մեր սաներն անձամբ զգացին՝ որ հայ գիւղացին չէ խորշում քաղաքակրթութիւնից ու լուսաւորութիւնից, սակայն կա-

րիք ունի իւր ցաւերը հասկացող առաջնորդների և այս կարեւոր էր մեր սաներին. չէ՞ որ մօտիկ ապագայում այդ առաջնորդները հէնց իրանք պէտք է լինին՝ իբրև քահանայ կամ ուսուցիչ:

Միւս կողմից գիւղացիները տեսնելով մեր սաների վայելուչ դիրքն ու կարգապահութիւնը, կանոնաւոր կեանքը, դրաւուելով նրանց երգեցողութիւնից՝ երանի էին տալիս դրանց ծնողներին և շատ անգամ արտայայտում իրանց սրտի փափագը՝ իրանց որդոց վերաբերութեամբ: Մեր դպրանոցի անունը տարածուեցաւ Լօռու ամենախուլ ձորերում և «եայլաղ»ներում. եթէ մինչև այժմ մեծ մասամբ միայն քահանաների որդիքն էին կարողանում գալ մեզ մօտ ուսանելու, այսուհետեւ Լօռու գիւղացին ևս կ'վստահանայ իր որդուն բերել, որովհետեւ նա դպրանոցում իրեն ծանօթ անձանց պատահելով՝ առաջուայ նման չի քաշուի:

Գիւղացին տեսնելով որ մեր սաները հեռու տեղից գալով՝ անչափ մեծ նշանակութիւն են տալիս, հետաքրքրութեամբ մանրամասն դիտում, նկարում ու նկարագրում են այն խաչարձաններն ու աւերակները, որոնց նա ամէն օր տեսնում էր առանց ուշագրութիւն դարձնելու, ինքն ևս այսուհետեւ աւելի սրբութեամբ կ'մօտենայ դրանց և անխնայ չի վարուի՝ ինչպէս վարուել

է ցայտմ՝ չհասկանալով դրանց արժէքն ու նշանակութիւնը. մեր սաները շատերի տան որմերում տեսան գեղեցիկ քանդակներով սրբատաշ քարեր ու արձանագրուած տապանաքարեր և յորդորեցին այսուհետեւ այդպիսի սրբապղծութիւն չանել:

Կարծես մեր սաների բաղդիցն էր, որ մեր դպրոցական ճանապարհորդութեան առաջին փորձը տեղի ունեցաւ Լոռու նման մի՛ բնութեամբ կիսավայրենի, սակայն պատմական-եկեղեցական հնութիւններով լի երկրում: Թէեւ մեր հայրենաց ուրիշ շատ գաւառներն ևս լի են պատմական հնութիւններով, սակայն դրանք քիչ թէ շատ յայտնագործուած, նկարագրուած են և անցեալը պարզուած. դիւրին է հարկաւ ճանապարհորդել Այրարատեան աշխարհում, որ մանրամասն նկարագրել է Ալիշանի պէս մի գրիչ. բայց Լոռին դեռ ևս մեր հայրենեաց մոլթն անկիւններից մէկն է: Բացի Զալալեան Սարգիս սրբազանի հաւ ու կտոր նկարագրութիւններից— ոչինչ հիմնաւոր աշխատութիւն չունինք այդ երկրի մասին: Ահա՛ այդ հանգամանքն ևս նպաստեց մեր սաների հետաքրքրութեան ու աշխատասիրութեան կրկնապատկուելուն. Լոռին նրանց համար մի նոր երկիր էր, որ իրանք էին նկարագրում և ուրախանում:

Այդպիսով նրանցից ամէն մէկը սովորեց դիտել՝ բառի բուն նշանակութեամբ, այսինքն տեսածը մանրամասնօրէն գննել ու նկարագրել. այս բանը նրանց պէտք կգայ ապագայում և կարող է օժանդակել մեր հայրենագիտութեան աւարտելուց յետոյ նրանցից ամէն մէկը ցրուելով զանազան գաւառներ, կարող կլինին այդ սիստեմով ուսումնասիրել իրանց բնակավայրը և գրական աշխատութիւններով հանդէս գալ:

Գալով այն խնդրին՝ թէ արդեօք մեր սաներն ուսման տեսակէտից ի՞նչ օգուտներ ստացան մեր ճանապարհորդութիւնից, չեմ՝ ուզում երկարել, հետեւելով այն առածին՝ թէ «ծառն իր պտղից կ'ձանաչուի». մեր աշխատանքի արդիւնքը մասամբ ամփոփուած է մեր սաների գրաւոր շարադրութիւնների մէջ: Ասում ենք մասամբ, որովհետեւ մեր ձգտումն էր այդ արդիւնքի մեծ մասն ամփոփուած տեսնել մեր սաների սրտում: Մեր դաստիարակութիւնը միակողմանի է, զգացմանց մշակման և ազնուացման վրայ ուշադրութիւն չենք դարձնում, ուստի մեր նպատակն էր ճանապարհորդութեան ժամանակ ըստ կարելոյն լրացնել այդ պակասը. առիթ շատ կար: Կրօնական զգացմունք, շնորհակալութեան զգացմունք, հայրենի հողով և սրբազան աւերակներով ոգեւորող զգացմունք և վերջապէս աշխատասիրու-

Թեան զգացմունք. ահա՛ սրանք էին մեր ձրգտման կէտ նպատակին:

Եւ երբ յաճախ տեսնուամ էինք՝ Թէ ի՛նչպէս մեր սաները ժամերով շարունակ զբաղուամ էին մի աւերակ վանքի ահագին բարձրութիւն ունեցող ճակատի վրայ գրուած, բայց եղծուած ու դժուար կարդացուող արձանագրութեան բառերը կազմելով, Թէ ի՛նչպէս նրանք հեշտութեամբ տեղից շարժուամ և կանգնեցնում էին կաղնուփայտից շինած և ահագին ծանրութիւն ունեցող վերելքը, մէկը շորով սրբում էր հողն ու Թողը, միւսը պոկում էր բուսած խոտերը, երրորդը մաքրում էր լցուած տառերը, չորրորդն որոշում էր տառն ու վանկը, հինգերորդը կարդում էր նախագասութիւնը, վեցերորդը մի անկիւնում նստած համբերութեամբ արտանկարում էր արձանագրութեան արտաքին տեսքը և այլն, այն ժամանակ համոզուամ էինք, որ այնքան էլ դժուար խնդիր չէ մեր սաների զգացմանց կրթելն ու ազնուացնելը, միայն պէտք է միջոց և անող լինի:

Այս բոլորի մասին մեր կազմած տեղեկագիրն անձամբ կարդալով հոգաբարձական ժողովի մէջ՝ մի քանի բերանացի առաջարկութիւններ ևս արինք, որոնք արձանագրուած են նոյն նիստի օրագրի մէջ.

Օրագիր № 37. 1891 թ.

«Զեկուցումն. ուսուցիչ դպրոցիս պ. Իս. Յարութիւնեանց առաջի արար զտեղեկագիր իւր գրեալ 10 ամսոյս ի վերայ 7 Թերթից վասն դպրոցական ճանապարհորդութեան որդեգրաց յամուռնային ամիսս ՚ի վասն Սանահնայ, Հաղբատայ և շրջակայից նոցին ղեկավարութեամբ իւրով այլև ղկազմեալ ի ժամ ուղևորութեան զհաւաքածո հանքային բարաց, բուսոց, սերմօրէից, եղեալ յօղի միջատաց և սողնոց և ղկատարեալ ի ձեռն աշակերտաց նկարուց հնութեանց և ղգրաւոր աշխատութեան պարապմանց նոցա. Բ. յանդիման կացուցանելով և ղմին աշակերտացն ղգեստաւորեալ ճանապարհորդական ղգեստիւք, և բերանացի բացատրեաց մի առ մի ղնշանակութիւն նոցին: Յետ այսօրիկ պ. Յարութիւնեան ըստ առաջարկութեան սորին, ընթերցաւ ղտեղեկագիրն ծայրէ ի ծայր և երևեցաւ ի նկարագրին պարապմունք աշակերտացն մանրամասն հանգամանօք: Հաճելի Թուեցաւ հոգաբարձութեանս բացատրութիւն, տեղեկագիրն և ղեկավարութիւն պ. Յարութիւնեանի և նմա արարաւ շնորհակալութիւն ի ղիմաց հոգաբարձութեանս վասն արդիւնաւոր աշխատութեանց նորա: Ապա պ. Յարութիւնեան արար ղբերանացի առաջարկութիւնս ի հետեւեալս.

ա. Յատկացուցանել զմի պահարան վասն ամենայն ժողովածուի, գրաւոր աշխատութեան, զգեստուց և այլ իրեղինացն. Բ. տալ երից աշակերտաց, որք առաւել աշխատաւոր և յառաջադէմ գտան ի ճանապարհորդութեան, զմրցանակս՝ գրովք ի մատենագրութեանց նախնեաց: Գ. տպագրել զնկարագիր և զպատմութիւն ճանապարհորդութեանն ունելով ի նկատի, զի այս ճանապարհորդութիւն գոյով առաջին փորձն, հետաքրքիր է վարչութեանց այլոց ուսումնարանաց և ուսուցչաց, նաև հայ հասարակութեան: Դ. Հաճ և հաւան գտանելով տեղեկագիրն, բացատրութեան և զբաղմանց պ. Յարութիւնեանի ընդ աշակերտսն, առնել նմա զշնորհակալութիւն (որև ստացաւ ի ժողովի սորին). կատարել զառաջարկութիւնսն պ. Յարութիւնեանի՝ տալով յառաջադէմ աշակերտացն, ըստ որոշման պ. Յարութիւնեանի, զմրցանակս. յատկացուցանել զմի պահարան վասն ժողովածուի, հանդերձից և այլ իրեղինաց. տպագրել զնկարագիր և զպատմութիւն ճանապարհորդութեան յամագրին Արարատ. այժմէն իսկ յայտնել բոլոր վերակացուաց դպրոցիս, թէ ի գալոց ամի նոքա պարտաւորեալ են ի դպրոց. ճանապ. լինել ընդ աշակերտսն, ուր և նոքա առաքեսցին: Զայսմանէ տալ դիտել պ. տեսչին ի կարգադրութիւնս:

Բ.

ՄՐՅԱՆԱԿ ՍՏԱՅՈՂ ԱՅԼԿԵՐՏՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

- 1) Ապրեսեան Աւետիս V դաս. ստացաւ. «Հայկական դպրութեան պատմութիւն» Հայր Զարբանալեանի, երկու հատոր փառակազմ (6 ռուբլի 45 կոպ.) և «Աիլհէլմ Տէլլ» թարգմանութիւն Գ. Բարխուդարեանի. փառակազմ (1 ռուբ. 35 կ.)
- 2) Անդրէասեան Սարգիս IV դաս. ստացաւ Մովսէս Խորենացու հայոց պատմութիւնը — աշխարհաբար թարգ. Խորէն վարդ. Ստեփանէի. փառակազմ (2 ռուբ. 70 կոպ.):
- 3) Գեօնջեան Կարապետ II դաս. ստացաւ Եղեշէ՝ աշխարհաբար, թարգ. Հ. Ղուկասեանի, փառակազմ (1 ռուբ. 30 կոպ.):
- 4) Շուբաշեան Սեդրակ VI դաս. ստացաւ ջրաներկեր և նկարչական ալբոմ (7 ռուբ.):

Գ.

Տ Ն Տ Ե Ս Ը Կ Ը Ն

72 օրուայ ընթացքում ամբողջ ծախսի գումարն եղել է 784 ռուբ. 51 կոպ. որից 28 ռուբ. 65 կոպ. ծախսուել է աշակերտների գլխարկներ:

րի, տրեխների և գուլպաների համար. 78 ռուբ.
99 կոպ. զանազան իրեղէնների. 18 ռուբ. 10
կոպ. ուսումնական պարագաների, 139 ռուբ. 30
կոպ. ճանապարհածախք. 25 ռուբ. 20 կոպ.
լուացարարի, սապոնի ու կարկատանի. 10 ռուբ.
8 կոպ. լուսաւորութեան. 75 ռուբ. ծառաների
ու խոհարարի ուժիկ. 20 ռուբ. Աբ. վերակա-
ցուի ճանապարհածախք. մնացած 378 ռուբ. 89
կոպ. ծախսուած է սնունդի համար, որ հաշուե-
լով՝ իւրաքանչիւր հոգու օրական ընկնում է
 $25\frac{1}{10}$ կոպ. կամ ամսական 7,53 կոպ.: Ամբողջ
գումարը բաժանելով բոլորի վրայ՝ իւրաքանչիւրին
բոլոր ժամանակի համար ընկնում է 37 ռուբ.
36 կոպ. կամ ամսական 15 ռուբ. 60 կոպ.:

Դ.

ՄԻ ՀԵՏՈՒՆԺ ԱՌԵՋԻՆ ԳՊՐՈՑԵԿԸՆ ԺԵՆՊՊԵՐՆՈՐԳՈՒԹԵՆՆ
ԸՆԿԵՐՁԵԿ ՆԿԵՐԵԳՐԻՑ

ԱՐՇԱԽԱՆԴ ԱՌԱՋԻՆ

ՕՐ ՀԵՆԳԵՐՈՐԳ

(1891 յուլիսի 21, չորեքշաբթի:)



ուսուտեան վաղ արթնանալով
[Ժէ] խմեցինք և մեզ հիւրասի-
րող Տէր. Եփրեմ քահանային շը-
նորհակալութիւն յայտնելով
գնացինք դէպի գիւղի (Սուրբ Թանի)
հնադարեան գերեզմանատունը:

Սուրբ Թանը Զորագետի աջ ափի վրայ է. իսկ
գերեզմանատունը գտնուում է գիւղի արևելեան
կողմը. գերեզմանատան մէջ եղած խաչքարերի

արձանագրութիւններից պարզ երևում է, որ տասնեմէկ երորդ դարում արդէն գոյութիւն է ունեցել սոյն հանգստարանը: Գերեզմանատան եկեղեցին աւերուած լինելով՝ կանգուն է մնացել միայն բեմի կամարը: Մեր ուշագրութիւնը գրաւեց այն հանգամանքը, որ այստեղ եղած խաչքարերն իւրեանց ձևով տարբերուում էին ցայժմ մեր տեսած խաչքարերից. սորա յատկանիշն է. մի մեծ քանդակուած խաչ և այս խաչի աջ ու ձախ կողմերի տակ — երբեմն և մի փոքր բարձր — մի մի փոքրիկ խաչ: Որպէսզ և մեջ աչքի էր ընկնում պատուանդանից զրկուած և գետին ընկած մի խաչքար, որին անուանում են «Հերոնիմոսի» խաչքար և կրում է ՇԼԽ (535—1086 թ.) թուականը. արձանագրութիւնից երևում է, որ այդ խաչքարը շինել է Կիւրիկէ թագաւորի ժամանակ Դաւթի որդի Սարգիսը:

Գերեզմանատունը գիտելուց յետոյ՝ հրաժեշտ տուինք Տէր Եփրեմ հօրը և նրա որդի Միքայէլի առաջնորդութեամբ իջանք դէպի ձորը ուր ճանապարհի աջ կողմի վրայ տեսանք մի մատուռ Ուէ (677) թուին կառուցած. մատուռը միայն մի պատուհան ունէր արևելեան որմի մէջ. բեմն ամբողջապէս կանգուն էր:

Այստեղ պ. Միքայէլն էլ հրաժեշտ տալով մեզ՝ մի նամակ գրեց Չորագեղի տանուտէրին և

յանձնեց մի այլ գիւղացու, որ պէտք է հասցնէր մեզ այդ գիւղը: Իջանք ձորը և Չորագետի երկու կողմն եղած պարտէզների ու ծխախոտի ցանքների միջով անցնելով մտանք անտառը և նորից դուրս գալով՝ բարձրացանք մի բոքրիկ բլրակ. շարունակ անձրևներից ճանապարհը դժուարագնաց էր և ցեխոտ: Չորագեղի քեօխվէն — տանուտէրը — ճանապարհին պատահելով մեզ, խուժն առաջնորդեց դէպի գիւղը. գիւղից դուրս քարտաշները սպիտակագոյն քարեր էին տաշում՝ տեղական նոր եկեղեցու շինութեան համար. մեր հարցմանը թէ ինչո՞ւ գիւղամիջում չեն շինում աղօթատունը, տանուտէրը պատասխանեց թէ գիւղի մէջ յատակը փխրուն լինելով՝ լաւ հիմք չի բռնի եկեղեցին, իսկ այստեղ ժայռոտ է տեղը:

Ժամանակ չունենալով այս գիւղում երկար կանգ առնելու, սառն աղբիւրի ջուրը ճաշակելով շարունակեցինք մեր ճանապարհը դէպի Դսեղ գիւղը. տանուտէրը մի այլ գիւղացու պատուիրեց առաջնորդել մեզ և ինքը յետ դարձաւ:

Ճանապարհի ցեխը հետզհետէ սաստկանում է և կպչելով տրեխներին, դժուարացնում առաջ գնալը. անցնում էինք գաշտի միջով. ցորենն արդէն հնձուած էր. աւելի ծաղիկը տեղ տեղ բաւականին մեծ տարածութեան վրայ փռուած՝ կարմրին էր տալիս: Դաշտից դուրս գալով թեքում ենք դէ-

պի հարաւ և անտառների միջով մտնում «Ալի-
րէքսու» կոչուած ձորը. վերեւից լսուող խուլ
ձայները հետզհետէ սաստկանում են և վերջա-
պէս յերեւան է գալիս կարկաշատ գետակը
որ Ձորագետի վտակներից մէկն է Ջալալօղլուի ջրի
չափ, և կոչւում է տեղացիներից Փամբակու ջուր:
Անցնելով գետակի վրայ եղած փայտեայ կամուր,
ջով, որին տեղացիք անուանում են «Թախտա-
քօրփի», հանգստացանք մի փոքրիկ թերակղզու
ձև ունեցող տափարակ և ստուերախիտ տեղ.
ակնակիտ աղբիւրի սառնորակ ջուրը պանիր ու
հացի հետ աւելի ախորժակով վայելցինք այդ-
տեղ, բան քաղաքի տեսակ տեսակ խորտիկները:
Սքանչելի էր բնութեան տեսարանը. Փամբակու
ցեխախառն պղտոր ջրի մէջ, աջ կողմից, հէնց մեր
նստած տեղը, թափւում էր լեռնային աղբիւրնե-
րից կաղմուած վճիտ գետակը, որ կոչւում է
«Խաչի գեղի ջուր». վերջինիս պարզ ալիքները
խառնուելով Փամբակու ջրի ցեխոտ կոհակներին՝
մի փոքր ժամանակ պահպանում էին իրենց ինք-
նուրոյն գոյութիւնը, սակայն շուտով զոհւում
էին և ցեխի հետ խառնուում...:

Երկու ժամուայ հանգստութիւնից յետոյ՝
ոտքի ելա՛ք և ոմանք ոտքերը մերկացնելով, ու-
մանք մեր բեռան ձիու և Գեղամ վարդապետի—
որ հէնց այդ միջոցին հասաւ. մեզ ձիու օգնու-

թեամբ անցանք Խաչի գեղի ջուրը և բարձրա-
ցանք անտառապատ բլրագլաշտի վրայ. ճանապար-
հին բարձր ապառաժի վրայ մի ինչ որ սպիտակին
էր տալիս. մեր հարցմամբ հայր սուրբը բացատ-
րեց, որ դա մի ժամանակ 120 փեթակից բաղ-
կացած մեղուանոց է եղել, սակայն մեղուատիրոջ
թշնամիները կրակել են...:

Անտառից դուրս գալով հասանք մի լեռնա-
դաշտ. այստեղ մեզ առաջնորդող գիւղացին առաջ
անցաւ դէպի ԴԱՄՈՂ, որպէս զի տանուտէրին տե-
ղեկացնէ մեր գալստեան մասին: Մեր ճանապար-
հի աջ կողմը տարածուած են դեռ ևս չ'հնձուած
ցորենի արտեր, իսկ ձախ կողմից Փամբակու ջրի
անդնդախոր ձորն է. ձորի միւս կողմից երևում է
գեղեցկանիստ Ձորագիւղը: Մի ժամուայ ճանա-
պարհ էլ գնալով՝ վերջապէս երևաց՝ Գսեղ գիւ-
ղը. երբ հասանք գիւղի ծայրին գտնուող աղբիւ-
րի մօտ՝ կարգի ընկանք և զինուորական քայլով
ու երաժշտութեամբ առաջ գնացինք դէպի գիւ-
ղը. գերեզմանատան մօտ մեզ գիմաւորեցին երկու
քահանայ, տանուտէրը և մի քանի գիւղական իշ-
խաններ և մեզ առաջնորդեցին դէպի Ստեփան
Մամիկոնեանի՝ ամբողջ գիւղում միակ կղմիտրեայ
տանիքաւոր տունը: Պ. Մամիկոնեանի որդի Ե-
րուանդը Ներսիսեան դպրոցի նախկին սանն էր և
հայր սուրբի փեսան. լաւ ընդունելութիւն գտանք:

Այդ տունը գտնուելով ձորի գլխին՝ գեղեցիկ տեսարան և ընդարձակ հորիզոն ունէր:

Մաղաններս ցած դնելով՝ դիտում էինք այդ տեսարանը. այդ միջոցին ներկայացաւ գիւղի բաճանաներից մէկը, արժանապատիւ Տէր Թադէոս Թումանեանը և առաջարկեց, որ աշակերտների մի մասն իր տուն ուղարկուին օթեանելու. շնորհակալութեամբ ընդունելով այդ առաջարկութիւնը՝ աշակերտներին երկու մասի բաժանեցինք. մի մասը մնաց պ. Ստեփանի տանը, իսկ երկրորդ մասը գնաց տէր հօր տուն:

Երկու խմբերն էլ թէյով և ընթրիքով հիւրասիրուելով՝ զբաղուած էին գիւղին և նրա բնակիչներին վերաբերեալ զրոյցներով:

Դպնդը գտնուում է ծովի մակերևոյթից 1490 մետր բարձրութեան վրայ. առաջը ձգուած է Փամբակու ջրի ձորը, որի միւս ափին երևում է Ծաթեր հայաբնակ գիւղը, դրանից դէպի հարաւ Չորազիւղը. հարաւային կողմից շրջապատուած է անտառապատ լեռներով, իսկ արևելեան կողմից կանաչադարձ բլուրներով. հեռու երևում են Թոռար լեռները, Չաթին-դաղը, ընդարձակ դաշտավայր, Վարդաբլուրը և այլն. հիւսիսային կողմից նշմարուում է նաև Լալուարը. Իւր այսպիսի առանձնացած դիրքի շնորհիւ նա յայտնի է իւր բնակիչների քաջասրտութեամբ. արդէն Խաչա-

տուր Աբովեանը «Աէրբ Հայաստանի» անդուգական երկի մէջ նկարագրել է Լօռեցի քաջ Յովակիմին, որին մեր սաներին հիւրասիրող Տէր Թադէոսը «իմ պապն» էր անուանում: Դսեղը մինչև այժմ էլ յայտնի է իր քաջասիրտ «իգիթներով». այս գիւղից էին վերջին տարիներս Լօռում յայտնի եղած քաջ աւաղակապետները, «Չոփուրի տղէքը». սրանցից հինգ եղբայր միասին աւաղակութեամբ էին պարապում, վեցերորդը բանտարկուած էր. միայն եօթներորդը բաժանուած լինելով դրանցից՝ չմասնակցեց նրանց վաստակած փառքին— զաչաղութեան:— Դսեղի որդիքն են նոյնպէս Լօռում յայտնի հօջա՛լ ունեցող քաջ Աէքը, Սօսը և ուրիշները, որոնք շարունակ կուռել են թուրք աւաղակային խմբերի հետ և «իգիթ»-ի անուն ժառանգել:

Դսեղցիք պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ. վերջին տարիները հացի պակասութիւն է եղել. այս տարի թէև հունձն առատ է եղել, սակայն փոթորիկն ու հեղեղները բաւականին փնաս էին տուել, այդ պատճառով և գիւղի՝ անդուշութիւնից այրուած դպրոցի շէնքը մնացել էր աւերակ և դպրոցը տեղաւորուած էր վարձու տան մէջ:

Այս գիշեր մեր երկու խմբերն էլ աղատ տեղաւորուելով ընդարձակ սենեակների մէջ՝ հան-

գիստ տուին իրենց խոնջացած մարմնի անդամներին:

ՕՐ ՎԵՅՆԵՐՈՐԴ

(1891 թ. օգոստոսի 1-ին, Հինգշաբթի)



Ուաւօտեան ժամի 7-ին արդէն երկու խմբերն էլ միացած և թէյն վերջացրած՝ գնում ենք գիւղի շրջակայքը դիտելու. առաջ մտնում ենք գերեզմանատունը, որ ծածկո՛ւած է բաղմամբիւ խաչքարերով, սկսում մեր դիտողութիւնները և ապա աշակերտներին թելադրում՝ իրանց յիշատակաբանների մէջ գրելու համար:

Դսեղի գերեզմանատանը կայ մի աւերակ եկեղեցի՝ մի անսիւն և կամարակապ շէնք՝ ամբողջ է մնացել միայն բեմի կամարը. մինչև բեմը թաղուած է հողի մէջ և մուտքի միայն վերին մասն է բաց: Եկեղեցու արևմտեան պատի վրայ գրտն-

ւում են քանդակագործուած խաչեր առանց արձանագրութեան: Եկեղեցու երկարութիւնն է (արևելքից-արևմուտք) 9 արշին և կէս, լայնութիւնը (հարաւից-հիւսիս) 5 արշին 14 վերշոկ. բարձրութիւնը բեմից սկսած մինչև կամարը 5 արշին 7 վերշոկ:

Եկեղեցուց յետոյ այցելողի ուշագրութիւնը գրաւում է իր վրայ այդ գերեզմանատան մէջ գտնուող մի հրաշակերտ կոթող դեղնագոյն քարից, որի չորս կողմերն ևս քանդակուած են գեղեցիկ և միմեանցից տարբեր քանդակներով: Առթողը հաստատուած է երեք աստիճան ունեցող և միապաղաղ քարից շինուած քառանկիւնի պատուանդանի վրայ, որի շրջագիծն է 6 արշին, բարձրութիւնը 1 արշ. 2 վերշ. իսկ լայնութիւնը 1 արշ. 7 վեր.: Առթողի վերին մասը ջարդուած է. մնացածի բարձրութիւնն է 3 արշ. 11 վերշ. շրջագիծն է $2\frac{1}{2}$ արշ. Առթողի պատուանդանի արևմտեան կողմի վրայ քանդակուած է մի խաչ, իսկ հարաւային երեսը կրում է հինգ սողից ըրողացած և մասամբ եղծուած մի արձանագրութիւն. կարգացւում է. «Ես Ահհրամ զսատար... թողի վկայ... Խորիշահ ով խափանէ ՅԺԸ (318) հայրապետաց նշովեսցի. Տէր Աստուած ողորմի Մխիթարչին»:

Այս կոթողից ոչ հեռու գտնւում է մի

պատկերազարդ և գեղեցկաբանդակ խաչքար՝ կանգնած երեք քարեայ միապաղաղ պատուանդանի վրայ. պատուանդանները վերևից ներքև հետզհետե փոքր դիրք են ստանում. վերին պատուանդանը, որի վրայ անմիջապէս հաստատուած է խաչքարը և շինուած է դեղնագոյն քարից, արևմտեան կողմից չորս քանդակուած խաչերի հետ կրում է հետևեալ արձանագրութիւնը, որի մի մասն անցել է հարաւային երեսը. «ի թուին 21 (730) ողորմութեամբն Աստուծոյ ես Տէրունս որդի Խալըլին իմ աղբերանցովս կանգնեցի զխէչս յանուն Գրիգորոյ, որ զուր և դառն մահուամբ ի Քրիստոս փոխեցաւ, որ էր պարծանացն..... մեր որք երկրպագէք յաղաւթս յիշեցէք»: Պատուանդանի հիւսիսային կողմը կրում է մի տողանի արձանագրութիւն, որ հետևեալն է. «Վարհամ յիշեսցի»: Արձանագրութեանց տառերը բոլորաբիր են և պարզ կարդացւում են: Ինչպէս ասացինք խաչքարը քանդակուած է. վերին ծայրին քանդակուած է Փրկչի պատկերը, ձեռքին երկար թուղթ բռնած, որի վրայ մակագրուած է. «ես եմ լոյս աշխարհի». Փրկչի աջ կողմը քանդակուած է արև, ձախ կողմը լուսին. Փրկչի պատկերի տակ երկու տողով գրուած է. «Սայ է թագաւոր Հրէից»: Այս արձանագրութեան տակ քանդակուած է մի խաչաճիւղ ձեռք և ցածն

արձանագրած. «Աջ Տեառն, հոգի Աստուծոյ». այդ գրուածքի տակ քանդակուած է խաչեցեալն Քրիստոս, դրա աջ կողմը Աստուածամայրն է, իսկ ձախ կողմը Յովհաննէս Աւետարանիչը: Խաչի երկու թևերի վրայ գրուած է. «ձեռք որ զերկինս արարին, տարածեցեր ի խաչին»: Խաչի ստորին ծայրի աջ և ձախ կողմը քանդակուած են Յովսէփի և Նիկողիմոսի պատկերները. խաչի տակը քանդակուած է մի մարդկային գլուխ և վրան գրուած. «Ադամ». Աստուածամօր, Յովհաննիսի, Յովսէփի և Նիկողիմոսի պատկերների տակ գրուած են նոյնպէս իրենց անունները: Խաչքարի միւս մասերն էլ քանդակուած են: Առհասարակ ամբողջ խաչքարը քանդակուած է նուրբ և լաւ տպաւորութիւն է թողնում տեսնողի վրայ: Խաչքարը կարմիր քարից է: Խաչքարի ստորին պատուանդանի շրջագիծն է 7 արշ. 14 վ. ամբողջ պատուանդանի բարձրութիւնն է 2 արշ. 14 վ.: Խաչքարի բարձրութիւնն է դարձեալ 2 արշ. 14 վերջ, վերևի ծայրի լայնութիւնն է 1 արշ. 6 վ., ստորին ծայրինը 1 արշ. 3 վ. իսկ ամբողջ արձանի բարձրութիւնն է 5 արշ. 12 վ.:

Գերեզմանատանը կային նաև այլ բազմաթիւ խաչքարեր արձանագրութիւններով:

Գերեզմանատան դիտողութիւնը վերջացնելուց յետոյ դիմեցինք գիւղից դէպի արևելա-

հարաւ գտնուող մի ճահճանման լիճ, որին տեղացիք կոչում են «Տզրուկի գետ», մէջ տղրուկներ լինելու պատճառով: Մեզ ուղեկցում են Գեղամ վարդապետը, Տէր-Թադէոսը, մեզ հիւրասիրող Ստեփանի որդի Երուանդը և վերելում յիշուած «Իգիթ» Սոսը՝ իրենից անբաժան հրացանով. նա բարձրահասակ էր, համակրելի դէմքով, շալէ չուխայով, գլխին մորթէ կոթ գլխարկ, իսկ ոտքերին քոշեր ունէր հագած:

Պարզ ու գեղեցիկ առաւօտ էր. ճանապարհը սկզբում անցնում էր վարելահողերի միջով, բայց շուտով մտանք անտառ: Գիւղացիներից շատերը դաշտում արտասովոր գործով էին զբաղուած. մի երկու օր առաջ եղած սաստիկ փոթորիկը ցըրուել էր դեռ չ'կրած և դաշտում հաւաքած խուրձերի դէղերը. այժմ նորից հաւաքում էին, բայց սկզբումն եղածի կէսն անգամ չէր գոյանում: Անտառի միջով բաւականին անցնելով՝ վերջապէս մեր առաջը բացուեց եղեգնով շրջապատուած պարզ լճի մակերևոյթը. մօտեցանք և նստեցինք ծառերի ստուերներում. տեսարանը բանաստեղծական էր. Շուէցարական հրաշալիքները վերարտադրուեցան մտքիս մէջ. նմանութիւններ կային. տարբերութիւնն այն է միայն, որ այնտեղ բնականի հետ միացած է արուեստականը և նուրբ, իսկ այստեղ զուտ բնութիւնն է մեր առաջ. մէկ

կողմից կուսական անտառը, միւս կողմից ընդարձակ հորիզոնը. մէկ կողմից անտառի մէջ արածող անասունների հովիւների սրնգի ձայնը, միւս կողմից լճի եղեգնուտից դուրս թռչող և պարզ ջրի մէջ լողացող վայրի սագերի շարքը. արևի ճառագայթները ցրում են ջրի մէջ, իսկ շրջապատող կանաչը լիճն էլ կանաչ գոյնով է ներկել:

Լճի մէջ տղրուկ բռնելու նպատակով ումանք մերկացրին իրենց ոտքերը մինչև ծնկները և ջրի մէջ կախեցին. լողացող գոմէշների վրայից նոյնպէս վերցնում են տղրուկներ: Թէպէտ բաւականին վայրի սագեր կային ջրի մէջ, սակայն որսալը դժուար էր, որովհետև եղեգնուտի մէջ են թագնւում. հրացանով վիրաւորածներին ևս դժուար է ձեռք բերել, դրանք էլ անյայտանում են:

Լճի շրջապատը մօտաւորապէս կէս վերստ կլինի. գտնւում է ծովի մակերևոյթից 1520 մետր բարձրութեան վրայ:

Այս դիտողութիւնները վերջացնելուց յետոյ ուղևորուեցանք դէպի հիւսիս՝ անցնելով հընձած արտերի և ծաղկալից դաշտերի միջով. ճանապարհին տեսանք բաւականին խաչքարեր. սրտեցից աչքի էր ընկնում մեծ պատուանդանի վրայ դրուած և տեղացիներից «Ծաղկախէչ» կոչուած

սիրունն խաչքարը. խաչքարի ճակատն արձանագրուած ու մամռով պատած էր. ժամանակի սղուծեան պատճառով բաւականացանք միայն սրա թուականը որոշելով՝ որ էր ՈՂԹ (699) թ. խաչքարը քանդակներ ունի. պատուանդանը գեղեցիկ է և կամարազարդ. սա ուխտատեղի է, այդ պատճառով և արձանը շրջապատուած էր թելերով. պատուանդանի վրայ կային խունկ, մոմ և երկաթէ մարդաձև իրեր: Դարձեալ առաջ գնալով այս խաչքարից դէպի արևելա-հիւսիս՝ տեսանք «ծաղկուտի խաչեր»ը, որ գտնուում են ձորի գլխին. սրանք չորս խաչքար են բարձր պատուանդանների վրայ ամրացրած. մէկի վրայ արձանագրուած է. «Կանգնեցաւ խաչս ի բարեխօսութեան Ստեփաննոսի և Գոհարին, որք երկրպագէք յաղօթս յիշեցէք». խաչի մէջ տեղը գրուած է «սբ. Սարգիս». վերին մասում կան ծաղկանկար քանդակներ: Երկրորդ խաչքարը կրում է մի եղծուած արձանագրութիւն 21Ե (735) թ. երրորդ խաչքարն աւելի գեղեցիկ է քանդակուած. մէջտեղը գրուած է «Յուրբ Գրիգոր». արձանագրութիւնը հետևեալն է. «Ի թուին հայոց ՇԻԲ (522) որք երկրպագէք սուրբ Նշանիս... յաղօթս յիշեցէք, օրհնեալ է անուն Աստուծոյ... Յիսուս Քրիստոս»: Զորրորդի վրայ գրուած է. «Ի թուին 2ԺԷ (717) սուրբ Յակոբ. որք երկր-

պագէք յաղօթս յիշեցէք»: Բացի այս չորս կանգուն խաչքարերից այստեղ կային նաև այլ շատ վայր ընկած խաչքարեր և առաւել շատ առանց խաչքարի պատուանդանների երևում է որ այստեղ մի ժամանակ գերեզմանատուն է եղել:

«Ծաղկուտի խաչերի» մօտ, ձորի գլխին, կայ նոյնպէս մի սրբատաշ քարից շինած մատուռ կիսաւեր. երևում է աւազանը: Անդնդախոր ձորի մէջ վաղում է «Ղարախաչայ» գետը, որ միանում է Փամբակու ջրի հետ: Զորի ափով դէպի արևմուտք գնալով տեսանք մի գեղեցիկ նկարներով քանդակուած խաչքար, որ ամրացրած է երեք պատուանդանների վրայ և ժողովուրդի բերանում կոչւում է «Սիրոնի խաչ» իր նրբաքանդակ նկարների պատճառով: Խաչքարի գլխին քանդակուած է Յիսուսի պատկերը՝ բազմած մահճակալի և ներքնակի (նահալի) վրայ, ոտքերի տակ բարձ կայ գրուած. վրան գրուած է «Յիսուս Քրիստոս», Խաչի շուրջն արձանագրուած է. «Իշխանութեան Մամիկոնի և որդւոյ նորա Վարդանայ ես հայրատեղս որդի թէրին, կանգնեցի սուրբ Տէրունականս յիշատակ ինձ և Ասլան բէկին և ծնողաց մերոց, որք երկրպագէք...» արձանագրութիւնը թերի է մնացել: Ափսո՛ս որ թուական չունի այդ հիանալի խաչքարը:

«Սիրունն խաչ» ից կէս ժամի չափ գնալով՝

ուղղակի ձորի գլխին տեսանք մի աւերակ եկեղեցի՝ շինուած սրբատաշ կարմրագոյն քարից՝ թէ ներքուստ և թէ արտաքուստ. եկեղեցին կոչուում է սուրբ Յարութեան: Վանգուն է մնացել միայն եկեղեցու բեմը. սեղանի աջ և ձախ կողմը գըտնուում են երկու խաչաքարեր: Տաճարը թէև փոքր է, բայց մնացորդներից երևում է, որ մի ժամանակ շատ վայրուչ և արուեստով շինութիւն է եղել. բեմի ամբողջ կամարը մի քար է. քարերը տաշուած են շատ մաքուր և յղկած:

Հէնց այս աւերակ եկեղեցու մօտից սկսեցինք իջնել Գէպի ձորը, ուր պէտք է դիտենք Ս. Գրիգոր հուշակաւոր վանքը. ամբողջ ձորը ծածկուած է խիտ անտառներիով: Ճանապարհին ճաշակեցինք առատաբուլիս սառն աղբիւրի համեղ ջուրը և դիտեցինք «ազոտի գերեզման» կոչուած, քարաշէն և կիսով չափ հողի մէջ թաղուած մատուռը: Այս մատուռի վերաբերութեամբ հետեւեալ աւանդութիւնը պատմեցին մեզ. «Սուրբ Գրիգորի վանքը շինելու ժամանակ վարպետների համար այստեղ են կերակուր եփելիս եղել. մի անգամ խոհարարները պղնձի բերանը բաց թողնելով, գնում են վարպետների մօտ. այդ միջոցին պատահմամբ պղնձի մէջն է ընկնում մի թունաւոր օձ. օդի մէջ սլացող ագռաւներից մէկը նրկատում է այդ և շարունակ պղնձի գլխին պը-

տըտելով՝ իր անախորժ ձայներն է արձակում. երբ վարպետները գալիս են հաց ուտելու՝ ձանձրանում են ագռաւի կանչից և զարմանում նրա աներեսութեան վրայ. բայց ագռաւը վերելից ցած սլանալով՝ պղնձի մէջն է ընկնում հէնց այն ժամանակ, երբ կերակուր էին ուղում վերցնել այնտեղից: Վարպետները զղուելով ագռաւից, թափում են պղնձի կերակուրը և նորնկատում իրենց մահ սպառնացող թունաւոր օձի գոյութիւնը. այս բանը նրանք հրաշք և Աստուծոյ ողորմութիւն համարելով՝ ագռաւին պատուով թաղում են այդտեղ և վրան շինում այս սրբատաշ քարեայ մատուռը: Մատուռի վրայ հետեւեալ արձանագրութիւնը կայ. «Շինեցաւ սբ. Յարութիւնն և կանգնեցաւ մատուռս բարեխօսութեամբ վարդապետին Յովհաննիսի և եղբօր նորին Սարգսի. յիշխանութեանն մեծին մարծպանայ և զաւակաց նորա Ասլանբէկին և Գրիգորայ և յառաջնորդութեան Տիրացու վարդապետին. որք երկրպագէք զաշխատողս սորա յաղօթս յիշեցէք և Աստուած զձեզ յիշեսցէ ամէն»:

Այս մատուռից մի փոքր էլ առաջ գնալով՝ ժայռերի միջից երևաց Սբ. Գրիգոր վանքը: Խիտ անտառի մէջ մէն մէնակ կանգնած է կարմրագոյն կոփածոյ քարից շինուած այս հիանալի ճարտարապետութիւն ունեցող մենաստանը՝ աւերուած,

ամայի և թռչնոց բոլորն դարձած: Արդեօք թըշնամու աւերող ձեռքն է զրկել այս վանքը միաբաններից և շէնքն աւերել թէ բնութեան արհաւիրքը—հաստատ յայտնի չէ. աւանդաբար պատմում են միայն՝ թէ եկեղեցին աւերուել է ժայռից պոկուած ապառաժներից. մնացած պակասն էլ լրացել է երկրաշարժը: Թէ ո՞ր ժամանակից արդէն աւեր է այս փառահեղ շէնքը՝ նոյնպէս հաստատ յայտնի չէ. միայն եկեղեցիների մէջ բուսած ահագին հաստութիւն ունեցող ծառերն ի նկատի ունենալով կարելի է ենթադրել, որ վանքի աւերումը կատարուել է մի երկու դար առաջ:

Մօտեցանք վանքին և արդէն պատրաստի գտանք ծառերի տակ փռուած սփռոցը՝ Աստուծոյ բարեբով լի. մեզ հիւրասիրողները ճաշ էին պատրաստել այստեղ մեզ համար և Դսեղ գիւղի ամբողջ համայանքն ևս պատուել էր մեզ՝ յատկացնելով մեր խմբին երկու ոչխար: Ճաշին սեղանակից եղան մեզ հետ նաև Ներսիսեան դըպրոցի նախկին սաներ՝ Յ. Թումանեան և Աղ. ու Սիմ. Յովսէփեանները:

Ճաշելուց յետոյ անմիջապէս սկսեցինք մեր դիտողութիւնը:

Վաւրի արեւելեան պարսպից մի փոքր հեռու, հէնց մեր եղած տեղը, կային երկու գե-

ղեզմանաբարեր, որոնցից մէկի վրայ արձանագրուած է. «Երեմիայ սբ. ծերունի 2Ե» (705). իսկ միւսի վրայ. «Խաչուտի քահանայի» ՈՂԴ (694):

Սբ. Գրիգորի վանքը երեք մասերից է բաղկացած. միջին մասը կամարակապ շինութիւն է՝ հաստատուած 2 սիւների վրայ, որոնք կիսով չափ խորուած են գետնի մէջ, իսկ վերնախարիսխների վրայ կրում են գեղեցիկ քանդակներ և այնքան մաքուր ու լաւ են պահպանուած, որ կարծես թէ բոլորովին նոր լինին: Եկեղեցին անփնաս է մնացել միայն մինչև կամարները, իսկ կամարները և կաթուղիկէն քանդուած են. քանդուած է բոլորովին նաև արևմտեան որմը: Եկեղեցու արեւելեան կողմը, բեմից աջ և ձախ, գտնուում են երկյարկանի խորաններ, որոնցից ստորին յարկի խորանները ծածկուած են քարով. իսկ երկրորդ յարկ խորանների մուտքը բեմից է: Վերին յարկի խորանների յատակի վրայ գտնուում են մի մի քառանկիւնի անցքեր, որ բացուում են առաջին յարկի խորանների մէջ. դրանք առաջին յարկի խորաններից գէպի երկրորդ յարկը տանող մուտքերն են:

Եկեղեցու արևմտեան որմի երկու անկիւններում շինուած են երկու կամարաձև փոքրիկ խորաններ կամ գաւիթներ: Հարաւային որմի մէջ գտնուում են երկու լուսամուտներ, որոնցից մէկը մեծ կամարի տակն է, իսկ միւսը բացուում է գե-

պի գաւիթը: Եկեղեցու մեծ կամարների վրայ եղել են հրաշալի քանդակներ, որոնց հետքերն են մնացել միայն այժմ. իսկ արեւմտեան մեծ կամարի տակ գեղեցիկ մոզայիկ է գոյնզգոյն քարերից շինուած: Նաև փոքրիկ գաւիթների առաստաղների վրայ տեղ տեղ նկատուում են զանազան նկարների գոյնզգոյն հետքեր:

Եկեղեցու լայնութիւնը, հիւսիսից հարաւ, 14 արշ. 8 վերշ. է. երկայնութիւնը, արեւելքից արեւմուտք 17 արշ. 7 վերշ. կամարի լայնութիւնն է 7 արշ. 11 վերշ.: Եկեղեցու արեւմտեան որմին կից է եղել գաւիթը, որ այժմ համարեալ թէ քանդուած է. ամբողջ մնացած մասերի առաստաղի վրայ երևում են գունաւոր նկարների հետքեր: Ինչպէս երևում է գաւթի միջից պէտք է եղած լինէր եկեղեցու մուտքը. այժմ վանքի որմերի տակից արդէն անտառապատ ձորն է սկսւում:

Վանքի միջին եկեղեցու հիւսիսային որմին կից կառուցուած է մի ուրիշ կամարաձև, անսիւն եկեղեցի, որի խորանները ծածկուած լինելով՝ բոլորովին չեն երևում: Եկեղեցու որմերը մինչև կամարները սրուած են գաճով, իսկ կամարներից վերև շինուած է սրբատաշ քարից. կամարներն ու առաստաղը ամբողջովին քանդուած են. իսկ մուտքը, որ գտնւում է արեւմտեան որմի մէջ,

համարեալ թէ բոլորովին ծածկուած է: Եկեղեցու մէջ ընկած է մի փոքրիկ քար, որ ներկայացնում է եկեղեցու փոքրագիր կաղապարը, որի տանիքի մի կողմի վրայ քանդակուած է մի թագակիր մարդու պատկեր՝ մի ձեռքը դէպի վեր բարձրացրած և խաչ բռնած, իսկ միւս ձեռքը ցած ձգած և քսակաձև մի իր բռնած. միւս կողմի վրայ քանդակուած է մի գաւանման իր: Մեր այլ վանքերում տեսած դոյնանման կաղապարների տեղերն ի նկատի ունենալով, հաւանական ենք համարում, որ դա դրուած լինէր կամարների կամ խորաններից մէկի վրայ և քանդուելով՝ ցած է ընկել: Այս եկեղեցու երկարութիւնն է, արեւելքից արեւմուտք, $13\frac{1}{2}$ արշին. լայնութիւնը՝ հիւսիսից հարաւ, 7 արշ. 2 վ.

Վանքի միջին եկեղեցու հարաւային որմին կից շինուած է մի մեծ, ընդարձակ և բարձրաշէն եկեղեցի՝ կանգնած 4 սիւների վրայ, որոնցից մէկի միայն միջին մասն է մնացել կանգուն, իսկ վերնախարիսիւր վայր ընկած է կողքին. սիւները կիսով չափ հողի մէջ են խրուած: Այդ չորս հիմնական սիւները միանալով եկեղեցու չորս անկիւնների կիսասիւնների հետ՝ կազմում են 4 փոքրիկ կամարակապ խորաններ: Եկեղեցու մեծ կամարները, առաստաղը և գմբէթը քանդուած են. կանգուն են մնացել միայն չորս որմերը և

փոքրիկ կամարները. իսկ բեմի կամարը ձեղքուել է որմից, բաւական յետ է գնացել և սպառնում է վայր ընկնել—գիւղացիք յետեւը բարեր են դարսել—: Եկեղեցու մուտքը, որ արեւմտեան որմի մէջն է գտնուում, այժմ կիսով չափ լցուած է: Բեմի աջ և ձախ կողմը գտնուում են երկյարկ խորաններ. ստորին յարկից վերին խորանը բարձրանալու համար շինուած են վերելքներ:

Եկեղեցու հիւսիսային պատի վրայ ներսից գտնուում է արեւի ժամացոյց և մի մեծ արձանագրութիւն, որի մի մասը որմի տակն է մնացել. այս երկու իրողութիւնն ապացոյց է, որ այս եկեղեցին շինուել է վանքի միջին մասն աւարտելուց յետոյ: Եկեղեցու երկարութիւնն է, արեւելքից արեւմուտք, 21 արշ. 11 վ. լայնութիւնը, հարաւից հիւսիս, 20 արշ. 10 վ. միջին կամարների տարածութիւնն է 8 արշ. 10 վ., իսկ անկիւնի գաւթի կամարի տարածութիւնն է 4 արշ. 8 վ.:

Եկեղեցու բեմի կամարի վրայ գրուած է վեց տողանի հետեւեալ արձանագրութիւնը. «Ի թուին ՈՂ (690) Ես Գրիգոր որդի Մարծպանայ յետ մահուան հօր իմոյ շինեցի զԳրիգորաշէն և ետու յիմ վանքս և Սիրեկայ գոմոց տափն և մեծ կառավարն, Ագատակի փայտաշէնու կէսն, զաւագ սբ. նշանն աւետարան պատուական գրեան և զարդ եկեղեցւոյն և այլ արդիւնք ի վանս.

Տիրացու վարդապետն և միաբանքն սահմանեցին զմատուռն որ ի բեմին յաջոյ կողիս է անդ պատարագել զՔրիստոս յանուն իմ անխափան. արդ որ հակառակ կայ և զինչ տուեալ եմ խլէ յեկեղեցոյս յիմոց կամ յաւտարաց՝ իմ մեղացն պարտական է առաջի Աստուծոյ, և որ զիմ ժամն խափանէ դատի Աստուծոյ. և Գրիգորս ետու զաւանին կէսն և զայգին Մամբանայ ամուսնոյ իմոյ և ետ յեկեղեցիս յիշատակ հոգւոյ իւրոյ և սպասաւորք սբ. ուխտիս սահմանեցին ի շաբաթն երկ աւր պատարագել զՔրիստոս յանուն նորա անխափան. արդ որ հաստատ պահէ զաւանդս աւրհնի Աստուծոյ և որ խափանէ դատի Աստուծոյ»:

Բեմի կողքի պատի վրայ արձանագրուած է. «Ի թուին ՈՂԾ (695) յառաջնորդութեան Տիրացու վարդապետին ես Քուրդս որդի Գաւգային յիմ տապանատանէն ի դուրս եկի ի Սանահնէն և միաբանեցայ բարձրաբաշիս կամակցութեամբ Գրիգորայ և Ասլանբէգայ որդւոց Մարդպանայ և ըստ կարի աւգնեցի շինութեան տանս և արարի ինձ գերեզմանատուն և այլ զինչ ունիմ յետ իմ անցման այս եկեղեցւոյս է ի վկայութիւն Աստուծոյ և մարդկան Ասլան բէկա և Գրիգորայ Համկայ և Աշոտոյ. արդ ով այս գրելոյս հակառակ կայ և խափանել ջանայ, իմ մե-

ղացն պարտական է առաջի Աստուծոյ, Կայէնի և Յուդայի մասնակից եղիցի. յինանցն առնեն զիմ ժամն և օրհնեն յԱստուծոյ, ամէն:

Եկեղեցու հարաւային որմի վրայ, արտաքին կողմից գտնուում է հետևեալ արձանագրութիւնը, որ գրուած է նոյնպէս միջին եկեղեցու հարաւային որմի վրայ. սրա կէսը կողքի եկեղեցին կառուցանելուց յետոյ մնացել է որմի տակ և երևի հէնց այդ պատճառով նորից արձանագրուած է արտաքուստ. «Ե թուին ՈՀ (670) ի Թագաւորութեան Գէորգայ որդւոյ Թամարին և յիշխանութեան Աթապակ Իւանէի և զաւակաց նորա Աւագին և Շահնշահին եւ Մարծպան որդի Սարգսի Թոռն Համազասպեանց յազգէ Մամիկոնեանց շինեցի զվանքս և զամէն եկեղեցիքս յիմ հալալ արդեանց և արարի ինձ տուն և գերեզմանատեղի և զաւակաց իմոց և ազգականաց և ծնողի որ էր իմ հայրենիք գանձագին արարի և Սիրեկայ գոմս աւերակ էր շինեցի և աւանդեցի եկեղեցւոյս և Յողջաբերդի այգի մեծ և պատուական և զարդարեցի մեծադին և պատուական սպասիւք խաչիւ և մասամբ և գրեհօք և կարգեցի զսուրբ աւագ բեմն պատարագել յիմ անուն անխափան զըրօրհնէք օրն Մամբան ամուսնոյ իմոյ, արդ որ հակառակ կայ գեղի կամ կապարի խել և հանել յեկեղեցւոյս ազգի և մեղացն պարտա-

կան եղիցի առաջի Աստուծոյ, Կայէնի և Յուդայի մասնակից է ՅԺԸ (318) հայրապետաց նզովեալ եղիցի և որ հաստատ պահէ զաւանդս...»:

Սոյն եկեղեցու բեմի արտաքին որմի վրայ քանդակուած է երկգլխեան արծիւ, որ ճանկերով բարձրացնում է մի գառը. այդ քանդակի տակ կան երկու փոքրիկ լուսանցքներ: Բեմի արտաքին մասը շինուած է աւելի նուրբ տաշուած քարից և հաւանական է, որ յետոյ աւելացրած լինի. այժմ այդ մասը ճեղքուել և բոլորովին բաժանուել է եկեղեցու որմից: Եկեղեցու միւս բաղմաթիւ արձանագրութիւնները վերաբերում են զանազան նուիրաբերութեանց. ուրեմն այս հոյակապ վանքը կառուցել է Սարգսի որդի Մարծպան իշխանը հայոց «ոհ» այսինքն Փրկչական 1221 թուին. վանքն ունեցել է միաբանութիւն և բաւականին կալուածներ ու հարստութիւն:

Կարդալով եկեղեցու կիսաւեր որմերի վրայի արձանագրութիւնները և իսկոյն հայեացքդ ընկնելով քարերի ահագին կոյտերի, քանդուած առաստաղի, յատակին բուսած հաստաբուն ծառերին՝ սիրտդ ճմլում է և ահամայ աչերդ սըրբում ես... հազարաւոր աղքատ և թշուառների սննդով և նրանց վշտերն ամբողջ հոյակապ հաստատութիւնը դարձել է այժմ չընկների ու բուերի բնակարան...:

Վանքի դիտողութիւնը վերջացնելուց յետոյ տխուր տպաւորութեան ներքոյ համարքայլ բարձրանում ենք ձորից. հիանալի երեկոյ է. արևի վերջին ճառագայթներն ընկել են անտառապատ բլուրների գագաթներին. արևմուտքը ոսկեղօծ է: Ձորից դուրս եկանք և գնում ենք փոքրիկ դաշտավայրի միջով դէպի գիւղը. սարերի կանաչագարդ լանջերից լսւում է հովուի սրնգի քաղցրաձայն մեղեդին. գիւղացին դադարեցնում է աշխատանքը և դէպի տուն դիմում: Այս տեսարանը նորից զուարթացրեց մեր խմբին և մենք երգելով ու երաժշտութեամբ մտանք գիւղը և դիմեցինք ուղղակի դէպի գիւղական եկեղեցին. ժամերգութիւնն սկսուեց և մեր սալերն էլ օգնեցին եկեղեցում եղող միակ քահանային: Ժամերգութիւնն աւարտելուց յետոյ սկսեցինք դիտել եկեղեցին: Եկեղեցին կոչւում է սուրբ Լուսաւորիչ և մի մասը հին է, իսկ միւսը նոր. հին են զանգակատունն ու բեմը և շինուած սրբատաշ քարից. սրանց հետ միացրած նոր եկեղեցին, որ կառուցուած է քար ու կրով և հաստատուած փայտեայ սիւների և կամարների վրայ. յատակը տախտակամած է: Եկեղեցու ներսը մութն է՝ լուսամուտների փոքրութեան պատճառով. առ հասարակ շատ անշուք դրութեան մէջ է և այն փառաւոր աւերակների կողքին այդ նոր ողոր-

մելի շէնքը տխուր տպաւորութիւն է թողնում դիտողի վրայ:

Զանգակատան արևելեան պատի վրայ քանդակուած է մի երկգլխեան արծիւ՝ նման սուրբ Գրիգորի արտաքին պատի վրայ եղածին. դորա կողքին քանդակուած է մի եղջերու. զանգակատան վերին մասը կառուցուած է կարմիր և սև քարերից. հարաւային պատի վրայ արևի ժամացոյց կայ:

Եկեղեցուց դուրս գալուց յետոյ մեզ պատմեցին՝ թէ գիւղի խրճիթներից մեկում տեսնելու արժանի բան կայ. խնդրեցինք մեր ուղեցոյց պ. Երուանդին առաջնորդել մեզ դէպի այդ տունը և դնացինք:

Տանտէր գիւղացու համաձայնութիւնն առնելով՝ ներս մտանք խրճիթը, որ համարեա թէ կիսադետնափոր է, քարից շինուած և մի քանի բաժանմունքներից բաղկացած. առաջին բաժանմունքում ամբարն էր դրուած. ներս մտանք երկրորդը. գիւղացին ճրագը ձեռին մեր ուշադրութիւնը դարձրեց յատակի վրայ: Սենեակի յատակը սալած էր քարանման հաստ աղիւսներով, որոնց վրայ զանազան նկարներ կային. աղիւսներն ամբողջ են մնացել և քառակուսի են ու հաւասարաչափ. երևում է, որ մի ժամանակ նշանաւոր շինութիւն է եղել այս խրճիթի տեղը և ա-

ւերակների տակ ծածկուելով՝ պատահմամբ յերևան է եկել խրճիթը կառուցանելու ժամանակ։ Ի նկատի ունենալով այդ յատակի վրայ գտնուող աւազանանման փոսը, կարելի է ենթադրել, որ այդտեղ երբեմն բաղանիք է եղել։

Այդ դիտողութիւնն ևս վերջացնելով՝ աւարտեցինք մեր այսօրուայ զբաղմունքը և կրկին երկու խմբերի բաժանուելով՝ ամէն մի խումբը գնաց գիշերելու իւր նախորդ օրուայ օթեւանում։



ՅԷՒԵԼՈՒԷԺ

ԴԴՐՈՅԱԿԱՆ ՃԱՆԱԴԱՐՅՈՐԴՈՒԹԵԱՆ

Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Ը



աստիարակութեան անմիջական նպատակը պէտք է լինի՝ որոշ և հաստատ ուղղութիւն տալ մանկան հոգեկան յատկութիւններին, նրա մտաւոր կարողութեանը, բայց որովհետև մարդուս հոգեկան և մարմնավոր կեանքն անխզելի կերպով են միացած՝ այդ պատճառով և մարմնի խնամքը վերաբերում է գաստիարակութեան միջնորդական նպատակին։

Մարմնի առողջութիւնը, պնդակազմութիւնն և ընդունակութիւնն երբէք դաստիարակութեան շրջանից դուրս չպէտք է համարուի. առողջապահութիւնն և մարմնամարզութիւնը պէտք է դաստիարակիչ դպրոցի անբաժան տարրերը լինեն: Դաստիարակութեան շրջանում մարմնի ընդունակութիւնները ծառայում են իբրև միջոց՝ մեր ներքին, մտաւոր զարգացումն արտայայտելու. այդ պատճառով և կարևոր է, որ հոգին շուտով ստանայ այդ միջոցը և գործադրէ: Դաստիարակութեան միջոցում մարմնի կրթութիւնը պէտք է ծառայէ մարդուս ներքին աշխարհի բարգաւաճման, ուստի և մանկավարժութիւնը պահանջում է, որ ըստ կարելոյն շուտ մարմինն իբրև գործիք ծառայէ հոգւոյ պահանջներին: Նոյն իսկ ամենահին ժամանակներից սկսած մարմնի կրթութիւնը մեծ տեղ է բռնել աղգերի դաստիարակութեան մէջ:

Դաստիարակութիւնն իւր նպատակին հասնելու համար գործ է դնում զանազան միջոցներ և ահա՛ այդ միջոցներից մէկի վրայ ենք դարձնում այսօր մեր դաստիարակների ուշադրութիւնը:

Մեր ակնարկած դաստիարակիչ միջոցն է դպրոցական ճանապարհորդութիւնը:

Ամիջապէս նկատենք, որ «դպրոցական ճանապարհորդութիւն» (Schulreise) և «դպրոցա-

կան շրջագայութիւն» (Schulexkursion) տարբեր գաղափարներ են: Դպրոցական շրջագայութիւնը, զբօսանքը կամ էքսկուրսիօնը յաճախ կի տեղի է ունենում ուսման ժամանակ և տեւում է միայն մի քանի ժամ, իսկ դպրոց. ճանապարհորդութիւնը լինում է տարին մի անգամ և երկար նախապատրաստութիւն ու ժամանակ է պահանջում:

Մեր խօսքը այս վերջինի մասին է:

Դպրոցական ճանապարհորդութեան գաղափարն և այդ գաղափարի իրագործումը երևան է գալիս Եւրոպայում արդէն 18-դ դարից սկսած, թէև առաւել սահմանափակ շրջանի մէջ և այլ նպատակով քան այժմ: Սկզբներում միմիայն մարմնի կազդուրումն և առհասարակ առողջապահական տեսակէտը համարւում էր այդպիսի ուղևորութեանց նպատակ: Այժմեան գիտնական մանկավարժական տեսակէտից կարելի է հետևեալ երեք սկզբունքներն իբրև դպրոց. ճանապարհորդութեան նպատակ համարել.

Ա. Դպրոցական ճանապարհորդութիւնը պէտք է լինի դաստիարակութեան ամենագլխաւոր միջոցներից մէկը:

Բ. Դպրոցական ճանապարհորդութիւնը պէտք է երիտասարդութեան բնաւորութեան զարգաց-

ման համար ամենաէական և անմիջական կարգադրութիւններից մէկը լինի:

Գ. Դպրոցական ճանապարհորդութիւնը պէտք է օգնէ սանիկին առաւել շատ բան տեսնելու և առաւել փորձուելու:

Ի նկատի ունենալով այս հիմնադադափարները, բացատրենք դպրոց. ճանապարհորդութեան նպատակը մի փոքր ընդարձակօրէն:

Դաստիարակութեան յաջողութեան համար մեծ նշանակութիւն ունի ուսուցչի և աշակերտի մէջ կապակցուած մտերիմ յարաբերութիւնը. և ահա՛ դպրոցական ճանապարհորդութիւնը մեծ ասպարէզ է ներկայացնում ի նպաստ այդ մտերմութեան:

Ուսուցիչը պէտք է լինի ոչ միայն դասատու, այլ և խորհրդատու, բարեկամ և հայր իւր սանիկների. իսկ այդպիսի դեր նա կարող է ստանձնել միայն այն ժամանակ, երբ իւր սանիկներից իւրաքանչիւրին առանձնապէս ճանաչէ և վայելէ նոցա հաւատարմութիւնը: Թէև ուսուցիչը նոյն իսկ ուսուցման ժամանակ ծանօթանում է իւր սանիկների հետ, սակայն այդ վերաբերում է գլխաւորապէս նոցա մտաւոր ընդունակութեանց: Դպրոցի շրջապատի մէջ ուսուցիչն երևում է միշտ իբր ուսուցիչ, ազդեցութիւնն առաւել միակողմանի է և իւրաքանչիւր մանուկ

առանձնապէս առաւել կրաւորական դեր է կատարում: Բոլորովին այլ է ուղևորութեան ժամանակ:

Ազատ բնութիւնը թոյլատրում է առաւել ազատ շարժողութիւն՝ թէ մարմնի և թէ մտքի: Կարծիքների փոխանակութիւնն ուսուցչի և սանիկի մէջ ազատ և աշխոյժ է և չէ կենդրոնանում արդէն նախագծուած շրջանի մէջ: Սանիկներն արտայայտում և երևան են բերում իւրեանց իսկական էութիւնն ազատապէս, որովհետև արտաքին ազատութիւնը մոռացնել է տալիս նոցա այն պարտաւորութիւնը, որին նոքա դպրոցում սովորապէս հնազանդւում են: Այսպէսով ուսուցիչն ուսումնասիրում է իւրաքանչիւր սանիկին առանձնապէս. այդ միջոց է տալիս նորան՝ իմաստուն ու խոհուն մտածմամբ իւր գործը դպրոցում յառաջ մղելու, հաւատարիմ մնալով մանկավարժական սկզբունքներին և հոգեբանական օրէնքներին:

Դպ. ճանապ. ինչպէս որ առիթ է տալիս ուսուցչին իւր սանիկների անհատականութեանց հոգեբանական ուսումնասիրութեան, այնպէս ևս նոյն իսկ սանիկներն առիթ են ունենում իւրեանց ուսուցչին այլ կերպ ճանաչելու և դատելու: Այստեղ նա չէ ներկայանում միայն իբրև ուսուցիչ, այլ իբրև հասարակ մարդ, որ գնում է նոցա հետ

և նոցա մէջ, ուտում ու խմում է նոցա հետ, որ նոցա չէ ուտուցանում, այլ նոցա հետ խօսակցում. նոքա տեսնում են, որ նա հետաքրքրւում և խօսում է նաև այն բաների մասին, որ դասացուցակում չեն նշանակուած: Մանաւանդ երբ ուտուցիչն սկսում է նաև նոցա հետ խաղալ, նորա մտերմութիւնը կարող է այն աստիճանին հասնել, որ նոքա մոռանալով ուտուցչին՝ նորա հետ կսկսեն «դու» ով խօսակցել. թող ուտուցիչը չըմերժէ այդ չափազանց մտերմութիւնը. թող այդ բոլորները նա թանկագին համարէ. այո՛, այդ բոլորներն առաւել և առաւել արժէք ունին քան մի քանի օրուայ չոր ու ցամաք դաստաւութիւնը: Ուղեւորութեան մի քանի օրուայ ընթացքում ուշիմ ուտուցիչը կարող է իւր դիտողութիւնից այնքան նիւթ ձեռք բերել իւր սանիկների բնաւորութեան մասին, որ դաստաւութեան ընթացքում կարող է դորանից օգուտ քաղել: Եւ երբ նա ճանաչել է իւր սանիկներին, իւրաքանչիւրին իբր առանձին անհատ, նա կը համոզուի, որ բոլորին միասին չի կարելի նոյն չափով չափել. իւրաքանչիւր արտաքոյ կարգի պատահարի ժամանակ պէտք է մի անհատի հետ այլ տեսակ վարուել քան մի այլ երկրորդի հետ և ընդհակառակը. նա կը համոզուի, որ երբեմն նոյն իսկ մի որոշ դէպքում, օրի. համար երկու աշակերտի

արած միևնոյն յանցանքի համար, երկուսն ևս միևնոյն պատիժը չեն ստանալու, այլ տարբեր խիստ կամ թեթեւ, նայելով աշակերտի անհատականութեան և այլն:

Ուրեմն դպ. ճանապ. առաջին նպատակը, որով և ծառայում է դաստիարակութեան նպատակի յաջողութեան, վերագրեցինք ուսուցչի եւ սանիկի մէջ կայանալիք մտերիմ յարաբերութեան:

Այդ մտերիմ յարաբերութիւնն անմիջական կապ ունի սանիկի բնաւորութեան զարգացման հետ, որովհետեւ ուտուցիչը կարողանում է թափանցել մանկական հոգւոյ իսկական էութեան մէջ:

Սանիկն այստեղ արտայայտում է առանց արգելքի իւր ներքին աշխարհը, որ շատ անգամ բոլորովին այլ է երեւում, քան ուսումնարանում ճանաչուածը, որտեղ նա չէր կարող բոլորովին ազատ իւր իսկական էութիւնն երեւան բերել՝ ենթարկուելով ուսումնարանական կանոններին:

Գորոցական ուղեւորութիւնը ներկայանում է իբր յաջող դիպուած մեր սանիկների անհատականութիւններն ու բնաւորութիւնները ճանաչելու, կամ թէ վաղուց արդէն ճանաչուած գծերը հաստատելու կամ փոփոխելու, նայելով մեր դիտողութիւնների ցոյց տուած հետեւանքներին: Մի-

այն այն ժամանակ, երբ ճանաչում ենք մեր սանիկներից իւրաքանչիւրի ներքին աշխարհը, անհատականութիւնը, կարող է իսկական դաստիարակութեան գործը յաջող ընթացք ունենալ:

Մինչ սանիկը սրտաբաց խօսակցելով՝ արտայայտում է իւր օրիէկտիւ բնաւորութեան այսպէս ասած հիմնադադափարները, ուսուցիչն առիթ կ'ունենայ նորա սուբիէկտիւ բնաւորութեան զարգացման նպաստելու և նորա ներքին վերածընման համար աշխատելու. ուսուցիչը պէտք է որչափ կարելի է, խօսակցէ սանիկի հետ նորակեանքի, ընտանեկան և հասարակական յարաբերութեանց և հանգամանքների մասին, նա պէտք է սանիկի ունեցած հիմնադադափարները զգոյշ և խնայողաբար ձեռք առնէ, եթէ ոչ սանիկը կը դադարէ իւր դադափարներն ազատօրէն արտայայտել:

Վերոյիշեալ զօղոյցների ժամանակ դիւրութեամբ կ'երևայ թէ արդեօք սանիկի բարոյական տարրական կամ սկզբնական դատողութիւնները կազմակերպուել են, թէ արդեօք նա սովորե՞լ է դոցա իրան վերագրել:

Այդ ժամանակ երևան կը գան սանիկի պակասութիւնները կամ սխալանքները, որոց պէտք է դիմագրել:

Դպ. ճանապ. նպաստում է բնաւորութեան

զարգացման նաև նորանով, որ նա սանիկին ինքնուրոյն գործողութեանն առիթ է ներկայացնում, և որ առաւել նշանաւորն է, մի այնպիսի գործողութեան, որ հասարակական բնաւորութիւն ունի: Ճանապարհորդութեան վերաբերեալ խնդիրները լուծւում են բոլոր ուղեկիցների միահամուռ խորհրդակցութեամբ և ոչ թէ միայն ուսուցչի կարգադրութեամբ:

Այդտեղ սանիկն իւր կարծիքներն ազատօրէն և հրապարակաւ արտայայտելով և գործելով, ճանաչում է ինքն իւր ոյժը, որ կամքի էական պայմաններից մէկն է, և յաճախ ծնողներից չէ գնահատւում: Գործելը թէև ուղեւորութեան ժամանակ սահմանափակւում է մի փոքր շրջանի մէջ, սակայն այն ոյժը, որ ճանապարհի պատճառած նեղութիւններն յաղթահարում է, ներգործում է օրինաւոր կերպիւ, որովհետև այն դժուարութիւններն և անյարմարութիւնները, որ կեանքի այլ շրջաններում ևս յառաջ են գալիս սոցա հետ նմանութիւն ունին և հետևապէս այնտեղ գիտակցելու ոյժն այստեղ ևս վերարտադրւում է:

Ուղեւորութիւնը կ'ունենայ իւր նշանակութիւնը նաև կեանքի բնական յարաբերութեանց և հանգամանքների վերաբերմամբ, օրին. համար առաւօտեան կանուխ արթնանալու և օրուայ

գլխաւոր գործը ճաշից առաջ կատարելու սովորութիւնը: 2ը պէտք է թոյլ տալ որ սանիկներն իրանց ֆիզիքական պահանջը բաւականացնելու մտածմունքների մէջ խորասուզուին, այլ խօսակցութեամբ, զրոյցներով և ի դէպս անմեղ զուարճութեամբ և ծիծաղ պատճառող երգերով զբաղեցնել նոցա, այնպէս որ մտաւոր զբաղմունքը յաղթող հանդիսանայ ֆիզիքական պահանջի առաջ՝ ի հարկէ չը մոռանալով չափաւոր սահմանը: Ուղեւորութեան ժամանակ որքան կարելի է պէտք է հասարակ կեանք վարել, մի և նոյն ժամանակ մոռացութեան չը տալով առողջապահական կանոնները: Այն հանգամանքը, որ ապրելու եղանակն ազդեցութիւն ունի բնաւորութեան կազմակերպութեան և զարգացման վրայ, առանձին ապացոյցների կարօտ չէ:

Ուսուցումը պէտք է փորձով ձեռք բերած գաղափարներն ընդարձակէ ու կատարելագործէ. հետեւապէս այդ գաղափարները սանիկը պէտք է ունենայ ուսուցման սկզբնաւորութիւնից առաջ. իսկ այդ սկզբնաւորութիւնն այն ժամանակ աւելի յաջող ընթացք կունենայ, երբ սանիկի մօտ գտնուին լաւ մշակուած և կապակցուած բազմաթիւ գաղափարներ: Այդ պատճառով և ղալրոց, մանապէս պէտք է օգնէ սանիկին՝ առաւել շատ քան տեսնելու, զննելու եւ ուրիշները

հետ հաղորդակցութիւն ունենալով անելի փորձուելու, այդպիսով նա ուսուցման ժամանակ աւելի շատ բան կ'սովորի և իւր ուսածը կ'մշակէ ու կ'կապակցէ տեսածի ու փորձածի հետ: Ինչպէս որ մարդ չի կարող մի ճշմարիտ ընդհանուր զարգացումն ձեռք բերել առանց իւր մտաւոր շրջանը գաղափարներով տիրել ու կարգադրել կարողանալու, այնպէս ևս միայն այն գաղափարները կարող են իմացութեան և զարգացման ծառայել, որոնք առաջ են գալիս ղիտողութիւններից և հարուստ փորձառութեան նիւթեր են պարունակում:

Գաղափարների ոյժն ու զօրութիւնը կախուած է նոյն իսկ այդ բազմատեսակ դիտողութիւններից և փորձառութիւններից:

Բայց արդեօք մեր սաներին տրւում է այդ բազմատեսակ դիտողութիւնների համար առիթ և միջոց. այո՛, սակայն շատ քիչ և աննշան, այնպէս որ կարելի էր ուղղակի պատասխանել — ոչ: Վերջէնք օրինակի համար մեծ քաղաքների սաներին մի կողմից ու գիւղերի սաներին միւս կողմից և համեմատենք դրանց ունեցած դիտողութիւնները՝ թէ ըստ բանակութեան և թէ ըստ որակութեան: Մեծ քաղաքներում բնակուող սանիկի համար դիտողութեան առարկաներն այնքան բազմաթիւ են և այլատեսակ, որ նոյն իսկ

այդ շատութիւնը սկզբներում արգելք է լինում սանիկի ճշմարիտ դիտողութեան:

Մանուկն ընդհանրապէս դիտում է վայրի վերոյ. նա մանաւանդ այն առարկաները, որ նրան անմիջապէս չեն հետաքրքրում. այդպիսով և սանիկի ստացած բաղմամբիւ մտապատկերները շփոթւում են միմեանց հետ և իսկապէս ոչ մի առարկայի պարզ և որոշ գաղափարը չէ կազմւում նրա գիտակցութեան մէջ: Այդ պատճառով սանիկին պէտք է առաջնորդել իւրաքանչիւր առարկայ առանձին ուշադրութեամբ դիտելու: Գիւլահան սանիկների համար դիտելու առարկաներն աւելի սակաւ են և միակերպ, ուստի և դրանց այլ առարկաների մօտ տանելու անհրաժեշտութիւնն ինքն ըստ ինքեան հասկանալի է, բանի որ ամէն առարկայ չի կարելի տանել դպրոց՝ սանիկի մօտ:

Բայց մի՞թէ գիւղի և քաղաքի սանիկները նոյն իսկ ծանօթ առարկայի մասին մի և նոյն գաղափարն ունին. ամենեւին: Եթէ մեծ քաղաքում բնակւող և գիւղ չ'տեսած սանիկին հարցնենք՝ թէ ի՞նչ բան է «տունը», նա կ'պատասխանէ, որ «տունը» մի 2—3 կամ չորս յարկանի քարաշէն կամ աղւեսաշէն, թիթեղով կամ կղմխտրով ծածկուած գեղեցիկ շինութիւն է. բայց արդեօք նոյն պատասխանը կտայ գիւղացի և քաղաք չ'տեսած

սանիկը— ոչ. տուն ասելով նա հասկանում է միայն հողաշէն կամ քարաշէն մի խրճիթ, որ անմիջապէս իւր կողքին գտնուող գոմից զանազանւում է միայն նրանով, որ մի կամ երկու սլատուհան կամ մի երգիկ ունի: Նմանապէս այլ գաղափար ունի քաղաքացի սանիկը խանութի, փողոցի, ուտելացի, հագուստի, տօն օրուայ մասին, քան գիւղացի մանուկը:

Եւ ահա՛ դպրոց. ճանապ. ներկայացնում է մի յարմար միջոց՝ երկու կողմի համար ևս այդ միակողմանի դիտողութեան վերացման և գաղափարների ճիշտ ու միակերպ ըմբռնման համար: Թէև ասացինք, որ քաղաքացի սանիկը միջոց ունի բաղմամբիւ առարկաներ դիտելու, բայց այնուամենայնիւ նրան ևս պակասում են շատ դիտողութիւններ, որոնք անհրաժեշտ են ուսուցման համար. այդ պատճառով ուսուցման առաջին գործը պէտք է լինի՝ պակասող մտապատկերների և դիտողութիւնների համար հոգալ:

Թէ մեր քաղաքացի սանիկներին ո՞րչափ անհրաժեշտ դիտողութիւններ են պակասում ուսուցման համար, պարզ երևում է մեր կազմած հետեւեալ փոքրիկ վեճակագրութիւնից. Ներսիսեան դպրանոցի երկու նախապատրաստական դասարաններում եղած 80 աշակերտներից միմիայն 26 հոգի էին լսել սոխակի երգը, 35 հոգի

տեսել զուլթանով վարելը. 42 հոգի տեսել անտառ. 35 հոգի տեսել՝ ոչխարի հօտ. արևի ծագելը տեսել էին միայն 31 հոգի. լիճ տեսել էին 26 հոգի. ծով և նաւ միմիայն տասը հոգի. իսկ արտուտի ձայնը լսել էին 80-ից միայն երկու աշակերտ. գուցէ ուրիշ շատերն էին լսել, բայց չէին ճանաչում արտուտին: Համարեա՞ նոյն թուանշաններն են ցոյց տալիս նաև տեղոյս ծրխական դպրոցներից մէկի աւագ ուսուցչի՝ իմ խնդրանօր կազմած դոյնանշան գաղափարների վիճակագրութիւնը:

Սանիկները կարգում են ամենայն օր իւրեանց դասագրքերում կամ լսում ուսուցչի ասածները վերոյիշեալ գաղափարների և երևոյթների մասին, առանց ըմբռնել կարողանալու դոցա էութիւնը: Որչա՞փ ցաւալի և միւսնոյն ժամանակ ծիծաղելի էր, երբ պատրաստական դասարանում իմ տուած հարցին՝ թէ ո՞վ կարող է ասել՝ ինչպիսի թուշուն է սոխակը՝ աշակերտներից մէկը պատասխանեց բառացի կերպիւ հետեւալը. «սոխակն աղաւնուց մեծ է, սև է և լաւ երգում է»։ հասկանալի էր որ նա ագռաւը սոխակի տեղ էր ընդունել:

Դիտողութիւնն անհրաժեշտ է դաստիարակութեան և առարկաների ուսուցման համար և այդ դիտողութեանց ձեռք բերելուն մեծապէս

նպաստում է դպրոցական ճանապարհորդութիւնը:

Ուսուցման առարկաներից առ առաւելն ի նկատի են առնում ուղեորութեան ժամանակ բնական գիտութիւններն և պատմութիւնն ու աշխարհագրութիւնը: Պատահած ոչ մի պատմական յիշատակարան, լինի այդ արձան, շինութիւն, աւերակ, գերեզման, ծառ, ոչ մի այլ իր կամ տեղ, ուղեորութեան ժամանակ, չ'պէտք է անուշադիր թողնուի, այլ դիտուի, համառօտ խօսակցուի և ապագայում ուսուցման հետ կապակցուի, իբրև նախապատրաստական կամ վերլուծական նիւթ. նոյնպէս զանազան հէքեթներ և զրոյցներ, որ յարաբերութիւն ունին դոցա հետ: Իսկ թէ աշխարհագրութեան ուսուցման համար ի՞նչ նշանակութիւն ունի երբ սանիկն իւր սեպհական աչքով տեսնում է իւր՝ միայն անունով սովորած գետը, բաղաբը, լայն դաշտավայրը, լեռն, հովիտն ու ձորն և այլն, որոնցից իւրաքանչիւրը կապակցուած է պատմութեան այս կամ այն հատուածի, իրողութեան, ժամանակի և այլն վերարտադրման հետ, իւրաքանչիւրիս սեպհական փորձերից յայտնի է: Իւրաքանչիւրիս փորձից յայտնի է նոյնպէս, որ այն գետի, դաշտի կամ լեռան անունը, որ տեսնելու բաղդ չենք ունեցել, տասն անգամ բերան անելով հազիւ կա-

րողանում ենք մեր յիշողութեան մէջ պահել, այն ինչ միանգամ միայն մեր աչերով տեսած գետի, լեռան անունը հազիւ թէ մոռանանք: Եւ ո՞ր-
չափ ոգեկան բաւականութիւն և զուարճութիւն է պատճառում փոքրիկ սանիկին (նաև մեզ՝ հա-
սակաւորներին), երբ նոքա կանգնած մի տափա-
րակի վրայ ձեռքերն աջ և ձախ տանելով ա-
սում են. ահա՛ այս այն (յիշում է անունն) լեռան է, այս այն դաշտը, այս գետը կոչւում է այսպէս. սա մի և նոյն գետն է, որ մեր քա-
ղաքի միջով հոսում է, որ երեկ այս ինչ տեղ տեսանք և այլն և այլն: Ո՞ւմ յայտնի չէ, որ
հայրենագիտութեան ուսումը, որ աշխարհագրու-
թեան մի մասն է կազմում, առանց դիտողու-
թեան ոչինչ արժէք չունի:

Դպրոց. ճանապ. դիտողութեանց համար ա-
մենաընդարձակ նիւթ տալիս են բնական գիտու-
թիւնները. այդ պատճառով եւ բնական գի-
տութեանց ուսուցման համար անհրաժեշտ է դպ. ճանապ.: Արդէն ամէն բան արած և բարձ-
րագոյն կէտին հասած ենք համարում մեզ, երբ
բնագ. ուսուցման ժամանակ չենք բաւականանում
միայն խօսքով, այլ դասատուն ենք բերում զա-
նազան նկարներ, կաղապարներ, լցրած կենդանի-
ներ և այլն. թէև սա մի նշանաւոր յառաջագի-
մութիւն է հակառակ միայն խօսքի ուսուցման,

սակայն դա բնագիտ. ուսուցումը չէ պաշտպա-
նում այսօր ևս շարունակուող այն իրողութիւ-
նից, որ ուսուցման գլխաւոր կշիռը դրւում է
բնամարմինների ձևի նկարագրութեան և դասա-
ւորութեան վրայ:

Այդ կաղապարները, արհեստական կերպիւ-
շինած թուշունները, կենդանիներն և այլն ներ-
կայացնում են իրանց իսկականի միայն մի, այս-
պէս ասած, մոմէնտը, նոցա մեռած դրութիւնը,
կեանքի ոչ մի նշոյլ չկայ դոցա մէջ և ոչ ևս
արտայայտում են նոցա ապրելու եղանակը. մի-
թէ մի և նոյն տպաւորութիւնն են թողնում
սանիկի վրայ՝ մի աղատ բնութեան մէջ բուսած
ահագին տերեւափթիթ և ծաղկազարդ ծառի ճիւ-
ղի վրայ հանգստացող արտոյտի դիտողութիւնն
և դասատան սեղանի վրայ դրուած, խոտով լցրած,
չորացած և մի փայտի կտորի վրայ ամրացրած
արտոյտը: Մի՞թէ կենդանաբանութեան նպատակն
է կենդանեաց մեռեալ դրութիւնը. ո՞չ: Սանիկն
իւր աչքով պէտք է տեսնէ իւր սովորած թըռ-
չունների ծառերի ճիւղերի վրայ ոստոստումը,
պէտք է լսէ նոցա գեղեցիկ և հրապուրիչ դայ-
լայլիկը (նոյնպէս և ագռակի կռկռոցն ու բուր-
ողըը), տեսնէ նրանց կերակրուելու և իրանց ձա-
գերին կերակրելու կերպը, սկիւռի և նման կեն-
դանեաց ոստերի վրայ մագլցումը, նոցա ձմեռուայ

Համար պաշար հաւաքելը, միջատների խմբերը, նոցա յարաբերութիւնը բոյսերի հետ և այլն և այլն: Մեղանում՝ քաղաքներում ապրող և դըպրոց յաճախող սանիկների մեծ մասն ազատ բնակող թռչուններից ճանաչում է միայն աղանուռն, ճնճղուկին և ծիծեռին, այն ինչ մի քանի ժամ հեռաւորութիւն ունեցող դաշտի վրայ կամ անտառի մէջ թռչունների տասնեակ տեսակներ օրն ի բուն իրանց երգերով լցնում են օդը և ուղեւորին զմայլումն պատճառում. և հէնց միայն մեր անմեղ և փոքրիկ սանիկները պէտք է զուրկ լինին այդ տեսարանից, որոնց համար անհրաժեշտ էր այդ և որոնց նոյն իսկ կեանքը նմանութիւն ունի այդ տեսարանի հետ...: Բայց գոնէ մեր սանիկները գիտենային միայն անունով, թէ իրանց հայրենիքում կամ մօտակայ դաշտ և անտառում ի՞նչ թռչուններ կան. այդ ևս չգիտեն դոքա և առաւել դիւրութեամբ կը պատմեն հետաքրքրողին Աւստրալիայի խայտաճամուկ թռութակների մասին, քան իրանցից երկու քայլ հեռու գտնուող թռչնոց մասին— խեղճ սանիկներ— մի՞թէ իրանք են մեղաւոր: Եւ ո՞րքան դիւրին էր այդ հակամանկավարժական ուղղութիւնը թողնել և ուղիղ ընթացք բռնել. ահա այդ ուղիղ ընթացք բռնելուն մեծապէս կը նպաստէ դպ. ճանապարհորդութիւնը:

Բուսաբանութեան ուսուցումն ևս մեծ կախումն ունի դպ. ճանապ. կամ կարելի է ասել նաև դպ. շրջագայութիւնից. չի կարելի ասել թէ աշակերտները ճանաչում են այն բոյսերը, որոնց ծաղկած ճիւղերը մի անգամ տեսել են դասարանի մէջ. մի որ և է բոյս ճանաչելու համար առսակաւ կարւոր է, որ նա դիտուի իւր դեռափթիթ, երիտասարդական հասկում և պրտղատւութեան ժամանակ. իսկ ամէն անգամ չի կարելի դոցա դասարան բերել և քանի որ դպ. պարտէզներ ևս գոյութիւն չունին մեզանում, միակ ելքը մնում է նոյն իսկ սանիկներին տանել այդ բոյսերի մօտ:

Հանքաբանութեան ուսուցումը նոյնպէս կարօտ է դպ. ճանապ.. քարերի տեսակների և շերտերի միմիանց հետ ունեցած յարաբերութիւնը չի կարելի ճշտապէս երեւկայել, առանց նոցա ազատ բնութեան մէջ տեսած լինելու:

Երկրագիտութիւնը նոյնպէս. մի՞թէ կարելի է ջրի աղբեցութիւնը ցամաքի վրայ ըմբռնել, առանց այդ աղբեցութեան հետեւանքները տեսնելու: Երկրի դիրքի և քիմիական յատկութեան աղբեցութիւնը բուսական և կենդանական աշխարհի վրայ կարելի է ըմբռնել նոյնպէս միայն դիտողութեամբ և այն: Այս դիտողութիւնները միայն կը ներշնչեն բնագիտութեան ուսուցման

կարևոր կենդանութիւնն և դաստիարակիչ ոգին, որով և միայն այդ ուսուցումն իւր նպատակին կը հասնի:

Դպ. Ճանապ. միջոց է տալիս սանիկին ուսուցման ժամանակ կարեւոր իւրացուցանող մտապատկերներ եւ հարցասիրութիւն ներկայել, որոնք դասատուութեան յաջողութեան գլխաւոր պայմաններն են:

Այսչափը բաւ համարելով՝ դպ. Ճանապ. կարևորութիւնն և նորա տուած օգուտները պարզաբանելու համար, տեսենք թէ ո՞րպիսի միջոցներ են հարկաւոր ճանապ. որբան կարելի է առաւել արդիւնաւոր անելու համար:

Արդիւնաւոր դպ. ճանապ. համար անհրաժեշտ պայմաններից կարելի է մատնացոյց անել գլխաւորապէս հետեւեալ կէտերը: Ա. ուղեւորութեան ժամանակ անհրաժեշտ է ոգեկան ուրախութիւն եւ թարմութիւն: Բ. Ուղեւորութիւնը պէտք է ամենայն հոգատարութեամբ եւ խնամքով նախապատրաստուած լինի: Գ. անհրաժեշտ է խիստ կարգապահութիւն: Դ. պէտք է հոգացուի, որ սանիկներ խոտորութիւնը չը վտանգուի:

Ա. Ինչպէս առհասարակ դաստիարակութեան նոյնպէս և ուղեւորութեան ժամանակ պէտք է ոգեկան ուրախութիւն և թարմութիւն տիրէ,

որովհետեւ դա մանկավարժական հարցասիրութեան (ինտերէս) գլխաւոր հիմքերից մէկն է. առանց դրա ներկայութեան ուղեւորութեան ժամանակ ձեռք բերած մտապատկերների նիւթն ոչինչ արդիւնք չի տալ ուսուցման. ուր հարցասիրութիւն չկայ, չի կարող նաեւ կամք յառաջանալ. հետեւապէս և ոչինչ ազդեցութիւն չի կարող ունենալ բնաւորութեան վրայ:

Թէեւ կարելի է գործել առանց ինտերէսի, սակայն, ոչ այնպէս, որ դորանից կամք յառաջանայ: Այդ պատճառաւ և ուղեւորութեան ժամանակ պէտք է աշխատել սանիկներին դրդել խաղալու, կատակելու և առհասարակ նորա երեւակայութիւնն ի գործունէութիւն հրաւիրելու, դէպի որը ձգտում է ինքն ըստ ինքեան մանկական ոգին, երբ իւրեան ազատ է զգում: Երգերն և խօսակցութիւնը նոյնպէս նպաստում են ոգեկան թարմութեան: Սակայն խօսակցութիւնն աննպատակ չը պէտք է լինի:

ա. Ուսուցիչը պէտք է գիտենայ՝ թէ սանիկներից ո՞րի հետ կարևոր է մասնաւոր խօսակցութիւն սկսել, ի՞նչ նիւթի վերաբերեալ և ինչպէս. նա պէտք է գիտենայ, թէ ո՞ր սանիկի բնաւորութիւնը ճանաչում է և որինը ոչ—վերջիններին պէտք է խնամքով դիտողութեան առնէ՝ նոցա գործողութեանց ու շարժողութեանց

ժամանակ:—Օրինակի համար, եթէ սանիկներէց մէկի զգայուն սիրտն ուսուցիչը մի որեւէ անզգոյշ խօսքով կամ թէ մի որեւէ պատճառով վիրաւորել է, այժմ մի բարեկամական մասնաւոր խօսակցութեան ժամանակ կարելի է այդ տպաւորութիւնն անյայտացնել և սանիկի սիրտն առաւել ևս գրաւել՝ յիշեցնելով նորան, որ տանն իւր հայրն և մայրը բազմիցս առաւել խիստ են վարւում և որ նոքա այդպէս վարուելով միայն իւր (սանիկի) բարին ի նկատի ունին: Եթէ սանիկներէց մէկն իւր վարմունքի համար արդարացի պատիժ է ստացել, ուսուցիչը չպէտք է ծուռ աչքով նայէ նորան, այլ ապացուցէ գործով, որ թէ և պատժեց, սակայն այսուամենայնիւ կրկին նորա բարեկամը և ցաւակիցն է: Սակայն անհաստատների հետ խօսելու ժամանակ չպէտք է մոռանալ որոշեալ սահմանը, որպէս զի սանիկներից մէկը միւսներից շնկատուի իբր ուսուցչին ամենից առաւել սիրելի. ընդհակառակը, որքան կարելի է, պէտք է հասկացնել տալ, որ նոքա բոլորն ևս հաւասար կերպիւ են սիրւում ուսուցչից: Խօսակցութեան նիւթն և ձևը պէտք է յարմարուի սանիկի անհատականութեան և հասունութեան աստիճանին: Իւրաքանչիւր աշակերտի անհատականութիւնն ունի իւր առանձնայատկութիւնները: Սակայն հարկ չկայ որ անպատճառ խօսակցու-

թիւնը միշտ ծանր բնաւորութիւն ունենայ. ուսուցիչը կարող է այս կամ այն սանիկի եղբօր, ընկերոջ, ծնողաց և այլն մասին հարցնել, իւր կեանքից պատմել, աւարտած և սանիկներին ծանօթ աշակերտների մասին խօսել և այլն:

բ. Ուղեւորութեան ժամանակ ուսուցիչը պէտք է զգուշանայ դասատուութիւն անելուց (մի որեւէ մասնագիտական առարկայից):

Գիտողութիւնները պէտք է անուին բնութեան մէջ տեղն ի տեղը. սակայն դոցա բացատրութիւնը պէտք է լինի ուսումնարանում, ուսուցման ժամանակ: Առաւելապէս այն պէտք է դիտուի և զննուի, ինչ որ կարելի է դասատուն բերել. դիտածի առանձին հետազոտութիւնը, օրին. համար մի բոյսի անդամահատութիւնը, կարելի է թոյլ տալ միմիայն բացառական դիպուածներում:

գ. Ուսուցիչը թող անձամբ մասնակցէ սանիկների խաղին, բայց ոչ իբր ուսուցիչ կամ մեծ, այլ իբր ընկեր. թող միշտ ինքը չ'որոշէ խաղի յաղթանակը, այլ թոյլ տայ սանիկներին այդ անել. ինքն ևս աշխատէ նոցա նման, որպէս զի չը յաղթուի խաղի ժամանակ, և այլն. միով բանիւ, թող ուսուցիչն այդ ժամանակ նկատուի սանիկներից՝ իբր իւրեանց ընկեր և ինքն՝ ուսուցիչն ևս իրեն նկատէ իբրեւ մի մանուկ, թող

սիշէ իւր մանկական հասակն և այդ հասակին յատուկ անմեղ զուարճութիւնը: Եւ որչափ որ նա արտաքուստ մօտենայ սանիկներին, այնչափ ևս ի ներքուստ կը մերձենայ նոցա:

Իւրաքանչիւր մանկան կեանքն է բնութեան մի կենդանի հոգեբանական գործողութիւնը. խաղի ժամանակն է յերևան գալիս բնութիւնն իւր իսկական գոյնով:

Թէ ո՞րպիսի խաղեր նպատակայարմար են ուղեւորութեանց ժամանակ՝ այդ արդէն մեր խնդրի սահմանից դուրս է և մենք թողնում ենք իւրաքանչիւր ուսուցչին որոշելու և նայելով տեղական հանգամանքներին՝ սովորական խաղերից լաւագոյններն ընտրելու:

Գ. Երգեցողութիւնն ևս նպաստում է սանիկների ոգեկան թարմութեան ու զուարճութեան. այդ պատճառաւ և ուղեւորութեան ժամանակ պէտք է այդ ևս տեղի ունենայ. քայլելու ժամանակ զանազան քայլերգեր (մարշեր), հանգստանալու ժամանակ՝ ընտիր երգեր պէտք է խմբովին երգուին մասնակցութեամբ ուսուցչի: Այն դիպուածներում, երբ սանիկներն սկսում են արդէն իւրեանց թարմութիւնը կորցնել, օրինակի համար երկար քայլելուց, ծարաւից (ուր ջուր չկայ) և այլն, պէտք է երգուին առանձնապէս զուարճութիւն պատճառող և ծիծաղ յարուցա-

նող երգեր. բայց պէտք է զգուշանալ մի որևէ գուեհիկ և անպատշաճ բառեր պարունակող երգ երգելուց: Լաւ կլինի եթէ սանիկներից ոմանք առջուց սովորեն թեթեւ գործիքների վրայ նուագել. օրինակի համար փող, սրինգ, շուփ, թմբուկ եւ այլն, եւ ուղեւորութեան ժամանակ մի երաժշտական խումբ կազմեն: Երբ քաղաքների և գիւղերի միջով անցնելիս այդ մանկական երաժշտական խմբի ներդաշնակ ձայները՝ թափանցելով հեռաւոր փողոցների ու տների մէջ, նոցա բնակիչներին, նա մանաւանդ փոքրիկ մանուկներին, դէպ իրանց են գրաւում, և հետաքրքրուողներով շրջապատում, սանիկները մի անպատում ուրախութիւն են զգում:

Եւ մի՞թէ ճշմարիտ չէ, երբ մանկավարժութեան հայր Պետալոցցին բացազանչում է իւր անզուգական և մարդկային ամենալսեմ զգացումներով լի «Գերտրուդ և Լինհարդ»-ի մէջ. ի՞նչ կայ քաղցր քան մանկանց ուրախութիւնը, և ի՞նչ մաքուր քան մանկանց բարութիւնը. (III գլ. 43):

Թող երաժշտական գործիքներն որքան կարելի է հասարակ և արժան լինեն, վնաս չկայ, հասարակ գործիքներից ևս կարելի է ներդաշնակ ձայներ լսել—հասարակ թեթեւայ շուփն և փայտեայ սրինգը ուղեւորներ չարժեն, այլ միայն կոպէկներ: —Եթէ երաժշտական խումբ կազ-

մելու համար արգելքներ չատ կան, այն ժամանակ գոնէ կարեւոր է մի երկու փող ունենալ ուղեորութեանց միջոցին, որպէս զի կարելի լինի օրինակի համար անտառում ցրուած սանիկներին կարեւոր դէպքում շուտով միատեղ հաւաքել, առաւօտեան փիասին արթնանալու համար հնչեցնել, նոյնպէս և յետ մնացած սանիկներին ուղիղ ճանապարհից չ'ընդունելու համար և այլն գործ դնել: Եւ սաներն իրարից ուրախութեամբ սովորում են թեթեւ և դիւրին երաժշտական գործիքի վրայ նուագել, քան թէ տարիներով չոր ու ցամաք ձայնագիրները (նօտաներ) երգել...:

Բ. Ուղեւորութիւնը պէտք է նախապատրաստուած լինի:

1) Ամենից առաջ պէտք է կազմուի ճանապարհորդութեան նախագիծը կամ յատակագիծը (մարշըրութը) և ուսուցչի կողմից լաւ ուսումնասիրուի, որպէս զի ուղեորութեան ժամանակ սխալմունքներ չպատահին և ուղիղ ճանապարհից չ'ընդունին: Ուղեւորութիւնից մի երկու շաբաթ առաջ այդ յատակագիծը պէտք է հաղորդուի սանիկների ծնողաց, որպէս զի նոքա իրանց համաձայնութիւնը յայտնեն իրանց մանկանց ուղեւորութեանը մասնակցելու վերաբերմամբ. գուցէ ծնողներից շատերը վարանին իրանց որդոց թոյլ տալ մասնակցելու ճանապարհորդութեան, այդպիսին-

րին պէտք է համոզել, որ ոչինչ փեւս չի հասնի իրանց որդոց բացի օգուտից.

2) Ուղեւորութեան յատակագիծը կազմելիս և գլխաւոր կէտերն որոշելիս պէտք է ի նկատի ունենալ. բնութեան գեղեցկութիւնն և հրաշալիքները, նշանաւոր պատմական յիշատակարաններ, հետաքրքիր և տեսութեան արժանի ճարտարապետական շինութիւններ, արդիւնաբերութեան նշանաւոր գործարաններ, հանքեր և այլն եթէ կան շրջակայքում:

Յատակագծի վրայ պէտք է որոշուած լինի իւրաքանչիւր օրն առանձնապէս թէ որտեղից — որտեղ պէտք է քայլել, որտեղ հանգստանալ, որտեղ կառք նստել, որտեղ ճաշել և վերջապէս գիշերուայ օթեանը: Օթեանելու կամ գիշերելու տեղը պէտք է արդէն առաջուց պատրաստուած լինի. նոյնպէս և ընթրիքը (աւելի լաւ է ասել ճաշը, որովհետեւ ուղեւորութեան ժամանակ ճաշը տեղի է ունենում երեկոյեան, այնտեղ, ուր որ պէտք է գիշերել). այդ կատարուում է նամակագրութեամբ: Բայց առաւել լաւ կ'լինի եթէ հրաւիրուին տեղական ուսուցիչները կամ այլ ծանօթ անձինք, որոնց սրտին դաստիարակութեան գործը մօտիկ է, յանձն առնել այդ նախապատրաստութիւններն և մինչև անգամ, իւրաքանչիւրն իւր շրջանում, ուղեցոյցի պաշտօնը:

Մեզանում այդպիսի անձանց կարևորութիւնն առաւել զգալի կը լինի քան Եւրոպայում, որովհետեւ մեր գիւղերում հիւրանոցներ չկան, որոց հետ կարելի լինէր ուղղակի պայմանաւորուել, և չկան նոյնպէս ուղեցոյց գրքեր և նկարներ: (Ուղեւորութեան ժամանակ պէտք է գիշերել գլխաւորապէս գիւղերում, թէ պարզութեան և թէ արժանութեան պատճառաւ):

3) Պէտք է աշխատել, որքան կարելի է, որ չքաւոր սանիկներն ևս կարողանան մասնակցել ուղևորութեան նոցանից ուղևորութեան համար կարևոր ծախքը չըպահանջելով, իսկ որպէսզի ուղևորութեան ծախքերը ծածկուին, թող ուսուցիչը միջոցներ գործ դնէ կարևոր նիւթականը ձեռք բերելու. թող նա առանց բաշտելու կամ ամաչելու դիմէ այս կամ այն բարերար անձին կամ քաղաքի հասարակութեան իւրեան օգնելու. նպատակը սուրբ է. միշտ կգտնուին այնպիսի անձինք, որոնք միջոց կտան չքաւոր սանիկներին իւրեանց ընկերներից յետ չմնալու և դաստիարակութեան նպատող այդ նշանաւոր գործակցից չ'զրկուելու:

4) Ուղևորութիւնից առաջ, ուսուցման ժամանակ, պէտք է սանիկներին նախապատրաստել ճանապարհին պատահող այն ամենի համար, որ պէտք է դիտուի և ապագայում ուսուցման հետ

կապակցուի, նոյն իսկ սանիկները պէտք է ուսուցչի օգնութեամբ նկարեն ուղևորութեան յատակագիծը — ուղին, գետերը, լեռները, քաղաքները, պատմական յիշատակարաններն և գիշերելու օթեանը:

Սանիկները պէտք է ունենան բացի իւրեանց նկարած քարտեզից և մի այլ տպածը, եթէ կայ. նոյնպէս մի մի յիշատակարան և մատիտ, որպէս զի իւրեանց տեսածն ու լսածը հանգստանալու ժամանակ գրեն՝ մոռացութեան չտալու համար և ապագայում այդ նկատողութիւններից շարադրութիւններ կազմեն: Ապահով լինելու համար, որ այս նիւթական պէտքերը սանիկները հոգացել են և նախապատրաստուել, ուղևորութիւնից մի օր առաջ պէտք է կազմ ու պատրաստ ներկայանան ուսուցչին և ցոյց տան նորան. այսպիսով կվերջանայ դպրոցական ճանապարհորդութեան նախապատրաստութիւնը:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ամենից առաջ ինքն ուսուցիչը պէտք է նախապատրաստուի իւրաքանչիւր ճիւղի համար. սկզբնորում թէև սա բաւական դժուարութիւններ կը պատճառէ, բայց հետզհետէ կ'անհետանան բոլոր արգելքները: Բայց չէ՞ որ ամենից առաւել ուսուցիչը պէտք է բաւականութիւն զգայ, այն ուսուցիչը, որ ըստ արժանւոյն է կրում այդ անու-

նը, որ իւր անձը նուիրել է մանկանց, նոցանից մարդկութեան համար արժանաւոր և բարոյական անդամներ պատրաստելու, որին իւրաքանչիւր սանիկի զուարթ դէմքն և գոհութեամբ լի աչերն ոգեկան զուարճութիւն է պատճառում, այո՛, այդպիսի ուսուցիչն ամենից առաւել կ'օգտուի դպ. ճանապարհորդութիւնից:

5) Սանիկները պէտք է նախապատրաստուին նաև ուղևորութեան ժամանակ իւրեանց բռնելիք դիրքի համար. նոքա պէտք է գիտենան ուղևորութեան ժամանակ լինել՝ քչով բաւականացող, հնազանդ, համբերող, ուրախ: Եթէ ուղևորութեանը մասնակցում են մի քանի ուսուցիչներ, սանիկները պէտք է բաժանուին մի քանի մասերի և իւրաքանչիւր բաժանմունքը յանձնուի մի ուսուցչի. իւրաքանչիւր բաժանմունքը պէտք է ունենայ նաև մի վերակացու, նոյն իսկ սանիկներից, առաւել կարգապահութեան համար: Լաւ կըլինի եթէ սանիկներն ուղևորութեան ժամանակ միատեսակ և հասարակ հագուստ ունենան, իսկ եթէ այդ կարելի չէ, գոնէ գլխարկները կամ վերելի հագուստը պէտք է միատեսակ լինի. թէ սանիկները և թէ ուսուցիչները պէտք է ունենան մի մի ձեռնափայտ, հասարակ քսակ՝ հացի համար և մէջքի վրայ կրելու ճանապարհորդական պայուսակ. (սանիկները կարող են վերցնել

իւրեանց նոյն տեսակ դպրոցական պայուսակը): Այդ պայուսակի մէջ պէտք է լինեն մի ձեռք հագուստ, մի քանի զոյգ գուլպաներ, մի քանի թաշկինակ, մի խոզանակ, (գոնէ իւրաքանչիւր բաժանմունք մի հատ) մի գրչահատ և այլ կարևոր իրեղէններ:

Սանիկներից մէկը պէտք է կրէ ուղևորութեան դեղատունը, բաղկացած առձեռն և մի որևէ գիպուածի համար կարևոր դեղորայքից. նոյնպէս մի ջերմաչափ, կողմնացոյց և եթէ կարելի է ճանապարհորդական խտաչափ (բարոմետր): Եթէ միայն մէկ ուսուցիչ է մասնակցում ճանապարհորդութեանը, կարելի է՝ ուղևորութեան հաշուապահութիւնը յանձնել աւագ սանիկներից մէկին:

Գ. Ուղևորութեան ժամանակ կարելու է խիստ կարգապահութիւն:

1) Սանիկների խումբը միայն քաղաքների և գիւղերի միջով անցնելիս պէտք է զինուորական կարգ պահպանէ, իսկ յայնուհետև պէտք է թոյլ տալ նորան ազատ յառաջ ընթանալու, ազատ դիտելու և ազատակամ իրանց ցանկացած շրջանները կամ խմբերը կազմելու, մի որոշ տարածութիւն միմեանցից հեռու մնալու, եթէ մի քանի ուսուցիչներ են մասնակցում ուղևորութեան: Սակայն պէտք է զգուշանալ, որ շատ չհեռանան մի-

մեանցից և իրար կորցնեն՝ մանաւանդ խաչաձև կամ այլ մի քանի ուղղութիւն ունեցող շաւիղներն մօտ. այդպիսի դէպքերում ամենից յարմարն է սպասել յետ մնացողներին կամ սանիկներին մի խումբ թողնել՝ որպէս զի յետ մնացողները չմոլորուեն ու այլ շաւղով ընթանան:

2) Ուղևորութեան ժամանակ ուսուցիչը պէտք է սանիկներին հաղորդէ կարգապահութեան ամենաանհրաժեշտ կանոններն ոչ թէ իբրև հրաման, այլ հասկացնելով նոցա դորա անհրաժեշտութիւնը. «հարցրու ինքդ քեզ, եթէ իւրաքանչիւրը ձեզանից—50—60 սանիկներից—միւնոյնը կամենար անել, ինչ որ դու ցանկանում ես, արդեօք կարգապահութիւնը չէ՞ր խանգարուի», այս ամենազլխաւոր օրէնքն է, որ իւրաքանչիւր սանիկ միշտ ի նկատի պէտք է ունենայ:

Երբ սանիկները սովորեն՝ անձնական ազատութեան մի որոշ չափը և դորա սահմանափակման կարևորութիւնը յարգել, այդ առաւել արժէք ունի, քան թէ մի շարք կանոնների բերանացի սովորելը: Ուսուցիչն երբէք աչքից չը պէտք է կորցնէ սանիկներին. հսկողութիւնն անհրաժեշտ է, առանց դորա չի կարող և հակառակ կողմից անպայման հնազանդութիւն տեղի ունենալ. եթէ ուսուցիչը միայնակ է առաւել յարմար է, որ նա ամենից վերջը հետևէ սանիկներ-

րին, միշտ առիթ որոնելով այս կամ այն սանիկի հետ խօսակցելու, բայց միևնոյն ժամանակ չը պէտք է բոլորովին այդ խօսակցութեան մէջ ընկըղմուի, այլ ստէպ ստէպ իւր հայեացքը խմբին ուղղէ, բայց այնպէս, որ սանիկները չնկատեն թէ նա դիտմամբ է այդ անուամ: Սանիկները պէտք է գիտենան որ ուսուցիչը հսկում է, բայց միևնոյն ժամանակ չպէտք է այն զգացմունքն ունենան՝ թէ նա հաւատ չէ ընծայում իրանց: Երբ ցրուած խումբը մօտենում է մի քաղաքի կամ գիւղի և կրկին ընդունում է զինուորական կարգը, պէտք է համարել սանիկներին կամ թէ իւրաքանչիւր խմբապետից հարցնել՝ թէ արդեօք ոչ ոք չէ՞ պակասում, միևնոյն ձևով պէտք է վարուել իջևանը թողնելիս:

Ուղևորութեան ժամանակ պէտք է միշտ այնպէս հաշուել և վարուել, որ խումբն անպատճառ գիշերը հասնելուց առաջ, լուսով իջևանատեղին հասնէ: Գիշերով չպէտք է ճանապարհորդել, բացի ճանապ. վերջին օրից, տուն հասնելիս. այդ ևս կառքով կամ երկաթուղով է լինում:

3) Ուղևորութեան ժամանակ պէտք է ամենայն ինչ ընդհանրական լինի. քայլելու ժամանակ պէտք է բոլորը միասին քայլեն, միասին հանգստանան, ուղեկիցներից ոչ մէկն առանց ա-

ռանձին իրաւունք խնդրելու, չպէտք է հեռանայ ընկերութիւնից. ոչ ոք իրաւունք չպէտք է համարէ ըստ իւր հաճոյից վարուելու, օրինակի համար ընդհանուրից դուրս մի բան ուտելու կամ խմելու:

Նախաճաշն և ճաշը (կէսօրին) թէ սանիկներն և թէ ուսուցիչները պէտք է վայելեն, և թէ եղանակը ներում է, ազատ բնութեան մէջ. մի գեղեցիկ տեսարան ներկայացնող տեղում, կամ կանաչազարդ և ստուերախիտ անտառներում և ծաղկաւէտ մարգագետնի վրայ, կարկաչահոս և վճիտ աղբիւրի կամ առուակի ափին. ճաշը վայելելուց յետոյ, որ միշտ բաղկացած է լինում սառը կերակուրներից. (հաց և պանիր, խաշած միս, ձու, վարունգ, ձմերուկ և այլն) սանիկները կարգով, իւրաքանչիւր բաժանմունքն առանձին, իւրեանց հետ ունեցած թիթեղեայ բաժակներով կուշտ կերպիւ ճաշակում են սառնարիւն աղբիւրի կենդանացուցիչ ըմպելին և զուարթանում: Եւ մի փոքր ժամանակ հանգստանալուց յետոյ, նորոգած ուժով և արիւցած ոգով, երգի և երաժշտութեան մասնակցութեամբ շարունակում են իւրեանց ճանապարհը, մինչև որ երեկոյեան դէմ հասնեն արդէն որոշած իջնատեղին, հարկաւ ճանապարհին պէտք եղած դիտողութիւններն և խօսակցութիւններն ըստ կարգին շարունակե-

լով: Իջնատեղին հասնելուն պէս պէտք է պատարաստուի սեղանը, ուր և սանիկները (նոյնպէս և ուսուցիչները) ընդունում են ընթրիք, որ կազմում է իսկապէս օրուայ ճաշը, այդ պատճառաւ և տրւում է արգանակ (սուպ) և տաք կերակուր: Եթէ ուղևորութեան գանձարանը ներում է, կարելի է այս ընթրիքի ժամանակ մի մի բաժակ (ոչ աւելի) ջրախառն գինով սանիկներին լաւ տրամադրութեան մէջ դնել—սակայն սխալ չը հասկացուի. կամենում ենք ասել, որ այդ մանկանց զուարճութիւն կը պատճառէ, մանաւանդ այնպիսիներին, որոնք աղքատ ընտանեաց զաւակներ լինելով, տարին մի քանի անգամ հազիւ ճաշակում են այդ ըմպելին—և նոցա մի փոքր սպառած ուժերը նորից կազդուրել: Ընթրիքը վերջացնելուց յետոյ, սանիկները մի փոքր միմեանց հետ խօսակցելուց յետոյ հանում են գրպանից իւրեանց յիշատակարաններն և գրի անցնում, ուսուցչի օգնութեամբ, օրուայ դիտողութիւնները, ուղևորութեան ընթացքը և իւրեանց տպաւորութիւնները համառօտ կերպիւ, իբրև նկատողութիւններ: Նկատողութիւնները կարելի է և օրն երկու անգամ գրի անցնել, մէկ ճաշուայ և երկրորդ՝ երեկոյեան հանգստութեան ժամանակ:

Այդ ևս աւարտելուց յետոյ ուղեկիցները խմբովին գնում են ննջարան, ուր արդէն պատ-

րաստուած անկողինները, փռուած ամբողջ սենեկի յատակի վրայ, սպասում են նոցա. երեկոյեան աղօթքը խմբովին երգելուց յետոյ, սանիկները կարգով մօտենում են ուսուցիչներին (կամ ուսուցչին) ձեռք տալիս և բարի գիշեր ցանկանում նոցա, և յետոյ անկողին մտնում: Եւ որովհետեւ ամենուրեք կարելի չէ այդքան քանակութեամբ անկողիններ գտնել, նպատակայարմար է խոտ կամ ծղնոտ փռել բաւական քանակութեամբ յատակի վրայ, սաւանով ծածկել և մի մի վերմակով բաւականանալ:

Առ հաւարակ ուղևորութեան ժամանակ պէտք է հասարակ կեանք վարել. Երեկոյեան ամենաուշը ժամի 9-ին պէտք է սաներն անկողին մտնեն, որպէս զի առաւօտեան ժամի 5-ին հընչեցրած փողի ձայնը բոլորին միանուագ ոտքի կանգնեցնէ: Արթնանալուց և հագնուելուց անմիջապէս յետոյ, սաներն սկսում են իրանց ձեռքով իրանց կօշիկները մաքրել—և ապա լուացուիլ: Այդ ևս վերջանալուց յետոյ թէյ են խմում—եթէ ուղևորութեան գանձարանը ներում է կաթին պէտք է առաւելութիւն տալ—մի փոքր հաց ու պանիր ճաշակում և ապա նորից ճանապարհ ընկնում: Միշտ ընդհանուր կանոններին հետեւելու կարևորութիւնը գուցէ ժամանակ առ ժամանակ անհատներից ոմանց խիստ թուայ—

օրինակ եթէ սաներից մէկը ծարաւ է զգում, բայց նրան թոյլ չէ տրուում խմել յոգնածութեան պատճառով—, բայց փաս չէ. այդպիսով այդ անհատներն առիթ կունենան համբերութիւն ասած բանը հասկանալու և սովորելու. սաներից շատերը սովոր չեն երկար բայելու և շուտով յոգնում են, բայց ընկերներից յետ չմնալու համար աշխատում են յառաջ ընթանալ և զրուցատրութեամբ ու երգեցողութեամբ զբաղուելով՝ մոռանում են իրանց յոգնածութիւնը և այլն:

4) Սանիկների մէջ կրօնական զգացմունքը վառ պահելու համար, որ անհրաժեշտ է դաստիարակութեան համար, ուղևորութեան ժամանակ պէտք է կարգացունին աղօթքներ. առաւօտեան աղօթքն աւելի լաւ է իջևանատեղին թողնելուց յետոյ, ազատ բնութեան մէջ երգել—խորին ու անջինջ տպաւորութիւն է թողնում, երբ առաւօտեան, հրաշալի բնութեան մէջ, թրուհնոց ծլվլոցի հետ նոր ծագող արևի ճառագայթների դիմացը մեր անթեւ թռչուններն էլ մեղմ ձայնով հնչեցնում են «Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեան» և երբ այդ հընչիւնների ձայնը չըջակայ լեռների ու անտառների դիպչելով՝ կրկին արձագանք է տալիս մանկանց սրտի մէջ. այդ, այդ ժամանակ սանիկների սրտի բաբախումն արագանում է այն կրօնական

և սուրբ զգացմունքից, որ թանկագին է մեզ համար — : Պատշաճ կլինի նոյնպէս վանքերի, եկեղեցիների աւերակներ դիտելիս յարմար եկեղեցական երգեր հնչեցնել խմբովին — մեծ աղբեցութիւն է թողել մեր սաների վրայ, երբ երբեմն նշանաւոր եկեղեցականների դամբարանների վրայ երգել ենք տուել նոյն իսկ այդ դամբարանում հանգչող անձի յօրինած շարականը կամ մեղեդին — :

5) Դարձեալ կարգապահութեան նպատակով սաներից ոչ մէկն իր գրպանում դրամ չը պէտք է ունենայ. դրանցից իւրաքանչիւրն իր ծնողներից ստացած դրամը ուղեւորութեան առաջին օրը յանձնում է ուսուցչին, որ նշանակում է իւրաքանչիւրի ստացածն իր յիշատակարանում: Իսկ երբ ուղեւորները մտնում են մի օրէէ բաղաք և ցանկանում են մի բան գնել՝ ուսուցիչը խմբերի հետ մտնում է խանութ և վճարում սաների ցանկացած իրեղէնների համար: Մեծ մասամբ սաները գնում են ընծաներ իրանց ծնողների և քոյր ու եղբայրների համար, որպէս զի իրանց վայելած ուրախութեանը նրանց էլ մասնակից անեն իրանց փոքրիկ ընծայաբերութեամբ:

Դ. Ուղեւորութեան ժամանակ ուսուցչի հոգացողութիւնը՝ սանիկներին ամենայն վրտանգից հեռու պահել և հոգալ նոցա առող-

ջութեան ապահովութեան համար, այնքան որոշ և ինքն ըստ ինքեան հասկանալի խնդիր է, որ երկար բացատրութեան կարօտ չէ: Յիշենք միայն մի քանի ընդհանուր կէտեր համառօտ կերպիւ, որոց վրայ ուսուցիչը պարտաւոր է ուշադրութիւն դարձնել:

1) Պէտք է ունենալ յարմար հագուստ՝ նայելով տարուայ եղանակին:

2) Ուտելիքը պէտք է չափաւոր, ոչ շատ և ոչ քիչ լինի:

3) Պէտք է զգուշանալ սանիկներին չափից դուրս յոգնեցնելուց. թէև մանուկները քայլում են սիրով և միշտ, տանն ևս, օրուայ մեծ մասը ոտքի վրայ են անցկանում խաղալով և վազելով, սակայն որովհետև ման գալու ժամանակ անդադար միևնոյն մկանուններն են աշխատում, այդ պատճառաւ և սանիկներն առաւել շուտով են յոգնում քան խաղալու միջոցին:

4) Հանգստանալու վայրերը պէտք է խնամքով ընտրել. առաւել լաւ է քամուց պաշտպանուած և արևոտ տեղ ընտրել, որովհետև սանիկները քայլելուց տաքացած լինելով, չը պէտք է իսկոյն զով և խոնաւ տեղեր ապաւինեն, որ կարող է ցրտութիւն և հիւանդութիւն պատճառել:

Զանազան վտանգների առաջն առնելու համար չի կարելի որոշ կանոններ տալ, որովհետև

իւրաքանչիւր վայր ներկայացնում է ուղեւորին իրան յատուկ անյարմարութիւններ, որոց վրայ եթէ ուսուցիչն ուշադրութիւն չը դարձնէ, կարող է սանիկների համար վտանգաւոր հետեւանքներ ունենալ: Ուրեմն արդիւնաւոր դպրոցական ճանապարհորդութեան անհրաժեշտ պայմաններն են.

1. Ուղեւորութեան ժամանակ անհրաժեշտ է հոգեկան ուրախութիւնը և թարմութիւնը:

2. Ուղեւորութիւնը պէտք է ամենայն հոգատարութեամբ և խնամքով նախապատրաստուած լինի:

3. Անհրաժեշտ է խիստ կարգապահութիւն:

4. Պէտք է ամենայն կերպ հոգացուի, որ սանիկների առողջութիւնը վտանգի չ'ենթարկուի:

Բացի այս չորս հանգամանքներից, որոնք պէտք է ծառայեն դպրոցական ճանապ. յաջող ելք ունենալուն, կան և մի քանի այլ հարցեր, որոնք սակայն իրանց որոշումը պէտք է ստանան սանիկներին առաջնորդող ուսուցչից և կախումն ունին տեղական հանգամանքներից, օրինակ՝ ուղեւորութեան ժամանակն և այցելելու վայրերը: Ամենից յարմար ժամանակը կարող է լինել աւառութեան արձակուրդը, ուր որ սաստիկ շոգ չէ. իսկ շոգ տեղերում առաւել յարմար է Զատիկ արձակուրդին, տօներից անմիջապէս յետոյ: Վեր-

ջինս մի առաւելութիւն ևս ունի, այն է բնութեան գեղեցկութիւնը, որ այդ ժամանակ տիրում է ամենուրեք: Եթէ միայն բնութիւնն ի նկատի ունենայինք, հարկաւ ամենից յարմարը մայիս ամիսը կը լինէր. սակայն այդ ամսին մեր դպրոցներն երկար արձակուրդ չունին: Այդ ժամանակ տեղի պէտք է ունենան դպրոցական շրջագայութիւնները կամ զբօսանքները:

Իսկ թէ դպ. ուղեւորութիւնը դէպի ո՞ր կողմը պէտք է լինի մեզանում, այդ հարցման ևս դժուար չէ պատասխանել. փափաք Աստուծոյ, մեր երկիրը (թէ Հայաստանը և թէ Վովկասը) ոչ թէ յետ չի մնում եւրոպական երկիրներից, այլ գերազանցում է՝ թէ բնութեան գեղեցկութեամբ և թէ պատմական յիշատակարանների և քայքայեալ մնացորդների քանակութեամբ. պակասում է միայն գործարանական արդիւնաբերութեանց կենդրոններ, սակայն այսուամենայնիւ տեղտեղ դոքա ևս կգտնուեն: Որ երկաթուղիներ չունինք ամենայն տեղ, այդ ևս մեծ կորուստ չէ, քանի ուր մեր նպատակն առաւել ոտքով ճանապարհորդելն է, իսկ հարկ եղած ժամանակը սայլեր հօ ունինք:

Մի՞թէ դպ. ճանապ. նպատակին յարմար վայրեր չեն պատմական և հայրենագիտական յիշատակարանների վերաբերութեամբ՝ Միւնխեն եր-

կիրը, Սանահին և Հաղպատ վանքերն իրանց շըր-
ջակայ խիտ անտառներով, Էջմիածին սրբավայրը,
սուրբ Մեսրոպի և Սահակի գերեզմանները, ձիւ-
նագագաթ Փասիսը, պատմական Անույ աւերակ-
ները, դուրանից ոչ հեռու գտանուած նոյնպէս
պատմական Ղարսն և Ալագեազը՝ վերջին ոռոս-
թրբական պատերազմի վայրը, Սև ծովը, Սևա-
նայ լիճն և այլ բազում տեղեր: Մի՞թէ Տաճ-
կահայնստանում պակասում են պատմական յի-
շատակարաններ և հայ սանիկի սրտին մօտիկ սըր-
բավայրեր:

Բացի այն յիշատակարաններից, որոնք կա-
պակցութիւն ունին մեր աղգային պատմութեան
հետ, թէ մեր հայրենիքը և թէ ծննդավայր Աով-
կասը հարուստ են նաև ընդհանուր աշխարհի
պատմութեան վերաբերեալ յիշատակարաններով և
վայրերով: որոնք թէև գիտնականապէս հաստա-
տուած չեն, սակայն ժողովուրդների աւանդութիւ-
նը փրկելով դարերի հոսանքներից հասցրել է
մեզ: Յիշենք այստեղ միայն երկ-երկու օրինակ
Յունաց պատմութիւնից և Ս. Գրքից: Սանիկը
սովորում է Յունաց պատմութիւնից Արգոնաւոր-
ների ոսկէ գեղմ յափշտակելու առասպելական
պատմութիւնը, որ Թեսալացի Նազոնն իւր ժա-
մանակի հռչակաւոր հերոսների հետ արքայա-
դուստր և կախարդուհի Մէդէաի օգնութեամբ

իրագործեց: Յայտնի է նոյնպէս, որ այդ առաս-
պելի մէջ յիշուած «արեւաերկիրը» համարուում է
ծովեզրեայ Քոլխիսն և այս՝ այժմեան Փոթին: Ե-
թէ յոյն հերոսների վառ երեւակայութիւնն իրանց
անծանօթ և անսովոր դժուարութեանց յաղթա-
նակը հեռու արեւելքում և այդ այն ժամանա-
կուայ համար մեծ նշանակութիւն ունեցող և
երկար ծովային ճանապարհորդութիւնը պատկեր-
են ոսկէ գեղմի ձեռք բերելով, ոչ պակաս վար-
վուուն երեւակայութեամբ կ'ներկայացնեն իրանց
աչաց առջև այդ առասպելն և մեր սանիկները,
երբ առաջին անգամ կանգնած այդ պատմական
հողի վրայ, դիտեն Սև ծովի անվերջ մութ կա-
պուտակ զանգուածի միանուագ տատանումն և
ծովափին շարուած մեծ և փոքր շոգենտների
կայմերը. կամ աւելի ևս երբ նոքա դիտեն կա-
տաղած ծովի փրփրալից սպիտակագոյն ալիքնե-
րի կուտակումն ու գոչիւնն և դէպ եզրը մօտե-
ցող շոգենաւի աջ և ձախ տատանման շարժո-
ղութիւնը:

Թողնենք Քոլխիսն իւր ոսկէ գեղմով և նա-
ւենք Պոնտոս Նաքսինոսի դէպի մի այլ ծովեզրեայ
քաղաք-դէպի մի փոքր հարաւ գտնուող Տրապի-
զոնը, սակայն որպէս զի շատ չ'երկարի, թող-
նենք այդ վաճառաշէն քաղաքն և ուղևորուենք
հարաւ տանող ճանապարհով դէպի «Ջւէս-

լիք» և եթէ «Քոլատ դաղ» կոչուած լեռան վերայով անցնենք լեռան միւս կողմը, կ'հասնենք Եփրատի ակունքներին: Թողնենք նոյնպէս «Զւէս-լիք» իւր ընկղենեաց փառահեղ անտառներով և «Քօշ - օգլանն» իւր հրաշագեղ շրջակայքով և բարձրանալով Քոլատ դաղի Փեշերից՝ կանգ առնենք բարձր կրճի վրայ և ուղղենք մեր հայեացքը մեր շուրջը դիտելու. մեր առաջ, դէպ արեւելք, կանգնած է Քոլատ դաղի բարձրաբերձ գագաթը, դորանից մի փոքր հիւսիս, մի երկրորդ լեռան՝ Աղիֆլի դաղ. դէպի հարաւ, արեւմուտք և հիւսիս տարածուած են այս և այն ուղղուած թեամբ հովիտներ և ձորեր, եթէ յետ նայենք դէպի հիւսիս մեր եկած ճանապարհը դիտելու, թէեւ չենք կարող քաղաքը տեսնել, որ ծածկուած է սարի տակ, սակայն այդ սարի ետեւում մեր առջաց առջև կ'ներկայանայ մի կապուտակ տարածութիւն և ահա սանիկները կ'գուլեն՝ «Ծովը — ծովը». չբաւականանա՞նք մի հայեացք ձգելով, այլ մի քանի անգամ դիտենք ուշադրութեամբ... Սակայն բաւական է, ժամանակ է յայտնել սանիկներին մեր կանգնած տեղի պատմական նշանակութիւնը և ահա հինգ րոպէից յետոյ արդէն սանիկների սրտի բաբախումն արագանում է և շատերի աչերին երևում են արտասուքի կաթիլներ. որ մանուկը, կամ երիտասարդը չի զգացուի, երբ

համառօտ և սրտաշարժ խօսքերով նկարագրես նորան, որ 23 դար առաջ Յունաց փիլիսոփայ Սոկրատեսի աշակերտ՝ պատմաբան և զօրավար Բսէնօֆոնը 10,000 զօրով ձմեռային սառնամանեաց ժամանակ ամբողջ օրեր և շաբաթներ քայլելով դժուարանցանելի, օտար, լեռնոտ և թշնամիներով պատած երկրի միջով և համարեա յուսահատ դրութեան մէջ՝ թէ արդեօք կարժանանան իրանց սիրելի հայրենիքը նորից տեսնելու, հասնում են այս կէտին, *) և ինչպէս առաջին վայրկեանում հեռու կապուտակ շերտը տեսնելով մեր սանիկները «ծո՛վը», «ծո՛վը» բացագանչեցին, նոյնպէս և Քսէնոփոնի զօրաց առաջին և ուրախ բացագանչութիւնն էր. «Թալատայ»,

*) Թէեւ Քսէնօֆոնի լեզուաբան բացատրողները մի այլ ճանապարհով են նրան Տրապիզօն տանում, այսինքն արեւելքից Բին-Գեօլ դաղի, Էրզրումի շրջակայ կողմերից և յետոյ դէպի հիւսիս, Պոնտեան լեռնաշղթայի վրայով, սակայն առաջին զինուորական մասնագէտն, որ այս խընդրով զբաղուեց (Շտրեքեր) ապացուցեց, որ այդ անկարելի է. յայտնի է որ Քսէնօֆոնը ձմեռային սառնամանեաց ժամանակ անցաւ Հայաստանի բարձրավանդակի վրայով. այժմ ապացուցւում է, որ ծովեզրեայ լեռնաշղթան, երեք օրուայ ճանապարհ տարածութեամբ Տրապիզօնից, անանցանելի է ձմեռ ժամանակ:

«Թալատտայ», որ նոցա համար կնշանակէր միւս-
նոյն ժամանակ կեանք, ազատութիւն և հայրե-
նիքը տեսնելու հաստատ յոյս: Զօրաց քաջու-
թիւնը և ահագին դժուարութեան դիմադրելու
բարոյական ոյժը յաղթահարեց բնութեան ար-
գելքներին — մի գեղեցիկ օրինակ՝ սանիկների
սիրտն ու հոգին աղնուացնելու:

Բաւականանալով ընդհանուր պատմութիւ-
նից այս երկու օրինակներով, որոնցից մէկը մի-
այն առասպելական, իսկ միւսը պատմական հաս-
տատ իրողութիւն է, դիմենք այժմ Սուրբ Գրքի
յայտնած երկու աւանդութեանց, որոնք իւրա-
քանչիւրիս յայտնի են և երկուսն էլ ներկա-
յայցնում են ընդհանուր մարդկութեան սկզբնա-
ւորութեան մոմէնտները. Սուրբ Գրքի մէջ յի-
շուած դրախտի և Նոյեան տապանի գոյութիւնը
թէև գիտնականօրէն հաստատուած չէ, սակայն
դարաւոր աւանդութիւնը դորանով իւր նշանա-
կութիւնը դեռ ևս չէ կորցնում:

Մասիս կամ Արարատ լեռն այնպիսի նշա-
նակութիւն ունի մեր պատմութեան մէջ, որ ա-
ռանց «Նոյեան տապանի» ևս արժանի է մեր սա-
նիկների դիտողութեան. ուրեմն ո՞րքան առաւել
ևս երբ այդ անունը կապակցուած է նաև մի
ընդհանուր մարդկութեան վերաբերեալ երևոյթի
հետ: Ըստ Սուրբ Գրքի աւանդութեան՝ դրախտն

ևս գտնւում է Հայաստանում և նոյն իսկ Բին-
գեօլ լեռան վրայ: Յայտնի է որ Սուրբ Գրքի
մէջ յիշուած են 4 գետեր, որ բխում էին դրախ-
տից: Նոյն իսկ Բին-գեօլ (հազար լիճ) անունը
ցոյց է տալիս այս լեռան ջրի առատութիւնը. 4
գետերի ակունքներ են բխում այս դրախտա-
վայրից. դէպի հիւսիս-արևելք հոսում են Արաք-
սի ակունքները, դէպի հիւսիս-արևմուտք «Տուրա-
տու» ն, որ հիւսիսային Եփրատի ձիւղերից մէկն
է, դէպի հարաւ հոսում է հարաւային Եփրատի
ակունքներից մի երկուորեակ, որը են «Չարբուր»
և «Գեճնիւգ սու», դէպ արևմուտք վազում է
հարաւային Եփրատի կամ Մուրատ չայի մի երկ-
րորդ ձիւղը, որ է «Բինգեօլ սու», կամ «Պիրի
սու» որ կոչւում է նոյնպէս «Փիսոն»: Վերոյի-
շեալ ակունքներից երկուսն արդէն անուամբ յի-
շուած են Սուրբ Գրքում, Փրատ կամ Եփրատ *):

*) Մի Եւրոպացի գիտնական ճանապարհորդ
ասում է. «Այն տեղեկութիւնը, որ դրախտի չոր-
րորդ գետը Եփրատն է, պարզ ու որոշ կերպով
ցոյց է տալիս, որ հրէական աւանդութիւնը դրախ-
տավայրն երևակայում էր Եփրատի ակունքների
շրջակայքում. միակ լեռը, որ այդտեղ չորս գե-
տերի ակունքներ է յառաջացնում, Բին-գեօլ
դաղն է և հէնց սրա վրայ էլ գտնում ենք Պի-
զոն կամ Փիսոն անունը՝ հայկական աւանդու-
թեամբ պահպանուած. այլ ևս կասկածելի չէ,

և Փիսոն: Արդ, այսպիսի մեծ նշանակութիւն ունեցող վայրերը Հայաստանի սրտի մէջ գտնուելով մի թէ շրջակայ գաւառների ուսուցիչների պատանակութիւնը չպէտք է լինի իւրեանց սանիկներին, որոնք վաղուց արդէն գիտեն Սուրբ Գրքի ստեղծագործութեան պատմութիւնը, տանել այդ դրախտավայրերը, որ բացի պատմականից, նաև աշխարհագրական մեծ նշանակութիւն ունի: Գուցէ առարկուի թէ անկարելի է սանիկներին բարձրանալ լեռան գագաթը, այդ միւսնոյն է, թող

որ ստեղծագործութեան հեղինակն այս որոշ տեղն ի մտի ունէր, երբ դրախտի չորս գետերն էր թուում. նշանաւոր է նոյնպէս, որ մարդկութեան երկրորդ սկզբնաւորութիւնը, Նոյեան տապանի կանգ առնելը հրէական առասպելը տեղաւորում է Հայաստանում: Յայտնի երևում է, որ հրէաները հիւսիսից են դէպի Պալեստինա գաղթել և այնտեղից են բերել ստեղծագործութեան պատմութեան տեղի որոշումը: Երբ մարդ մտածում է, որ նրանք սկզբում մի թափառական հովուական ժողովուրդ էին, այսօր ևս կարելի է արդարացի համարել, որ նրանք Բին-գեօլ դաղն իբրև դրախտ ներկայացնէին. սա այսօր ևս մառ ժամանակ մի դրախտ է շրջակայ կիսաթափառականների համար, որոնք հարկաւ այլ ևս սեմիտներ չեն, այլ Քրդեր: Լեռան ջրառատութիւնը, ձիւնի հալուելուց յետոյ, բուսցնում է մի չափազանց փարթամ բուսականութիւն:»

չբարձրանան և բաւականանան միայն լեռան փեշերով կամ ստորոտով:

Երզրում մտնող իւրաքանչիւր հայ մարդ, մի թէ իբր անհրաժեշտութիւն չպէտք է համարէ բարձրանալ մօտակայ դէպի հարաւ գտնուող «Պալանթեօքէն»ը (այսինքն «Թամբ շրջող» այս անունը ստացել է երևի այդ լեռան վրայ փչող սաստիկ քամու գոյութիւնից) և հրճուի իւր առաջ տարածուած տեսարանից: Գիտողի ոտքի տակ դէպի հիւսիս տարածւում է Եզրումի դաշտավայրն և ապա «Գումլի դաղ»-ն, դոցա յետևում է հեռու հորիզոնի վրայ Պոնտեան ատամնաւոր լեռնաշղթան. դէպի հարաւ տարածւում է դիտողի հայեացքը մի ընդարձակ հովտի վրայ, իսկ հեռու հորիզոնը սահմանափակում է Բին-գեօլ դաղը. արևմուտքի կողմն երևում են լեռնագագաթներ, որոնցից փայլում են ձիւնի սպիտակ շերտեր, հարաւ-արևելքից, Վանայ-ծովի մօտից բարձրանում է «Սիփան դաղ»-ի ահագին ձիւնապատ գագաթը և վերջապէս ուղիղ արևելեան կողմը, հեռու հօրիզոնի վրայ երևան է գալիս ձիւնի մի բրգաձև զանգուած. այս մեր հուժկու Արարատ-Մասիսն է, որ իւր ալեւոր գլուխը վեհ բռնած սրտաճրմլիկ նայում է իւր զաւակաց և ողբում, որ այլ ևս չի կարող կլանել Արտաւազդի նմաններին... (Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ

քեզ տարար, ես աւերակացս ո՞րպէս թագաւորեմ):

Մեր նպատակն էր ցոյց տալ միայն մի քանի օրինակներով, որ եթէ այդ պատմական վայրերն Եւրոպայում լինէին, մեծ ու փոքր սյցելուներն թիւն ամսական հազարներից կ'անցնէր. եթէ արհեստական արձաններ չունինք՝ այդ բնական կոթողներն առաւել գերադանց արժէք ունին: Ուրեմն մեր դպրոցական ճանապարհորդութիւնների համար առատ են՝ թէ աղգայիս և թէ ընդհանուր մարդկային պատմական յիշատակարանների դիտողութիւնները: Վարեւոր է միայն սաներին նուիրուած մի սիրտ և հաստատուն կամք՝ պատահած արգելքներին դիմադրելու. ակնյայտնի է, որ արգելքներ և դժուարութիւններ յառաջ կը գան, սակայն ամենայն ինչ նոր սկսելիս դժուարութիւններն անպակաս են, բայց հետո՛հ հետէ կ'անյայտանան մի քանի փորձերից: յետոյ եթէ ճշմարիտ հաւատը լեռներ կարող է տեղափոխել բարի և հաստատուն կամքն առաւել ևս:

Աերջացնելով դպրոցական ճանապարհորդութեան մասին մեր տեսութիւնը, կրկնում ենք, որ դորա հետեւանքները շատ նպաստաւոր են դաստիարակութեան յառաջագիմութեան համար, որովհետեւ ուղեորութեան ժամանակ սանիկը սովորում է մօտիկից ճանաչել իւր հայրենիքն ու ծննդավայրը և սիրել:

Միւս կողմից սանիկը ճանաչում է իւր սեպհական ոյժը, սովորում է հասկանալով մերժել, չափաւոր վայելչութիւն զգալ, իւր ուրախութիւնը կրկնապատկել սյլոց ուրախութիւնների հետ միասին, իւր ցաւը տանել կարողանալ գիտակցաբար. ուրիշներին ցաւակցել, ընկերների հետ խաղաղութեամբ վարուել, իւր կամքն ենթարկել ընդհանուր նպատակին և այլն. նա սովորում է մինչև անգամ իւրեան զոհել իւր ընկերոջ համար, որի գրութիւնը կարօտ է օգնութեան:

Դպրոց. ճանապարհորդութեանց ժամանակ սանիկները սովորում են նոյնպէս ըմբռնել բնութեան գեղեցկութիւնն եւ դիտել բառի բուն նշանակութեամբ, եւ ոչ թէ մի հարեւանցի ակնարկ ձգելով մի առարկայի վրայ, հեռանալ. այս սովորութիւնը նորա ուսումնարանից կը փոխադրեն իւրեանց այրական հասակում, դէպ իսկական կեանքի հոսանքները և սյդ պակաս նշանակութիւն չ'ունի: Քանի բիւր մարդիկ անցնում են բաղմամբի՝ բնութեան պարգեւներով լի մարգագետնի, լեռան կամ դաշտի վրայով, ուղիղ այնպէս, ինչպէս մի մարդաշատ բաղաքի յետ ընկած և փոշոտ փողոցի միջով. կոյրի նման կոխտում են բնութեան սփռուած բիւրաւոր զարդերը, որոնցից իւրաքանչիւրն առանձին ուշադրութեան և գննութեան արժանի նիւթ է մատակարարում:

և մեր սիրտը վեհ ու աղնիւ զգացումներով լցնում:

Այն ուսուցիչը, որ մի անգամ փորձել է իւր սանիկների հետ մի քանի ժամ շրջագայել ազատ բնութեան մէջ, գիտէ թէ ի՞նչ աննկարագրելի ուրախ տրամադրութեան մէջ են գտանւում այդ ժամանակ սանիկները: Իւրաքանչիւր մանուկ արդէն ի ներքուստ ձգտում է և հակումն ունի դէպի բնութեան ծոցը. արդեօք սա միայն հետաքրքրութիւն, թէ՞ գիտենալու ձրգտումն է. կամ գուցէ մանկութիւնը նախազգում է ազատ բնութեան մէջ այն իշխողի կոչումը, որ տրուած է մարդուն երկրիս վերաբերմամբ և ապագայ իշխողը ցանկանում է արդէն առաջուց ըստ կարելոյն շատ բան տեսնել և հոգւով տիրել այն, որի վրայ պէտք է բարձրացնէ իւր մըտաւոր գայիսօնը:

Պէտք է տեսնէք մանկանց դողդոջուն այլալոյումն, երբ նշանակւում է ճանապարհորդութեան սկզբնաժամը, նոցա՝ ուրախութիւնից անբուն գիշեր անցկացնելն և առաւօտեան նշանակուած ժամանակից արդէն մի երկու ժամ առաջ ժողովուրդը, որպէս զի կարողանաք ըմբռնել դպ. ճանապարհորդութեան նշանակութիւնը:



7741

0003670

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0003670

